

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Երիտասարդ լեզվաբանների
հանրապետական IV գիտաժողովի զեկուցումներ
(Երևան, 2014 թ., հոկտեմբերի 1-2)**

Երևան
Ասողիկ
2014

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS

Young Linguists' IV Republican Conference Reports

(Yerevan, 2014, October 1-2)

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

**Доклады IV республиканской научной конференции
МОЛОДЫХ ЛИНГВИСТОВ**

(Ереван, 2014 г., 1-2 октября)

ՀՏԴ 801:06
ԳՄԴ 81
Ե 859

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Ե 859 Երիտասարդ լեզվաբանների հանրապետական IV գիտաժողովի
գեկուցումներ(Երևան, 2014 թ., հոկտեմբերի 1-2)/ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտ.- Եր.: Ստոդիկ, 2014.-128 էջ:

Խմբագրական խորհուրդ՝
բ.գ.թ. դոց. Վ. Կատվայան (նախագահ),
բ.գ.դ. Ռ. Թոխմախյան,
բ.գ.դ., պրոֆ. Գ. Խաչատրյան,
բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյան,
բ.գ.դ., պրոֆ. Լ. Հովհաննիսյան,
բ.գ.դ., պրոֆ. Լ. Հովսեփյան,
բ.գ.թ. Ն. Հովհաննիսյան,
բ.գ.թ. Ժ. Միքայելյան,
բ.գ.թ. Ն. Սարգսյան,
բ.գ.թ. Տ. Միրունյան:

ՀՏԴ 801:06
ԳՄԴ 81

ISBN 978-9939-50-275-5

© Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2014

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Աբրոյան Հերմինե , Առկայական տրոհման միջոցները արևմտահայերենում.....	5
Թաղևոսյան Հասմիկ , Աշխարհաբարի հոլովական առանձնահատկությունների դրսևորումը ուշ միջնադարի բժշկարաններում (Սսար և Բունիաթ Մերաստացիներ).....	16
Հովհաննիսյան Մերի , Լեզվի հարցերը Տերյանի հոդվածներում և նամակներում.....	30
Մկրտչյան Գարիկ , Առկայացման քերականական կարգի առանձնահատկությունները միջին հայերենում և Մշո բարբառում	38
Մուրադյան Լուսինե , Կցականության, թեքականության և անջատականության արտահայտությունը հայերենի, ռուսերենի և անգլերենի անցյալ անկատար ժամանակաձևերում.....	47
Սարգսյան Մերի , Ավելորդաբանություններ Երևանի խոսակցական լեզվում.....	56
 <i>Հաղորդումներ</i>	
Ղամոյան Լուսինե , Երևանի լեզվի արդի վիճակը.....	62
Մելքոնյան Լուիզա , Փոխառություններ և օտարաբանություններ արդի հայերեն խոսքում.....	70
Մնացականյան Դոնարա , Էջմիածնի և Արմավիրի տարածաշրջանների տեղանունների իմաստային վերլուծություն.....	81
Սարգսյան Լիանա , Բայերի սեռային անցումներ արդի արևելահայերենում.....	92
Սարգսյան Լուիզա , Իմաստափոխական իրողություններ գոյականակազմ բայերի համակարգում.....	107
Քարտաշյան Անահիտ , Հնչյունափոխական մի քանի երևույթներ Երևանի խոսակցական լեզվում.....	120

Արրոյան Հերմինե

(ԳԱԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտ)

ԱՌԿԱՅԱԿԱՆ ՏՐՈՂՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Առկայական տրոհումը, չեզոք լինելով նախադասության քերականական վերլուծությանը, չեզոք չէ դրա կառուցվածքին. առկայական տրոհման միջոցները երևան են գալիս հենց նախադասության կառուցվածքում, այսինքն՝ նախադասության կառուցվածքի վրա հենվելով է հնարավոր լինում առկայացնել տեղեկությունը:

Առկայական տրոհման գլխավոր միջոցներն են շարադասությունն ու հնչերանգը:

Խոսքում շարադասությունն ու հնչերանգը գործում են միասնաբար. լեզվաբանության մեջ բազմիցս ապացուցվել է, որ շարադասությունը որոշ դեպքերում հուշում է, թե հնչերանգային ինչ ձև կարող է ունենալ տվյալ ասույթը և ընդհակառակն. ասույթի հնչերանգային ձևն իր խոսքային իրացման համար պահանջում է անհրաժեշտ շարադասություն:

Հնչերանգը, լինելով «նախադասության ամբողջականությունն ու մտքի ավարտվածությունը ձևավորող»¹ կարևորագույն հատկանիշ, առկայական տոհման ժամանակ գործում է անմիջականորեն: Հնչերանգի կենտրոնական առանցքը՝ տրամաբանական շեշտը, վերաբերյալի արտահայտման ընդհանրական միջոց է. նախադասության բաղադրիչների շարադասությունն անգամ չփոխելով՝ այն կարող է նույն ձևական – քերականական պատյանով ստեղծել տարբեր ասույթներ՝ դրվելով ասույթի այս կամ այն բաղադրիչի վրա, և նույնիսկ ընդգծել նախադասության միտքն ամբողջությամբ: Օրինակ՝

¹ Ս.Աբրահամյան, *Հայոց լեզու. շարահյուսություն*, Ե., «Լույս» հրատ., 2004, էջ 16:

Մանեն՝ն կ'երթար տուն: Մանեն կ'երթա՛ր տուն: Մանեն կ'երթար տո՛ւն: Մարդ մը եկաւ: Առաջին նախադասության վերաբերյալը ենթական է, երկրորդինը՝ ստորոգյալը, երրորդինը՝ տեղի պարագան: Ինչպես տեսնում ենք, տրամաբանական շեշտի շնորհիվ փոփոխվեցին ասույթի ենթահիմքն ու վերաբերյալը՝ առանց նախադասության բաղադրիչների շարադասությունը փոփոխելու: «Մարդ մը եկաւ» նախադասությունը վերաբերյալ է, քանի որ ասույթն ամբողջությամբ նոր տեղեկություն է պարունակում թե՛ խոսողի, թե՛ խոսակցի համար:

Լեզվում կան դեպքեր, երբ վերաբերյալն առանձնացնելու միակ ու «պարտադիր» միջոցը տրամաբանական շեշտն է:

ա. Հայերենում «սովորական շարադասություն ունեցող պատմողական նախադասության տրամաբանական շեշտը դրվում է ստորոգյալի վրա»², քանի որ «ստորոգյալը ամենից հարմարն է մտքի շեշտը կրողի դերի համար»³, ուստի այն ասույթի վերաբերյալն է: *Օրինակ՝ Արշամ/ահաբեկեցա՛ւ (ԴՄԳ, 273)⁴: Դեմքերը /լրջացե՛ր էին (ԴՄԳ, 287):*

բ. Բաղադրյալ ստորոգյալը ևս մեծ մասամբ դառնում է ասույթի վերաբերյալ, որովհետև «անկախ իր դիրքից՝ բաղադրյալ ստորոգյալը ամենից հարմարն է տրամաբանական շեշտ կրելու»⁵: *Օրինակ՝ Երեցկի՛նը /տխո՛ւր էր (ԴՄԳ, 249): Մայրս ամնգրագե՛տ էր (ԴՄԳ, 293):*

գ. Տրամաբանական շեշտն ընկնում է ստորոգյալի վրա, եթե այն ժխտական խոնարհման է: Ժխտական ստորոգյալը ժխտման իմաստի շնորհիվ միտում ունի ստորոգայնորեն միշտ ընդգծել ինքն իրեն. «Ժխտման դրսևորումները հենվում

² Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 16:

³ Վ. Քոչյան, *Ակտուալ անդամատումը և շարադասությունը ժամանակակից հայերենում*, Ե., 1990, էջ 22:

⁴ Մեջբերումների կից՝ փակագծերի մեջ, նշվում են բնագրի համառոտագրությունը և համապատասխան էջը, ցանկը՝ վերջում:

⁵ Վ. Քոչյան, նշվ. աշխ., էջ 29:

են ընդգծման դրսևորումների վրա, որովհետև ժխտվողը նաև ընդգծվում է»⁶: Ժխտման առկայությունը հնարավորություն է տալիս ստորոգայնորեն ընդգծել ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ՝ ն՛անվանական, ն՛ բայական, ստորոգյալը: *Օրինակ՝ Երեցկիներ / չի պատասխաներ (ԴՄԳ, 250): Նիւ Եորքը / ապրելիք տե՛ղ չէ այլևս (ԴՄԳ, 284):*

Խոսքում, ինչպես արդեն նշվել է վերևում, շարադասությունն ու հնչերանգը գործում են միաժամանակ: Ընդ որում առկայական տրոհման ժամանակ գործում է շարադասության իմաստային գործառույթը. այս դեպքում այն առնչվում է տրամաբանական շեշտին, քանի որ երկուսը միասին ընդգծում են ասույթի վերաբերյալը:

Ենթակա + ստորոգյալ հաջորդականության դեպքում, ինչպես նկատվեց վերևում, ենթական հիմնականում համապատասխանում է ենթահիմքին, իսկ ստորոգյալը՝ վերաբերյալին: Այսինքն՝ առկայական տրոհումն ու քերականականը համապատասխանում են: Սակայն միշտ այդպես չէ. հաճախ ուղիղ շարադասությամբ ենթական կարող է լինել վերաբերյալ, իսկ ստորոգյալը՝ ենթահիմք: *Օրինակ՝ Ոչ ո՛ք / բացառությւն կը կազմէ (ՄՊ, 26): Այդ՝ Վահրամիւն ու Մարանիւն սէրն էր (ՀՀԼՍ, 572): Եւ ե՛ս / տեղի տուի (ՇՇՆԱԵ, 83): Գիտցո՛ղը գիտէր (ԴՄԳ, 250):*

Ստորոգյալ+ենթակա շարադասության դեպքում ստորոգյալը, ուժեղ շեշտի ազդեցությամբ մղվելով նախադասության սկիզբ, «ընդգծում է գործողությունների, եղելությունների կարևորությունը»⁷: *Օրինակ՝ Հեռացած էր / մահուան վրտանգը (ՄՊ, 484): Վերջապէս պիտի տապալի / ան: Այո՛, կը մօտենար / ան (ՇՇՆԱԵ, 56):*

⁶ **Գ. Ջահուկյան**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 533:

⁷ **Վ. Առաքելյան**, *Հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն*, հ. I, Ե., 1958, էջ 462:

Հայերենում, սակայն, նախադաս ստորոգյալը կարող է արտահայտել մտքի ենթահիմքը, իսկ հետադաս ենթական՝ վերաբերյալը: *Օրինակ՝ Սպառած էր / նոյնիսկ իր ապահովագրության դրամը (ՀՀԼՍ, 447): Այդպէս ստեղծուած են / բռնոր ազատ հայրենիքները (ՀՀԼՍ, 632):*

Ստորոգյալի լրացումներից խնդիրներին առավել բնորոշ է ստորոգյալի հետ միասին ենթահիմքի կամ վերաբերյալի խմբում հանդէս գալը: Սովորաբար խնդիրներին բնորոշ է հետադաս շարադասությունը, սակայն դրանք, երբ տրամաբանորեն ընդգծվում են, մղվում են ստորոգյալին նախորդող դիրք: Բերենք օրինակներ, երբ խնդիրները մղվել են ստորոգյալից առաջ ուժեղ շեշտի պատճառով:

Ուղիղ խնդիր - *Ոչ մէկ գգայութիւն կը հաղորդէին ջիղերը(ՄՊ,253): Այդ նամակներուն գոյութիւնըն իսկ չէր գիտեր Զարուհին (ԳԶԵ, 211)*: Ժողովուրդը / իր վճռին մէջ անոնք ստուգութիւն մը դրաւ (ՀՕԵ, 32): Մեծերը / իրենց փոքր-ձութիւնը գովեցին (ՀՕԵ, 32):*

Անուղղակի խնդիրներ - *Միջոց մը Արեգեանը / կանչուեցաւ գիւղէն (ՀՄԵ, 100): Սայլերը / լծուեցան (ՀՀԼՍ, 51): Ժամը/գիշերուան երկուքին կը մոտենար (ՀՊԵ, 514): Տունը էկեղեցիին կտակած էր (ԴՄԳ, 504): Սոսիին մէջէն մայիսի թռչունը / աւելի քնքուշ քաղցրութեամբ կը լեցնէր իրիկուան այդ պահուն*

⁸ Արևմտահայերենում ընդունված են SVO և SOV շարադասական տարբերակները, որովհետև ուղիղ խնդիրն ու ենթական քերականական նույն ձևավորումն ունեն: Բայց լեզվական փաստերը ցույց են տալիս, որ գոյություն ունի նաև OVS կադապարը, որտեղ ենթակայի և խնդրի շարադասության փոփոխությունը չի առաջացնում շարահյուսական գործառույթի փոփոխում կամ մտքի շփոթ, քանի որ այս դեպքում տարբերակվում են անձանիշ ու իրանիշ և վերջինիս սերտորեն առնչվող շնչավորի ու անշունչի առումները, գոյականները, չունենալով քերականական տարբեր ձևավորում, տարբերվում են իմաստով, որի շնորհիվ OVS շարադասական տարբերակում ներգործողի ու ներգործվողի գործառույթների շփոթ չի ստեղծվում:

խորհուրդը (ՀՕԵ, 108): Իր ոսկորներուն ճաթըտուրը հոգովը կը լսէ (ՀՕԵ, 153): Բայց անոնց մասին ա՛լ չի մտածեր / ծերը (ԴՄԳ, 503): Բանաստեղծութեանց մէջ արեւելեան երգերը կը սիրէր (ԳԶԵ, 48): Գեղը / ի՞ր վրայ խոսելէն չէր ձանձրանար (ՀՕԵ, 23): Ո՛չ մէր տունէն, ո՛չ հօրեղբորմէս լուրջ օժանդակութիւն յուսալ չեմ կրնար (ԼՇԵ, 111):

Պարագաների շարադասությունը, ինչպես նկատվել է հայ լեզվաբանության մեջ, պայմանավորվում է դրանց խոսքի-մասային արտահայտությամբ, լրացման բնույթով, խոսքում այլ լրացումների առկայությամբ: Պարագաներին բնորոշ է թե՛ ենթահիմքը, թե՛ վերաբերյալն արտահայտելը: Բոլոր դեպքերում դրանց՝ իբրև ստորոգյալի լրացումների, առավել բնորոշ է վերաբերյալի դերով կամ դրա կազմում հանդես գալը, ինչպես նաև իրենց լրացյալը արտահայտիչ դարձնելը: Պարագաները սովորաբար շեշտվում են ստորոգյալին նախորդող դիրքում, թեև բացառված չէ տրամաբանական շեշտի պատճառով հետադաս կամ նախադաս դիրք մղվելը, ինչպես լինում է ձևի պարագայի դեպքում (*Մեայր Պիեր / մէկէն իր վրայ նետուեցաւ բազուկներուն ամբողջ ուժովը գայն գրկելով սեղմ, սեղմ* (ՇՇՆԱԵ, 40): *Ուստի ամենայն զուշուրթեամբ առանց կասկած տայրու՝ / Վահեւունեաց իշխանը հասաւ Մեծոփայ հոշակաւոր վանքը* (ԾԵ, 293): *Օրինակ՝ Դուն / այդպէ՛ս մտածեցիր* (ԼՇԵ, 387): *Օր մ՛ալ Ղազարոս աղան/երեսները կախած կու գայ գրասենեակըս* (ՀՊԵ, 503): *Մելիտոս աղային տիկինն / էֆենտիին տիկնոջը քովը նստած էր* (ՀՊԵ, 448): *Այսպէս աղուոր հիւրասենեակ / ոչ մէկ տեղ կայ* (ՄՊ, 250): *Ամէն բանէ առաջ ուզեց նկարագրել իր տունը* (ՄՊ, 32): *Այն ատէն տիրացու Գեւոն, / աջը համբուրելու պիտի մօտենար իր գաւկին* (ՀՀԼՍ, 358): *Նահապետ աղային պէս ազգը սիրող մարդ / խիստ քիչ կը գրտնուի ազգին մէջ* (ՀՊԵ, 490): *Աղուոր ըսուելիք կողմ մը ամենէւին չունէր* (ՀՄԵ, 73): *Գիւղը / ի՛նչ շուտ հեքիաթ դարձաւ* (ՀՀԼՍ, 575): *Հրամանի մը վրայ շարժուեցան* (ՀՀԼՍ, 52): *Շէնքը / չափազանց հին ըլլալուն համար փոր տուած էր բակին կողմը,*

խակապէս վտանգաւոր կերպով (ՄՊ, 45): Եւ արագիր/ճառ մը չգտնելուն՝ եկեր Դարին մէկ ծայրը բոյն դրեր էր (ԴՄԳ, 271): Է-ֆենտին/ քանի մը բարեկամաց հետ թուղթ կը խաղար (ՀՊԵ, 448):

Գոյականական անդամի լրացումներին առավել բնորոշ է ենթահիմքի կամ վերաբերյալի խմբում հանդես գալը: Դրանք բոլոր դեպքերում ընդգծում են իրենց լրացյալին՝ դարձնելով այն արտահայտիչ ենթահիմք կամ վերաբերյալ: Գոյականական անդամի լրացումներին առավել հատուկ է նախադաս կիրառությունը՝ բացի բացահայտից: Մյուսները հետադաս են դրվում միայն խոսողի դիտավորությանը, երբ վերջինս կամենում է հատուկ ընդգծել, կարևորել դրանք:

Հետադաս որոշիչ – Յաղթական կեցուածք մը առնելով, յիշեց պզտիկ դէպք մը, մէծ հետեւանքներով յի (ՄՊ, 233): Տարին չանցած պայթեցաւ մեծ Փոթորիկը, կրակով ու արիւնով շաղուած (ՄՊ, 315): Երկաթուղիի ձախ կողմին կը տարածուէր լայնարձակ դաշտը, թանձր ու ծփուն մարգերով և փարթամ բանջարանոցներով ու պտղաստաններով ծածկուած (ՄՊ, 413):

Հետադաս հատկացուցիչ – Գիշերը խաղաղութեան մէջ կը լսուի բառաչը եզներու, կրկրոցը աղբիւրին, վայրագ բողբոջը շնագայլերուն ու հեզնոտ ծիծաղը բորենիին (ՄՊ, 407): Կծոռի ու փոքրիկ քիթովը կը ներշնչէ անուշ հոտը խնձորներուն (ՄՊ, 304):

Բացի շարադասությունից ու հնչերանգից՝ առկայական տրոհման կայացմանը մասնակցում են այլ միջոցներ, ինչպիսիք են կրկնությունները, հավելական կառույցների, թերի նախադասությունների կիրառությունները, հավելադրությամբ շրջումը, *ևւ* օժանդակ բայի հնարավոր տեղափոխությունը շեշտվող բառի մոտ, նախադասության այս կամ այն բաղադրիչի ընդգծումը շաղկապների օգնությամբ:

Վերաբերյալի շեշտման միջոցներից է *ևւ* օժանդակ բայի տեղափոխումը ընդգծվող բառի մոտ, որն արևմտահա-

յերենում համեմատաբար քիչ գործածություն ունի: *Օրինակ՝ Պայիկ Հօրքուրն էր մեռեր (ՀՀԼՍ, 229): Ակումբին մէջ միակ Երանոս աղբարն էր մնացեր (ՀՀԼՍ, 385): Ան խոզակ է ծախած օխան ոսկի մը եղած ատենն իսկ (ՀՕԵ, 52): Այդ օր Մուրատ կապոյտ էլկէկ էր հազեր (ՀՀԼՍ, 258): Մենծաց էսպէս ենք տեսեր (ՀՀԼՍ, 23): Այս անգամ փոշոտ, քարքարոտ արքայի ճամփան էր բացուած իր մարմնին մէջ (ՀՀԼՍ, 605): Աղջկանդ լաջակը / ծառին գլուխն է ելեր (ՀՀԼՍ, 261): Դիակները եւ արինին ճամփաները / զինք շատ էին ցնցեր (ՀՀԼՍ, 597): Դեռ շատ էր ջահիլ այդ դառնութիւններուն համար (ՀՀԼՍ, 606): Շա տ էր յոգներ (ԴՄԳ, 352):*

Վերաբերյալի շեշտման միջոցներից է հավելադրությամբ շրջումը: Այս դեպքում «տրամաբանական շեշտ կրող բառը լրացուցիչ ավելադիր հանգույցով հարադրվելով առանձնանում է, դառնում հաղորդման կենտրոն»⁹. նախադասության տրամաբանական շեշտը կրող բառի՝ վերաբերյալի մոտ ավելանում է լրացուցիչ *եւ* հանգույցը և *որ* ստորադասական շաղկապը, նախադասությունն ստանում է բարդ ստորադասական նախադասության տեսք: Բայց այն պարզ նախադասություն է, և եթե հանենք հանգույցն ու շաղկապը, նախադասության բովանդակությունը չի փոխվի: *Օրինակ՝ Այս յոյսը եւ հաւատքն է, որ կանգուն կը պահեն զինքը (ԴՄԳ, 322): Քուն չէ, որ ունէր սակայն (ԴՄԳ, 264): Ճամբան էր, որ կ'առաջնորդէր զինքը (ՀՄԵ, 48): Արդեօք ստուգիւ որդի՞ս էր, որ տեսայ (ՊԴԵ, 98): Պաշտոնեաները շատոնց է, որ մեկներ էին (ՇՇՆԱԵ, 30): Չորս տարի էր, որ Հայաստան թշուառության մէջ կը հեծէր (ՄԵ, 498):*

Վերաբերյալի շեշտման միջոց է նաև կրկնությունը, որը ոճական այնպիսի բանադարձում է, «երբ բառերի ու բառակապակցությունների կրկնության շնորհիվ խոսքին հաղորդվում

⁹ Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 45:

է հուզականություն, արտահայտչականություն»¹⁰: Ընդհանրապես կրկնությունները սուբյեկտիվ բնույթի են, քանի որ խոսողը մտածված է դիմում կրկնությանը՝ խոսքին հուզականություն, արտահայտչականություն հաղորդելու համար: Կրկնությունները, հուզականորեն որոշակի իմաստային բովանդակություն փոխանցելով, միաժամանակ տրամաբանորեն ընդգծում են նախադասության այս կամ այն բաղադրիչը՝ դարձնելով այն արտահայտիչ վերաբերյալ: *Օրինակ՝ Կարծես նչինչ, նչինչ պատահած ըլլար (ՄՊ, 402): Ծառերը, ձիթենիի ծառերը խենթցեր էին ան տարին (ՀՕԵ, 185): Այդ արտին կտորին վրայ Տոգասնր կաշխատէ ք, կաշխատէ ք (ՀՕԵ, 38):*

Առկայական տրոհման կայացմանը ծառայում է նաև անորոշ հոդը, որը, չփոխելով նախադասության կառուցվածքը, ազդում է դրա իմաստի վրա: Արդեն իսկ այս հոդի անվան մեջ (անորոշ) առկա է նորի, անհայտի գաղափարը: «Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, - գրում է Մ. Ասատրյանը, - որ որոշյալ առումով գործածված բառը հանդես է գալիս որպես խոսքի ելակետը, իսկ անորոշ առումով բառը՝ այն նորը, որ հաղորդվում է»¹¹:

Այսպիսով՝ անորոշ հոդի ամենատարածված և ամենաբնորոշ հատկությունը համատեքստից ոչ հայտնի, իսկ որոշյալինը՝ արդեն հայտնի առարկան նշելն է: *Օրինակ՝ Գրեթէ սակաւախօս, բիրտ ու արեւելեան նկարագրով, գեղեցիկ ու մեծ բաներ սիրող, գեղեցիկ էւ մեծ բաներու գերի՝ տղայ մըն էր անիկա (ԴՄԳ, 230): Նախ՝ ան գերի եղած էր տարիններով՝ սիրուն ու անառակ աղջկան մը: Ու այդ աղջիկը՝ իր արուի գորաւոր ու նրբազգած հոգիին խորը խոցած էր ամէ՛ն բան (ԴՄԳ, 503):*

¹⁰ **Լ. Եզեկյան**, *Ոճագիտության ուղեցույց*, Ե., «Ձանգակ-87», 2007, էջ 94:

¹¹ **Մ. Ասատրյան**, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., ԵՊՀ հրատ., 2002, էջ 97:

Առկայական տրոհման ժամանակ վերաբերյալի շեշտմանը ծառայում են որոշ մակբայներ, դերանուններ, շաղկապներ, վերաբերականներ: Վերաբերականները (իրաւ, ա՛յ, անգամ, իսկ, մանաւանդ, հենց, մինչեւ իսկ, միթէ, գուցէ, արդեօք, զէթ, գոնէ, իրօք, ցաւօք և այլն) կարող են նախադասության այս կամ այն բաղադրիչի մոտ դրվել, տրամաբանորեն ընդգծել այն՝ դարձնելով հաղորդակցական կենտրոն: *Օրինակ՝ Ատր Կիւզել աղան / չէր նկատեր անգամ (ՀՄԵ, 43): Զինք հետաքրքրողը / պատմութիւնն իսկ էր (ՄՊ, 250): Հա, հա բոլորն ա՛յ / գիտէին (ՀՀԼՍ, 199): Տազէս աղա / Փարիզ հասած օրն իսկ այս իրողութեան գիտակցած էր (ՄՊ, 57):*

Մակբայները (աւելի, նուազ, պակաս, շատ, խիստ, կարի, յոյժ, չափազանց, այլեւս, երբեք, բնաւ, նորից և այլն) ևս իրենց բառային իմաստի շնորհիվ սաստկական երանգ են հաղորդում նախադասության այս կամ այն բաղադրիչին: *Օրինակ՝ Ես/այլեւս պանդոկ չպիտի գամ (ՄՊ, 36): Այդ սիրելի դէմքը / կը դժգունէր հետզհետէ ավելի, հետզհետէ ավելի (ՄՊ, 40): Անչափ, անչափ շնորհակալ եմ ձեր այս սրտագին նուէրին համար (ԼՇԵ, 82):*

Նախադասության տարբեր անդամներ հնարավոր է ընդգծել շաղկապների միջոցով՝ դրանք դարձնելով հաղորդակցական կենտրոն: Նման դերն ունեն եւ, նաեւ, այլեւ, ալ, կա՛մ...կա՛մ թէ՛...թէ՛ն այլ շաղկապներ: *Օրինակ՝ Աստղերը ծախեց / թէ ցորեպանին եւ թէ՛ ռենճապերին (ՀՀԼՍ, 135): Ալ ը չ Մէսրոպ ամուսին, ը չ ալ ցորիին դէպքը կը յիշէր (ՀՄԵ, 118): Եւ այն ժամանակ դուն կըլլաս արժանի տէրը եւ ա՛յս սենեակին, եւ ա՛յս ամրոցին, եւ ա՛յս աշխարհին (ԼՇԵ, 392): Վրաս ը չ դող էր մնացեր, ը չ իւեղդուր եւ ը չ յուզում, այլ նուրբ ու փափուկ տխրութիւն մը միայն (ԼՇԵ, 115):*

Դերանունները, լինելով իրադրական բառեր, մատնանշում են խոսողին հայտնի կամ անհայտ առարկա: Ըստ այդմ էլ լինում են վերաբերյալի կամ ենթահիմքի ցուցիչ:

Իբրև ենթահիմք կամ ենթահիմքի բաղադրիչ՝ հանդես են գալիս ցուցական, անձնական դերանունները: Նշենք, որ ցուցականներին առավել բնորոշ է ենթահիմքը ցույց տալը կամ համատեքստից հայտնի առարկան մատնանշելը: *Օրինակ՝ Նիք-նիքի այս վահար / պարոն բեռնարի չորս պանդոկներուն մէջ աշխատողներուն բոլորին ծանօթ էր (ՄՊ, 244): Լուրջ հարց է / ասիկա (ԼՇԵ, 111):*

Բայց տրամաբանական շեշտը կարող է ընկնել նաև դրանց վրա. նման դեպքում դրանք դառնում են վերաբերյալ կամ վերաբերյալի խմբի անդամ: *Օրինակ՝ չո՛ղ է / սխալդ (ԼՇԵ, 383): Երեւի նկարչությունը դո՛ւր աս կը սիրէք (ԼՇԵ, 46):*

Ժխտական դերանունները հիմնականում վերաբերյալ կամ վերաբերյալի բաղադրիչ են, քանի որ «տրամաբանական շեշտը գրեթե միշտ ընկնում է ժխտական դերանուններին»¹²: *Օրինակ՝ Իրապէս նչինչ գիտէր անոր վրայ (ՀՕԵ, 107): Ոչ մէկ զգայություն կը հաղորդէին ջիղերը (ՄՊ, 253): Ոչ մէ՛կ ձայն, ոչ մէկ շշուկ կը լսուէր հեռախօսին միւս ծայրէն (ՄՊ, 405):*

Ինքը, բոլորը, ամէն, ամէն մի և այլ դերանուններ, դրվելով այս կամ այն բառի վրա, ընդգծում են այն՝ դարձնելով վերաբերյալ: Օրինակ՝ Ամէնէն չքնադի համակրանքը կը վայելէր / անիկա: Ամէն օրուան նման՝ ամէն տարի ունի իր ցաւի բաժինը (ՄՊ, 128): Ու կատակները, ակնարկությունները, տղայությունները բոլորն աս / վերջացան (ՀՕԵ, 197): Օվան աղան ինք / բերած էր պարոն Պետրոսը (ՀՀԼՍ, 522):

Այսպիսով՝ առկայական տրոհման գլխավոր միջոցներն են շարադասությունն ու հնչերանգը, ընդ որում հնչերանգի կենտրոնական առանցքը՝ տրամաբանական շեշտը, ընդհանրական միջոց է, որը գործում է մյուս միջոցներին զուգահեռ: Բացի հնչերանգից ու շարադասությունից՝ արևմտա-

¹² Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, *Ժամանակակից հայոց լեզվի շարադասություն. Ուսումնական ձեռնարկ*, Ե., ԵՊՀ հրատ., 2003, էջ 26:

հայերենում առկայական տրոհման կայացմանը մասնակցում են նաև շարահյուսական, բառաքերականական այլ միջոցներ:

Համառոտագրություններ

- ԳԶԵ - Գրիգոր Զոհրապ, Երկեր, Ե., 1989:
ԼՇԵ - Լևոն Շանթ, Երկեր, Ե., 1968:
ԾԵ - Ծերենց, Երկեր, Ե., 1983:
ՀՀԼՍ - Համաստեղ, Հայաստանի լեռներու սրնգահարը, Ե., 1989:
ՀՊԵ - Հակոբ Պարոնյան, Երկեր, Ե., 1969:
ՀՕԵ - Հակոբ Օշական, Երկեր, Ե., 1979:
ՀՄԵ - Հակոբ Մնձուրի, Երկեր, Ե., 1986:
ՇՇՆԱԵ - Շահան Շահնուր, Նահանջ առանց երգի, Ե., 1994:
ՊԴԵ - Պետրոս Դուրյան, Երկեր, Ե., 1981:
ՍՊ - Սփյուռքահայ պատմվածք, Ե., 1989

Abroyan Hermine - Means of Functional Separation of the Sentence in the Western Armenian Language. - Hence, the main means of functional separation of the sentence are considered to be syntax and intonation; meanwhile the main element of the accent is the logical accent, which acts in parallel with other means. Besides intonation and syntax, other syntactic and lexical-grammatical means also take part in the functional separation of the sentence in the Western Armenian language.

Аброян Эрмине - Способы актуального членения в западноармянском языке. - Основными способами актуального членения являются синтаксис и интонация, при этом главный элемент интонации - логическое ударение является общим средством, которое действует параллельно с другими способами. Кроме интонации и синтаксиса в западноармянском языке в актуальном членении предложения принимают участие также иные синтаксические и лексико-грамматические способы.

Թաղևոսյան Հասմիկ
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՈՒՇ
ՄԻՋՆԱԴԱՐԻ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Միջնադարյան հայ բժշկարանները հսկայական նյութ են պարունակում հայոց լեզվի ինչպես բառապաշարի, այնպես էլ կրած քերականական փոփոխությունների ուսումնասիրության համար: Հատկապես զգալի անելիք կա միջին հայերենի երկրորդ շրջանի¹³ բժշկարանների ուսումնասիրության առումով: Այս շրջանում են ստեղծվել Սեբաստիայի բժշկագիտական դպրոցի ներկայացուցիչներ Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարանները («Գիրք բժշկական արհեստի» «Գիրք բժշկութեան տումարի»), որոնք իբրև միջինհայերեն աղբյուրներ, առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել: Նկատենք սակայն, որ վերջիններիս քննությունը պատկերացում է տալիս ուշ միջնադարի (16-17-րդ դդ.) լեզվավիճակի մասին: Կարծում ենք, որ ուսումնասիրության կարիք ունեն նաև քերականական առանձնահատկությունները, մանավանդ դրանց բացահայտման առումով զգալի տարբերություն է նկատվում միջին հայերենի առաջին և երկրորդ ենթաշրջանների միջև: Եթե առաջինում դեռևս գերիշխում են գրաբարյան, ապա երկրորդում արդեն որակ են կազմում աշխարհաբարյան ձևերը:

Սույն հոդվածում ներկայացվում են Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարանների հոլովական առանձնահատկությունները: Գրաբարի և միջին հայերենի հոլովական հատկանիշների հետ հստակորեն ընդգծվում և ավելի հաճախ են

¹³ Առաջնորդվել ենք «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» գրքում կատարված շրջանաբաժանմամբ, տե՛ս նշված աշխ., հ. Ա, Ե., 1972, էջ 42-44:

կիրառվում նաև աշխարհաբարյան ձևերը: Դրանց համար կարելի է առանձնացնել արտաքին թեքման չորս հիմնական հոլովում՝ *ի, ու, ն, ան*: Աշխարհաբարի հոլովական առաջին դրսեվորումը *ի արտաքին հոլովման* ընդհանրացումն է: Մահմանափակված չլինելով այս կամ այն խմբերով՝ *ի* հոլովումը իր սահմաններն ընդլայնել է ի հաշիվ նորակազմությունների, բազմաթիվ փոխառյալ բառերի, ինչպես նաև այլ հոլովումներից անցած բառերի: Այդ հանգամանքը նկատի առնելով առանձնացրել ենք բժշկարաններում գործածված *ի* հոլովման հետևյալ խմբերը.

ա) գրաբարից ավանդված *ի* հոլովման բառեր, ինչպես՝ *ազոխի* (ԲՄ 71)¹⁴, *բունի* (ԱՄ 223)¹⁵, *երեսի* (ԲՄ 85, ԱՄ 125), *լօշտակի* (ԱՄ 230), *կարասի* (ԱՄ 198), *կաղամբի* (ԲՄ 128), *վարդի* (ԲՄ 78, ԱՄ 176) և այլն.

բ) գրաբարում այլ հոլովումների (այդ թվում նաև *ի-ա* խառն) պատկանող բառեր, որոնք անցել են *ի-ի*, թեև շարունակում են զուգահեռաբար գործածվել նաև իրենց հին հոլովմամբ, ինչպես՝ *կաքվի* (ԲՄ 77), *ուլի* (*ու*), *դդմի* (ԲՄ 73, ԱՄ 175), *ծոի* (ԱՄ 175), *ցաւի* (ԱՄ 136) (*ո*), *ջերմի* (ԱՄ 88), *սերմի* (ԲՄ 105) (*ա* ներքին) և այլն: Յ. Կարստը, իր քերականության մեջ առանձնացնելով *նախնական* և *երկրորդականի* ի հոլովում, վերջիններս դնում է *երկրորդականի* մեջ¹⁶:

գ) Միջին հայերենում ի հայտ եկած նոր բառեր և նորակազմություններ. *անծխոտի* (ԱՄ 209), *ականջթուքի*, *անթ-*

¹⁴ **Բունիաթ Սեբաստացի**, *Գիրք բժշկութեան տումարի*, Ե., 1987, էջ 71: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում ԲՄ համառոտագրությամբ:

¹⁵ **Ասար Սեբաստացի**, *Գիրք բժշկական արհեստի*, Ե., 1993, էջ 223: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում ԱՄ համառոտագրությամբ:

¹⁶ **Յ. Կարստ**, *Կիլիկյան հայերենի պատմական քերականություն*, Ե., 2002, էջ 145-146:

տակի (ԱՍ 95), աչացաւի (ԱՍ 170), բորի (ԲՍ 111, ԱՍ 148), գառնալեզուի (ԲՍ 82), գոզի (ԱՍ 138), թնիցավի (ՍՍ 198), լապրստակի (ԱՍ 123), խելի (ԲՍ 65), խոչակի (ԲՍ 82), կարճահարի (ԱՍ 128), կոնակի (ԱՍ 166), հաւկուրի (ԱՍ 150), ջղախոտի (ԲՍ 90, ԱՍ 157), քթերթի (ԱՍ 135) և այլն:

դ) Օտար լեզուներից (հիմնականում արաբերեն, պարսկերեն և թուրքերեն) փոխառված բառեր, ինչպես՝ *դամոնի* (ԱՍ 127), *ըռովանտի* (ԲՍ 116), *թաշանուճի* (ԲՍ 70), *լապլապուի* (ԱՍ 131), *խիարի* (ԱՍ 175), *խաշխաշի* (ԱՍ 139), *դագանի* (ԱՍ 221), *մաճունի* (ԲՍ 89), *շարպաթի* (ԱՍ 219), *շարապի* (ԲՍ 89), *նասուրի* (ԱՍ 225), *նկրիսի* (ԱՍ 137), *սումախի* (ԲՍ 71), *ֆալճի* (ԲՍ 72), *քարօսի* (ԲՍ 72) և այլն:

Ու արտաքին հոլովումը, ի տարբերություն միջին հայերենի առաջին ենթաշրջանի (երբ հոլովումը բնորոշվում էր իբրև սահմանափակ), ուշ միջնադարում ընդլայնել է իր սահմանները: Բժշկարաններում *ու* հոլովմամբ կիրառված բառերը բաժանել ենք հետևյալ խմբերի.

ա) գրաբարում *ու* հոլովման պատկանող, կենդանու անուն նշանակող և այլ գոյականներ, ինչպես՝ *ագռաւու* (ԱՍ 207), *աղուեսու* (ԱՍ 134), *առաւաւտու* (ԲՍ 111), *առիծու* (ԱՍ 168), *արջու* (ԲՍ 117), *բարթու* (ԲՍ 125), *կաքվու* (ԲՍ 125), *կովու* (ԲՍ 114), *կղբու* (ԱՍ 129), *ուլու* (ԲՍ 84), *ձագու* (ԱՍ 201), *ճակու* (ԱՍ 171), *ծովու* (ԱՍ 165), *ժամու* (ԲՍ 75), *հովու* (ԲՍ 116), *մահու* (ԱՍ 107), *ցաւու* (ԲՍ 87), *ցրտու* (ԱՍ 107), *քնու* (ԱՍ 103), *քամու* (ԲՍ 77), *օղու* (ԲՍ 84), *փորու* (ԲՍ 93) և այլն.

բ) գրաբարում *ո* հոլովման պատկանող զգալի թվով բառեր, այդ թվում և ի վերջնահանգով, որոնք անցել են *ու* հոլովման, (դրանց մի մասը շարունակում է գուգահեռաբար հոլովվել *ո*-ով), ինչպես՝ *բքու* (ԱՍ 107), *գլխու* (ԲՍ 83), *լուսու* (ԲՍ 74), *լեղու* (ԲՍ 99), *հաւու* (ԲՍ 91), *հոզու* (ԲՍ 74), *ուժու* (ԱՍ 98), *պորտու* (ԲՍ 79), *կիսու* (ԱՍ 121), *կովու* (ԲՍ 114), *հոտու* (ԱՍ 191), *մորթու* (ԱՍ 101), *ձիթենու* (ԱՍ 171), *թզենու* (ԱՍ 169), *տարու*

(ԱՍ 100), *մատնու* (ԲՍ 69) (վերջին երեքը *n-ա* խառն հոլովումից են անցած) և այլն.

զ) անորոշ դերբայը ևս *n-ից* անցել է *ու* հոլովման, թեև շարունակում է հոլովվել նաև *n-ով*, ինչպես՝ *խնդալու* (ԲՍ 71), *զնալու* (ԲՍ 74), *աւիրելու* (ԱՍ 114), *արեւելու* (ԲՍ 83), *խմելու* (ԲՍ 71), *ժռելու* (ԲՍ 102), *հարբենալու* (ԲՍ 71), *ուտելու* (ԱՍ 98) և այլն.

դ) գրաբարում *ի*, և *ի-ա* խառն հոլովումների պատկանող բառեր, որոնք *ու* հոլովման են անցել, ինչպես՝ *ահու* (ԲՍ 71), *այծու* (ԱՍ 150), *դիհու* (ԲՍ 76), *գիշերու* (ԱՍ 153), *որձու* (ԱՍ 100), *սագու* (ԲՍ 125), *պախարու* (ԲՍ 93), և այլն.

ե) *ու* հոլովիչով են հոլովվել նաև միջին հայերենում ի հայտ եկած որոշ բառեր (հիմնականում բարբառային և փոխառյալ), ինչպես՝ *խիարու* (ԲՍ 75), *քովու* (ԲՍ 96), *լապասակու* (ԲՍ 68): Այս շարքից են նաև *ի-ով* վերջացող գոյականները, ինչպես՝ *խաթմու* (ԲՍ 87), *կիպարու* (ԱՍ 165), *շամախու* (ԱՍ 171), *տամրակուննու* (ԲՍ 112), *քասնու* (ԲՍ 97) և այլն:

Արտաքին թեքման *n* հոլովումը նեղացրել է իր կիրառության սահմանները և աչքի չի ընկնում գործածության հաճախականությամբ: Նկատենք, որ այս հոլովումը նոր բառերով չի համարվել. *n-ով* հոլովվել են հիմնականում գրաբարում *n* հոլովման պատկանող բառերը, որոնք արդեն զուգահեռաբար գործածվում են նաև *ու* հոլովիչով: Դրանք են՝ ա) *ի-ով* վերջացող բառերը՝ *գարոյ* (ԱՍ 123), *գիհոյ* (ԱՍ 136), *գինոյ* (ԲՍ 63), *ուկոյ* (ԱՍ 142), *լեղոյ* (ԱՍ 150), *տարոյ* (ԱՍ 178), *թեղոյ* (ԱՍ 211), *կաղնոյ* (ԱՍ 142), *քամոյ* (ԲՍ 84), *փոշոյ* (ԱՍ 169), բ) անորոշ դերբայը (*լինալոյ* (ԱՍ 102), *ուտելոյ* (ԱՍ 71), գ) գրաբարյան որոշ բառեր *անասնոյ* (ԱՍ 169), *աստուծոյ* (ԱՍ 110), *գլխոյ* (ԲՍ 63), *մարդոյ* (ԱՍ 113), *մարմնոյ* (ԱՍ 87), *պտղոյ* (ԱՍ 172), *ցրտոյ* (ԲՍ 79), *օղոյ* (ԱՍ 103), *քնոյ* (ԱՍ 68), *իշոյ* (ԱՍ 149), *պորտոյ* (ԱՍ 141), *փորոյ* (ԱՍ 109) և այլն:

Առանձին դեպքերում միայն նկատելի են այլ հոլովումների պատկանող բառերի հոլովում *n* հոլովիչով, ինչպես՝ *ի* հո-

լովման շաղ բառը՝ շաղոյ (ԱՍ 170)), *ի-ա* խառն հոլովման տեղ-ը՝ տեղոյ (ԲՄ 75):

Արտաքին թեքման **ան հոլովումը**, որ առաջ է եկել գրաբարի *ա* ներքին հոլովումից, կիրառվել է միայն *-ակ, -իկ, -ուկ* վերջնահանգով բառերի դեպքում, ինչպես՝ *աղջկան* (ԲՄ 78), *տղական* (ԲՄ 104), *այրկան* (ԱՍ 102), *երկան* (ԱՍ 99), *կնկան* (ԱՍ 99), *մարդկան* (ԱՍ 190):

Աշխարհաբարի **վան հոլովմամբ** են կիրառվել է միայն *գիշեր* և *ցերեկ* գոյականները՝ *գիշերվան, ցերեկվան* (ԱՍ 104):

Ներքին թեքման հոլովումներից բժշկարաններում կենսունակ է միայն *ա* հոլովումը, որին, ինչպես և գրաբարում, ենթարկվում են *ա ներքին* հոլովման գոյականները, այն է՝ *ա*) *ն*-ով և նախորդող բաղաձայնով վերջացող՝ *ամռան* (Աս 152), *եղան* (ԲՄ 69), *լեռան* (ԲՄ 107), *ծիծռան* (ԲՄ 77), *ձկան* (ԲՄ 127), *ձռան* (ԲՄ 106), *նռան* (ԱՍ 192), *շրթան* (ԱՍ 178), *ջերման* (ԲՄ 109), *սերման* (ԱՍ 131), *սիսռան* (ԲՄ 64), *սնկան* (ԱՍ 178), *փայծղան* (ԲՄ 98), *ընկան* (ԱՍ 102), *ծնկան* (ԱՍ 134), ք-*ութիւն* վերջածանցով և *-ուն, -իւն*-ով՝ *այլորութեան* (ԱՍ 100), *արեան* (ԲՄ 68), *բնութեան* (ԲՄ 64), *գիջութեան* (ԱՍ 100), *հովութեան* (ԱՍ 107), *վատուժութեան* (ԱՍ 106), *քարշողութեան* (ԱՍ 101), գ) *-ումն*-ով վերջացող գոյականներ՝ *շարժման* և այլն:

Ներքին թեքման մյուս հոլովումներն հազվադեպ են, ինչպես՝ *անձին* (ԱՍ 113), *գառին*(ի), *ոսկեր*(ե) (ԱՍ 122), *աղջկաննւօր* (ո):

Նշված հոլովումներին պատկանող բառերը, ինչպես և բնորոշ է միջին հայերենին, զուգահեռաբար հոլովվում են նաև այլ հոլովիչով՝ առաջ բերելով քերականական զուգաձևություններ: Այդ փոխանցումները տեղի են ունենում հիմնականում *ի* ընդհանուր հոլովման և այլ հոլովումների միջև, ինչպես՝ *ատամի* – *ատաման* (ԱՍ 187), *ջերմին* (ԱՍ 96) – *ջերման* (ի/ան), *ուլի* (ԲՄ 77)- *ուլու* (ԲՄ 84), *կաքվի* (ԲՄ 77)- *կաքվու* (ԲՄ 125) (ի/ու), *ուժի* (ԱՍ 99) – *ուժոյ* (ԱՍ 166) – *ուժու* (ԲՄ 71), *ցաւի* (ԱՍ 135) – *ցաւոյ* (ԲՄ 67) – *ցաւու* (ԲՄ 87), *մյուս կողմից ո և ու հոլովում*-

ների միջև, ինչպես՝ աղաւնոյ (ԱՍ 108) - աղաւնու (ԲՍ 125), գլխոյ - գլխու (ԲՍ 83), իշոյ (ԲՍ 88) - իշու (ԱՍ 149), լեղոյ (ԱՍ 150) - լեղու (ԲՍ 99), մարդոյ (ԱՍ 97) - մարդու (ԲՍ 117), ցրտոյ (ԲՍ 79) - ցրտու (ԲՍ 86), պորտոյ (ԱՍ 141)-պորտու (ԲՍ 79), տարոյ (ԱՍ 178)- տարու (ԱՍ 100), օղոյ (ԱՍ 103)-օղու (ԲՍ 84):

Հոլովական առանձնահատկությունների մասին անհր- նար է խոսել առանց անդրադառնալու հոգնակի թվի կազմու- լանը, մանավանդ բժշկարաններում աշխարհաբարյան դրսև- րումներն ավելի զգալի են: Այստեղ ևս արտացոլում են գտել թվակազմության՝ միջին հայերենին բնորոշ անմիօրինակու- լունը, հոգնակերտների բազմազանությունը, սակայն միևնույն ժամանակ նկատելի է նաև հստակեցում. գոյականների մեծ մասը հոգնակին կազմում է չորս հիմնական ձևայիններով՝ *էր, նի, նէր, ք*, իսկ մյուսները (ունք, անք, ոնք, իք, տիք, վի վեր, վնի) ավելի քիչ են հանդիպում:

Գործածության հաճախականությամբ ամենից առաջ աչքի է ընկնում աշխարհաբարի *էր* հոգնակերտը: Նկատելի է, որ *ք* հոգնակերտը սահմանափակել է իր կիրառությունը, թեև չկա որևէ օրինաչափություն, թե որ բառերն են *ք* հոգնակերտ ստանում: Բացառություն են կազմում *ձայնավորով* (հիմնա- կանում *ի*-ով) վերջավորվողները (*աղիք, գոյորշիք, սպեղանիք*), որոնք էլ մեծաթիվ չեն: Ք-ն հիմնականում կցվում է եզակի ուղ- դականին, ինչպես՝ *անդամք* (ՍՍ 103), *գործք* (ԱՍ 224), *զավակք* (ԱՍ 112), *իրք* (ԱՍ 87), *կերակուրք* (ԲՍ 104), *մժիղք* (ԱՍ 79), *նմանք* (ԱՍ 87), *շատք* (ԱՍ 129), *սահմանք* (ԱՍ 113), *վերջք* (ԲՍ 82), *տերևք* (ԱՍ 115) և այլն: Միայն ներքին թեքման որոշ գոյա- կանների դեպքում նկատելի է սեռական-տրականի հիմքից կազմություն, ինչպես՝ *աւուրք* (ԲՍ 119), *ոսկերք* (ԲՍ 85):

Տվյալ բժշկարաններում արդեն հստակեցում է նկատ- վում. *էր*-ը միավանկ բառերի հոգնակերտն է, ինչպես՝ *դարձեր* (ԱՍ 150), *խոցեր* (ԱՍ 91), *ծլեր* (ԱՍ 223), *կոպեր* (ԲՍ 87), *հապեր* (ԲՍ 82), *ձուեր* (ԱՍ 212), *դուրսեր* (ԱՍ 139), *ճանձեր* (ԱՍ 169), *մաղձեր* (ԱՍ 111), *շներ* (ԲՍ 82), *ջղեր* (ԲՍ 73, ԱՍ 93), *տակեր*

(ԱՍ 140), *ցավեր* (ԱՍ 91), *ցեղեր* (ԲՍ 63), *քնքեր* (ԱՍ 119), *օրեր* (ԲՍ 83) և այլն: Բացառություն են կազմում միայն *ակոսատկեր* (ԱՍ 122), *բնութեններ* (ԱՍ 100), *մեջտեղեր* (ԱՍ 98) գոյականները, որոնց երկուսի դեպքում էլ նկատելի է աշխարհաբարյան ևս մեկ սկզբունք՝ վերջին բաղադրիչի միավանկ գոյական լինելու հանգամանքը:

Հաճախակի է հանդիպում **նի** հոգնակերտը: Առաջանալով գրաբարի *անի-ից՝ ա-*ի անկմամբ՝ *նի-*ն միջին հայերենում աչքի է ընկնում երկվանկ բառերի հոգնակին կազմելով, ինչպես՝ *աղունի* (ԲՍ 118), *բանճարնի* (ԱՍ 84), *բլիթնի* (ԱՍ 162), *երեսնի* (ԲՍ 88), *երակնի* (ԲՍ 69), *ընդնի* (ԱՍ 233), *թրիաքնի* (ԲՍ 118), *կլօրնի* (ԱՍ 181), *հաքիմնի* (ԱՍ 233), *ճանփնի* (ԲՍ 67), *մացառնի* (ԱՍ 231), *նշաննի* (ԱՍ 115), *շաղախնի* (ԲՍ 120), *ուղքնի* (ԲՍ 70), *ուռեցնի* (ԱՍ 91), *պատճառնի* (ԱՍ 88), *տամարնի* (ԲՍ 108), *փորոքնի* (ԱՍ 102), *ֆիթիլնի* (ԱՍ 144) և այլն:

Աշխարհաբարյան **ներ** հոգնակերտը, որն իր կիրառության սահմանները ընդլայնում է միջին հայերենի երկրորդ շրջանում, ևս զգալի գործածություն ունի: Առաջանալով *նի-*ի և *եր-*ի ձուլումից՝ **ներ** հոգնակերտը, ինչպես և բնորոշ է աշխարհաբարին, կազմում է բազմավանկ (2 և ավելի) բառերի հոգնակին, ինչպես՝ *ատամներ* (ԱՍ 213), *բժիշկներ* (ԱՍ 111), *լեսրներ* (ԱՍ 130), *կոծիծներ* (ԲՍ 122), *կտրճներ* (ԱՍ 141), *համալներ* (ԲՍ 107), *մորհամներ* (ԱՍ 193), *շարապներ* (ԱՍ 121), *շարպաթներ* (ԲՍ 125), *պալտրներ* (ԲՍ 107), *տամարներ* (ԲՍ 77), *տղայկներ* (ԱՍ 101), *փեհկներ* (ԲՍ 107) և այլն:

Գործածությամբ հաճախականությամբ աչքի է ընկնում նաև **ունք** հոգնակերտը, ինչպես՝ *երիկամունք* (ԱՍ 151), *թիկունք* (ԲՍ 102), *խևունք* (ԱՍ 232), *մատունք* (ԱՍ 155), *մկունք* (ԲՍ 71), *շարժունք* (ԱՍ 88), *որդունք* (ԱՍ 170), *պոկունք* (ԱՍ 171), *պատահունք* (ԱՍ 87), *ցաւունք* (ԱՍ 228) և այլն:

Մյուս հոգնակերտները ավելի քիչ են հանդիպում, ամեն մեկով կազմվել է մեկ-երկու բառ. *ճիճուրիք* (ԱՍ 112), *մարդիք* (ԱՍ 105), *նմանիք* (ԱՍ 93), *տեղիք* (ԱՍ 93), *քաղցրիք* (ԱՍ 152)

(*իք*), *դեղրանք* (ԲՄ 111) (*անք*), *այսոնք* (ԱՄ 108) (*ոնք*), *ծակտիք* (ԱՄ 92) (*տիք*), *ոտնվեր* (ԱՄ 130) (*վեր*), *իրվնի* (ԱՄ 230) (*վնի*):

Միջին հայերենին և բարբառների բնորոշ *վի* հոգնակերտը¹⁷, որ հայտնի է որպես մարմնի գույգ անդամներ նշանակող, բժշկարաններում կիրառվել է չորս անգամ միայն. *աչվի* (ԲՄ 87), *երեսվի* (ԱՄ 101), *յոտվի* (ԲՄ 65), *իրվի* (ԱՄ 88) օրինակներով: Կարելի է ասել, որ *վի*-ն այստեղ կանոնական գործածություն չունի. մանավանդ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ տվյալ բառերը ավելի հաճախ մյուս հոգնակերտներով են հանդիպում, ինչպես *աչք* (ԲՄ 76), *երեսնի* (ԲՄ 88), *իրք* (ԱՄ 87), *ոտք* (ԱՄ 99):

Ինչ վերաբերում է հոգնակերտների գուգաձևություններին, ապա դրանք բժշկարաններում այնքան էլ հաճախական չեն: Հիմնականում հանդիպում են *նի* / *ներ* - *բժշկնի* (ԱՄ 109) - *բժիշկներ* (ԱՄ 111), *պալտրնի* (ԲՄ 103) - *պալտրներ* (ԲՄ 107), *շարապնի* (ԱՄ 139) - *շարապնի* (ԱՄ 121), ավելի սակավ՝ *ք* / *նի* - *նշանք* (ԱՄ 139) - *նշաննի* (ԱՄ 115), *ք* / *եր* / *ունք* - *ցաւ* (ԱՄ 160) - *ցաւեր* (ԱՄ 91) - *ցաւունք* (ԱՄ 229), *եր* / *անք* / *ունք* - *դեղեր* (ԱՄ 87) - *դեղրանք* (ԲՄ 111) - *դեղարունք* (ԱՄ 227):

Նույնպիսի կազմության հարցում, ինչպես գիտենք, միջին հայերենում արդեն նկատելի է ձևային ընդհանրացում, սեռական -տրական հոլովների նույնացում, պահպանվում են միայն գրաբարի *զ* և *ի* նախդիրները, առաջինը՝ որոշյալ հայցականի, իսկ երկրորդը՝ բացառականի համար: Ինչպես արդեն նշվել է հոլովման տիպերին անդրադառնալիս, սեռական-տրական հոլովի հիմնական վերջավորությունը *ի*-ն է, ապա նաև *ու*-ն, *ո*-ն, *ան*-ը:

Այլ է պատկերը հոգնակի սեռականի դեպքում: 17-րդ դ. բժշկարաններում լիովին արտացոլվել են միջին հայերենի հոգնակի թվի սեռական-տրականի առանձնահատկությունները:

¹⁷ *Վի* հոգնակերտի մասին տե՛ս Գ. Ջահուկյան, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, Ե., 1959, էջ 140:

րը. այն է՝ նկատելի է հոլովաթվանիշ թեքույթների առատություն և բազմազանություն: Կիրառվել են հոգնակի սեռականի երեք թեքույթներ.

1. Գրաբարյան թեքույթներ (*աց, ոց, ուց*), որոնք համադրականորեն արտահայտում են թվի և հոլովի իմաստը: Նկատենք, որ բժշկարաններում ավելի շատ կիրառվել են հենց սրանք: Եթե եզակիում սեռականի հիմնական հոլովիչը *ի*-ն է, ապա հոգնակիում գոյականների զգալի մասը հոլովվում է *աց*-ով, ինչպես՝ *աչաց* (ԲՄ 76), *բժշկապետաց* (ԱՍ 129), *դիհաց* (ԱՍ 158), *երկկամաց* (ԱՍ 124), *խելաց* (ԲՄ 66), *հիւանդաց* (ԱՍ 180), *ձագաց* (ԱՍ 176), *մրգաց* (ԲՄ 73), *նստոտեղաց* (ԲՄ 122), *շնչահանաց* (ԱՍ 101), *պատճառաց* (ԱՍ 159), *ջաղջաց* (ԲՄ 81), *ռամկաց* (ԱՍ 189), *ստամոքաց* (ԱՍ 139), *տեղաց* (ԲՄ 68) և այլն: **Ոց** թեքույթով հոգնակի սեռական են կազմել հիմնականում *n* հոլովման պատկանող գոյականները, որոնք այնքան էլ շատ չեն, ինչպես՝ *անդամոց* (ԱՍ 91), *գրոց* (ԱՍ 205), *զօղուածոց* (ԱՍ 98), *խառնվածոց* (ԲՄ 79), *կշոռց* (ԱՍ 221), *կերակրոց* (ԲՄ 84), *հելլենացւոց* (ԱՍ 113), *հաւատոց* (ԲՄ 76), *ջոց* (ԱՍ 131), *ցաւոց* (ԱՍ 118) և այլն: **Ուց** թեքույթով արձանագրել ենք միայն *կովուց* (ԱՍ 137) ձևը, իսկ մյուս դեպքերում *ու* հոլովման գոյականները հոլովվել են միջին հայերենի նման, այսինքն՝ հոլովիչը ավելացել է աշխարհաբարյան *եր* հոգնակերտից հետո:

2. Միջին հայերենին բնորոշ երկբաղադրիչ թեքույթներ, որոնցից առաջինը արտահայտում է թվի, իսկ երկրորդը՝ հոլովի իմաստ: Այս դեպքում թեքույթները կազմվում են միջինհայերենյան հոգնակերտին ավելացնելով *ու* կամ *ոյ* հոլովիչը (եր+ոյ, եր+ու, նի+ ոյ, եր+ի): Ինչպես արդեն նշեցինք, **եր+ ու** թեքույթով նախ և առաջ հոլովվել են *ու* հոլովման գոյականները, ինչպես՝ *դեղերու* (ԱՍ 130), *ծակերու* (ԱՍ 91), *ցաւերու* (ԱՍ 113): Մյուս դեպքերում որևէ օրինաչափություն չի գործում, մանավանդ որ միևնույն գոյականները զուգահեռաբար գործածվել են *երու* և *երոյ* թեքույթներով, ինչպես՝ *ազգերոյ* (ԱՍ 147), *դեղերոյ* (ԱՍ

113), *խոցերոյ* (ԱՍ 155), *պատերոյ* (ԱՍ 230), *ջղերու* (ԱՍ 140), *ջերմերու* (ԲՄ 78), *տակերու* (ԱՍ 151), *ցավերոյ* (ԲՄ 124) և այլն:

Բազմազան կոյականների դեպքում կիրառվել է *ներ+ ու* թեքույթը, ինչպես՝ *կտրճներու* (ԱՍ 141), *մորհամներու* (ԱՍ 193), *պոկներու* (ԱՍ 72), *տղայկներու* (ԱՍ 101) և այլն: Հոգնակի սեռական-տրականի այս ձևերը, ինչպես գիտենք, բնորոշ են արևմտահայերենին, իսկ արևելահայերենին բնորոշ էր *եր+ի* ձևը բժշկարաններում ավելի սակավ է հանդիպում, ինչպես՝ *կայծերին* (ԱՍ 150), *ջղերի* (ԱՍ 230), *սամղերիս* (ԱՍ 224):

Հաճախ են հանդիպում *նի* հոգնակերտով և *ու* կամ *ոյ* հոլովիչով հոլովվող կոյականներ, ինչպես՝ *երկնուն* (ԱՍ 99), *ելընդնոյ* (ԱՍ 213), *ծարուրնու* (ԱՍ 190), *պատճառնոյս* (ԱՍ 87), *քամրասնոյ* (ԱՍ 154) և այլն:

3. Թեքույթներ, որոնք կազմվել են միջինհայերենյան հոգնակերտով և գրաբարյան հոլովիչով (եր+աց/ոց/ուց): Այս տեսակը սակավ է հանդիպում. ուշագրավ է, որ միևնույն *դեղ* կոյականը բժշկարաններում հոլովվել է հոգնակի սեռականի երեք ձևով՝ *դեղերաց* (ԱՍ 209), *դեղերանց* (ԱՍ 116), *դեղերուց* (ԱՍ 229):

Անդրադառնանք նաև գրաբարյան *եաց* թեքույթին, որով գրաբարում հոգնակի սեռական են կազմել խառն հոլովումների (*ի-ա, ո-ա*) կոյականները: *Իք*-ով վերջավորվող բառերի դեպքում բժշկարաններում երբեմն նկատելի է այդ ձևը, ինչպես՝ *բաղանեաց* (ԱՍ 231), *ընտանեաց* (ԱՍ 115), ըստ *կարեաց* (ԱՍ 201), *չարեաց* (ԱՍ 185): Ըստ Յ. Կարստի՝ այս կոյականները միօրինակացման օրենքի ճնշման տակ միացել են *ի* վերջավորությամբ բառերին՝ վերցնելով վերջիններիս հոգնակի սեռականի *եաց* ձևը, որն էլ դարձել է *եց*¹⁸: Նշված բժշկարաններում տվյալ բառերը հիմնականում հանդիպում են *եց հնչյունափոխված ձևով, ինչպես՝ աղեց, բաղնեց, կարեց, շլնեց*: Այդպիսով՝ կարելի է ասել, որ վերջիններիս համար *եց*-ը ամրա-

¹⁸ Տե՛ս **Յ. Կարստ**, նշվ. աշխ., էջ 206:

գրվել է իբրև սեռականի և դրանից կազմվող բացառականի ցուցիչ:

Ճիշտ է նկատվել նաև, որ *եց* թեքությամբ ձևերը ավելի շատ հանդիպում են եզակիի իմաստով¹⁹: Պատճառն այն է, որ տվյալ բառերը՝ *բաղնիք, կարիք, շինիք, չարիք* հիմնականում գրաբարի անեզականներն են, որոնք հոգնակիաձև են հոլովվում, բայց արտահայտում են եզակիի իմաստը. «Նշանն այն է, որ երեսն կարմիր լինի, *շինեց* և բազկին երակն ի լի լինի» (ԲՄ 60): «...բ/2/ տամար կա, որ *ի շինեցն* բ./2/ դիհեն երթա» (ԲՄ 106): «Եւ երբ *ի բաղնեցն* ելնէ, սակավ գինի խմէ» (ԱՄ 169): «Պատճառն այն է, որ տաքնա և քրտնի կամ *ի բաղնեցն ելնէ* և պաղ ջուր խմէ» (ԲՄ 85): «Յերբ պիտենայ տուր *քստ կարեցն* հիվանդին և օգտէ» (ԱՄ 127): Թերևս բացառություն է կազմում *աղեց* ձևը, որ միանշանակորեն կիրառվում է հոգնակիի իմաստով. «Նշանն այն է, որ ի ներսէն *աղեց* սկրտուք գա» (ԲՄ 96): «...որ օգտէ տալախին ցավուն և *աղեց* գաներուն» (ԱՄ 172): «Եւ որ սունկ չունենայ և արին երթայ այնոր պատճառն *աղեցն* երկնին բացւելուն լինի» (ԲՄ 123):

Բացառական հոլովը, ինչպես միջին հայերենում, առհասարակ աչքի է ընկնում հոլովակազմիչների առատությամբ, և հնարավոր չէ այս հոլովի կազմության հարցում գտնել որևէ օրինաչափություն, մանավանդ միննույն բառը կարող է գործածվել մի քանի վերջավորություններով՝ ունենալով և՛ նախդրավոր և՛ աննախդիր ձևեր²⁰:

Եզակի բացառականը հիմնականում կազմվում է *ի* նախդրով և *է* հոլովակազմիչով (*յարենէ* (ԲՄ 101), *ի դուրսէն* (ԱՄ 102), *ի լինտէն* (ԱՄ 179), *ի կերակրէն* (ԱՄ 115), *ի ներսէ* (ԲՄ 92), *ի շարժմանէն* (ԱՄ 88), *ի պաղէ* (ԲՄ 95), *ի սնկէն* (ԲՄ 124)), կամ միայն հոլովակազմիչով (*բլղամէ* (ԱՄ 228), *դախիրայէն* (ԲՄ 92),

¹⁹ Է. Մկրտչյան, *Աշխարհաբարի գրական տարրերը միջնադարի գրական հուշարձաններում*, Ե., 1980, էջ 123:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 119-120:

գախմէն (ԲՄ 110), լուծմանէն (ԱՍ 89), կերակրէն (ԲՄ 125), կնկանէ (ԱՍ 225), հիմնէն (ԱՍ 204), ձկնէ (ԱՍ 225), սրութենէ (ԲՄ 105), ուռեցնէ (ԲՄ 92), վաղվնէ (ԱՍ 154): Բացի այս ընդհանրական ձևերից, բացառականը հանդէս է գալիս նաև միայն *ի* նախդրով և սեռական-տրականի թեքույթներով՝ առանց հոլովակազմիչի, ինչպէս՝ *ի գինոյ, ի մսոյ* (ԱՍ 115), *ի ցրտոյ* (ՍՍ 140), *ի գլխացավու* (ԲՄ 105), *ի յոսկրացավու* (ԲՄ 60), *ի բաղնեց* (ԱՍ 169), *ի շլնեց* (ԱՍ 106): Առավել ուշագրավ են բացառականի՝ եզակի իմաստով աննախդիր կիրառությունները *աց, ից, ոց, ուց և եց* թեքույթների հետ: Այս դեպքում բացառականը ձևով նույնանում է սեռական-տրականին, և միայն իմաստից է երեւում հոլովական պատկանելությունը. ինչպէս՝ Պատճառն *այնկից* լինի, որ ... ի տղաբերքն ջուր շատ կու խմէ (ԲՄ 101): ...և փորոքն անկանի, նա *անտից* ընծայի զուսկն (ԱՍ 103): Որ ի ջղերն ցաւ կենայ, եթէ ի ցրտոյ և եթէ *զարկուց* (ԱՍ 140):

Ըստ Գ. Ջահուկյանի՝ հոգնակի ձևերը որպէս եզակի ըմբռնելու համար հիմք են ստեղծել գրաբարի անեզական բառերը, որոնց բացառականի *ից*-ը սկսել է ըմբռնվել իբրև եզակի բացառականի վերջավորություն²¹: Այսպիսով՝ հենց այս շրջանում արդեն կարելի է փաստել աշխարհաբարի բացառականի *ից* հոլովակազմիչի առկայությունը:

Հոգնակի բացառականը իր կազմությամբ նմանվում է հոգնակի սեռական-տրականին. վերջինս կազմվում է հոգնակի սեռականի *աց, ից, ոց, ուց, նան եց* թեքույթներով, իսկ հոլովակազմիչի դեր է կատարում *ի* նախդիրը, ինչպէս՝ *ի ծնողաց* (ԱՍ 111), *ի հիւանդաց* (ԱՍ 116), *ի շնչահանաց* (ԱՍ 101), *ի տեղացն* (ԱՍ 90), *ի սալուց* (ԲՄ 100), *ի դրուց* (ԱՍ 100), *ի մաղձից* (ԱՍ 111), *ի նեարդից* (ԱՍ 131), *ի յտիցն* (ԲՄ 106), *յաղեց* (ԱՍ 126): Առանձին դեպքերում նկատելի են նաև *կրկնակ հոլովման*²²

²¹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 135:

²² Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Զ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. III, Ե., 1957, էջ 852-856:

(կրկնակի բացառականով, այն է՝ սեռական-տրականի հոլովակազմիչ + է), կիրառություններ, ինչպես՝ *ի դրուցէ* (ԱՍ 136), *ի կրծոցէն* (ԱՍ 138), *ի տեղացէն* (ԱՍ 93), *ի տղակուցէ* (ԱՍ 122):

17-րդ դ. բժշկարանների քննությամբ հստակ կարելի է ասել, որ գործիական հոլովի թեքություններից (աւ, իւ, ով, ու ամբ, երբ) տարբեր հոլովման պատկանող բառերի համար արդեն իբրև գործիականի հոլովակազմիչ ընդհանրացել է աշխարհաբարի **ով**-ը, ինչպես՝ *աղով* (ԲՍ 117), *բամբկով* (ԱՍ 168), *եղով* (ԲՍ 124), *ըղնկով* (ԱՍ 194), *թթովով* (ԲՍ 125), *կամով* (ԲՍ 105), *հուկնայով* (ԲՍ 100), *ճերմկուցով* (ԲՍ 111), *մշկով* (ԱՍ 221), *շարապով* (ԲՍ 93), *պարզուտով* (ԱՍ 136), *սերմով* (ԱՍ 232), *տարշինով* (ԲՍ 98) և այլն:

Ով-ի հաղթանակը (ընդգծումը մերն է) Աճառյանը բացատրում է նրանով, որ այն ամենից լավ է զուգորդվում *ւ-ի* հետ²³: Գործիականի **ամբ** թեքությոն էլ ընդհանրացել է *-ութիւն* վերջավորությամբ *ա* ներքին հոլովման պատկանող բառերի համար (*անուշութեամբ*, *կուսութեամբ*, *շարժելութեամբ*, *ողորմութեամբ*, *օգնութեամբ*), որոնք աշխարհաբարում ևս *ամբ*-ով են թեքվում: Առանձին դեպքերում միայն կիրառվել են նաև *աւ* և *իւ* վերջավորություններով գրաբարյան հետևյալ ձևերը. *ղիւրաւ* (ԲՍ 89), *ժամանակաւ* (ԲՍ 123), *կամաւ* (ԱՍ 107), *ձեռաւ* (ԲՍ 100), *ճաւաւ* (ԲՍ 103), *բանիւ* (ԱՍ 116), *մարդիւ* (ԱՍ 88), *պատճառիւ* (ԱՍ 117), *փորձիւ* (ԲՍ 68), *քացախիւ* (ԱՍ 135):

Հոգնակի գործիականը հիմնականում գործածվել է *եր* և *նի* հոգնակերտներով ու *ով* հոլովակազմիչով (*դեղերով* (ԲՍ 90), *ձիթերով* (ԱՍ 211), *ճղերով* (ԱՍ 199), *տերևնով* (ԲՍ 118)), թեև կիրառվել են նաև *օք* վերջավորությամբ բառեր, ինչպես՝ *դիւօք* (ԱՍ 131), *իրօք* (ԱՍ 115), *կամօք* (ԲՍ 121), *հնտանօք* (ԱՍ 211), *ձեռօք* (ԱՍ 99), *նշանօքն* (ԱՍ 120), *ջանօք* (ԱՍ 117):

Բժշկարաններում զգալի հետաքրքրություն են ներկայացնում ներգոյական հոլովի կիրառությունները: Ներգոյականի

²³ **Հ. Աճառյան**, *նշվ.աշխ.*, էջ 527:

իմաստը հավասարապես արտահայտվում է ինչպես գրաբարաձև (*ի նախդիրը* և՛ եզակիի, և՛ հոգնակիի դեպքում դրվում է հայցականի հետ (ի բաղնիսն, ի դանոնն, ի բուշտն)), այնպես էլ աշխարհաբարին բնորոշ *ուս* հոլովակազմիչով, ինչպես՝ *այսամբումն* (ԱՍ 230), *գինումն* (ԱՍ 224), *մաղանումն* (ԱՍ 189), *ոտքերումն*, *ջղերումն*, *միքումն* (ԱՍ 230): Ներգոյականի իմաստ արտահայտելու միջոց է նաև *մեջ* կապը սեռական հոլովի հետ (ի մեջն ծովու (ԱՍ 196), ի մեջ աղեցն (ԱՍ 98)): Տարածված է հատկապես դասական թվականների ներգոյականական կազմությունը *ուս* վերջավորությամբ, ինչպես՝ *երկրորդումն* օրն (ԱՍ 116), *չորրորդումն* օրն (ԱՍ 217), *վեցերորդում* (ԱՍ 218): Այս կազմությամբ ներգոյականի ձևեր վկայվել են 12-13 դդ. հիշատակարաններում և վիմագիր արձանագրություններում²⁴:

Այսպիսով՝ ուշ միջնադարի բժշկարաններում դրսևորվել են աշխարհաբարի հոլովման համակարգի գրեթե բոլոր առանձնահատկությունները, որն էլ փաստում է, որ դրանք արդեն սկսում են ընդհանրանալ և կայունանալ:

Tadevosyan Hasmik - Manifestation of Declension Features in the Medical Books of the Late Middle Ages. - This article investigates the declension features of the late middle ages' medical books (Asar and Buniat Sebastatsi). The special attention is paid to forms which are characteristic for ashkharabar. There are represented features drawing up of types of declension, plural endings and case forms.

Тадевосян Асмик - Проявление особенностей склонения ашхарабара в лечебниках позднего средневековья. - В статье рассматриваются особенности склонения существительных в текстах лечебников (Асара и Буниата Себастаци) позднего средневековья. Особое внимание уделяется формам, которые характерны для ашхарабара. Представляются особенности типов склонений, окончаний множественного числа и падежных форм.

²⁴ Է. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 137:

Հովհաննիսյան Մերի
(Երևանի պետական համալսարան)

**ԼԵԶՎԻ ՀԱՐՑԵՐԸ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ
ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԵՎ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ**

Հայ գրական լեզվի հարցերը մշտապես մտահոգել են Վահան Տերյանին: Բանաստեղծի տեսակետները լեզվական հարցերի վերաբերյալ արտահայտված են հոդվածներում («Հոգևոր Հայաստան», «Ալեքսանդր Օստրոյան», «Անունը կա, ամանումը չկա», «Արջի ծառայություն», «Մի բացատրություն»), նամակներում և Հովհաննես Հովհաննիսյանի ու հայ բանաստեղծության լեզվի հարցերին նվիրված երկու զեկուցումներում*, ինչպես նաև 1914 թ. կարդացած «Հայ գրականության գալիք օրը» հայտնի զեկուցման մեջ:

Լեզվի վերաբերյալ բանաստեղծի տեսակետները ներառում են հարցերի հետևյալ շրջանակը. ա. գրական լեզվի դերը, գործածության ոլորտներն ու մշակման ուղիները, բ. լեզվի «կենտրոնացման» հարցը, այսինքն՝ գրական լեզուն գործածելի դարձնելու և կանոնավորելու խնդիրը, գ. օտարախոսության հաղթահարումը՝ որպես լեզվի զարգացման կարևոր գործոն, դ. բանաստեղծի դիրքորոշումը փոխառությունների վերաբերյալ:

Տերյանն ամենից առաջ մտահոգվել է հայ գրականության գալիք օրով, ուղիներ փնտրել գրական լեզվի զարգացման ու «վերելքի» համար: Ըստ բանաստեղծի՝ գրականության զարգացումը պայմանավորված է ոչ միայն համամարդկային գաղափարների ու հույզերի արտացոլմամբ, այլև բարձր մշակման հասած գրական լեզվով:

*Նշված զեկուցումների բնագրերը չեն պահպանվել, դրանց բովանդակության սեղմ շարադրանքը ներկայացրել է Պ. Մակինցյանը և տպագրել «Մշակ» թերթում (Թիֆլիս, 1917, N 26):

Տերյանի զեկուցումներից ու նամակներից պարզ է դառնում, որ բանաստեղծն ունեցել է գեղարվեստական գրականության ու մշակույթի զարգացման գործում ազգային լեզվի նշանակության խորը և հստակ ըմբռնում: Նա ազգային լեզվի դերն ու նրա մշակման ուղին համարել է գրականության զարգացման բոլոր գործոններից ամենակարևորը, քանի որ լեզուն ազգային մշակույթի ամենագորեղ գործոնն է: «Կուլտուրականության առաջին պայմանը զարգացած, հարուստ և ճկուն լեզուն է: Շքեղ շենքերը, պալատներն ու տաճարները այնքան ցայտուն կերպով չեն ցուլացնում ժողովրդի կուլտուրան, որքան լեզուն»²⁵,– գրում է բանաստեղծը: Նա համոզված է, որ «լեզուն ժողովրդի հոգու, բնավորության արտահայտիչն է»²⁶, նաև՝ «լեզուն կուլտուրայի ամենագորեղ մղիչն է, մարդու ամենահավատարիմ ու անդավաճան մխիթարիչն ու սփոփիչը անխոս բնության, անբարբառ տիեզերքի առջև»²⁷:

Որոշակի տարբերակում մտցնելով *գրական լեզու*, *զեղարվեստական գրականության լեզու*, *գիտության լեզու*, *բարբառ* և այլ անվանումների ու հասկացությունների միջև բանաստեղծը տարորոշում է հայ գեղարվեստական գրականության արևելյան ճյուղի լեզվական մշակույթի երկու հիմնական ուղղությունները. «Մյուս կողմից մեր ռուսահայ կամ արևելյան լեզուն առաջ է գնացել երկու շավղով, երկու ճյուղավորությամբ՝ մի կողմից դա այն լեզուն է, որ դարձել է մեր մամուլի այժմյան լեզուն, այլ խոսքով՝ մեր գրական լեզուն, մյուս կողմից՝ այն լեզուն, որ գործածել են Աբովյանը, և հետո Պռոշյանը, Աղայանը և Թումանյանը»²⁸: Ալ. Ծատուրյանի մասին գրած հոդվածում ևս Տերյանը խոսում է լեզվամշակման այդ երկու հակադիր ուղղությունների մասին՝ այս դեպքում ոչ թե լեզուն, այլ գեղար-

²⁵ Վ. Տերյան, *Երկերի ժողովածու*, հ. 2, Ե., 1961, էջ 282:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում, էջ 381:

²⁸ Նույն տեղում, էջ 284:

վեստական գրականությունը նկատի ունենալով. «Մեր գրականությունը առաջ է գնացել երկու ուղղությամբ՝ Արևմտյան-Պռուշյան-Ադայան-Թումանյան-Իսահակյան և Նազարյան-Նալբանդյան-Շահազիզ-Պատկանյան-Ծատուրյան: Մեկի մեջ իշխում է ժողովրդական ոգին, մյուսը ստեղծում է մեր գրական լեզուն ընտրած մի միջին ճանապարհի գրաբարի ու ժողովրդական բարբառների միջև»²⁹: Բանաստեղծն իրավացիորեն նկատում է, որ այդ երկու ճյուղավորումներից մեկը դարձել է մամուլի, գրագրության լեզուն, իսկ մյուսը կիրառվել է գլխավորապես գեղարվեստական ստեղծագործությունների լեզվում: Իսկ լեզվի երկփեղկման պատճառ Տերյանը համարել է այն, որ մեր գրողները երբեմն հակում են ցուցաբերել դեպի գրաբարը կամ բարբառները: Ստեղծված իրավիճակը խոչընդոտել է հայ գրական լեզվի կանոնավորումն ու զարգացումը:

Մինչև 19-րդ դ. կեսերը հայ գրական լեզուն չի կիրառվել գեղարվեստական գրականության մեջ, քանի որ «չի ունեցել զարգացման կանոնավոր հուն»: 19-րդ դ. երկրորդ կեսից սկսած՝ հայ նոր գրական լեզուն սկսել է զարգացում ապրել: Գրական լեզվի զարգացման գործում, ըստ Տերյանի, մղիչ գործոն եղել է ոչ թե գեղարվեստական գրականությունը, այլ գաղութահայ պարբերական մամուլն ու դպրոցները: Ահա թե ինչու է հայ մամուլի լեզուն բանաստեղծը համարում գրական լեզուն՝ նրան հակադրելով լեզվական մշակույթի այն ուղղությունը, որը լիովին առնչվում էր գեղարվեստական գրականության ստեղծմանը: Դրա համար էլ գրական լեզվի ժողովրդայնացման ուղղությունը շեղում էր գրական լեզվի արհեստական ու հռետորական բնույթի դեմ:

Տերյանն անդրադառնում է հայ գրական լեզվի մշակման երկու ուղղությունների թերություններին ու արժանիքներին: Բարձր գնահատելով լեզվամշակման հակադիր ուղղության ներկայացուցիչներին՝ բանաստեղծը միաժամանակ *ան-*

²⁹ Նույն տեղում, էջ 239:

կենդան, կիսամեռ և այլ որակումներ է տալիս լեզվական հյուսիսափայլյան ուղղությանը, որի ներկայացուցիչն էր համարում իրեն³⁰: Այդ լեզվի մեջ հենց պատկերավորության պական էլ ամենայն հավանականությամբ չէր բավարարել Պոռշյանին, Ադայանին, Սունդուկյանին. «Եվ շատ հասկանալի է, որ Սունդուկյանի նման մի անգուգական տաղանդ պետք է նկատեր, որ դրամայի ասպարեզում, թատրոնում այդ Նազարյան-Շահազիզյան լեզուն անկիրառելի է, անթույլատրելի, անհնար: Որովհետև ոչ մի տեղ այնքան աչքի չի ընկնում լեզվի մեռածությունը, որքան թատրոնում և այն կենցաղագրական –նատուրալիստական թատրոնում: Մյուս կողմից նույնը պիտի զգար և՛ Ադայանը, և՛ Պոռշյանը ժողովրդական կենդանի կենցաղին մոտենալիս»³¹:

Նոր գրական լեզվին նման որակումներ տալիս էր նաև Թումանյանը. «Էս լեզուն աղքատ, չոր ու ցամաք բառերի մի տերողորմյա է, անոճ ու անկենդան»³²: Եթե գրական լեզվի գնահատման հարցում Տեքյանի ու Թումանյանի կարծիքները համընկնում էին, ապա գրողների կարծիքները՝ գրական լեզվի զարգացման հեռանկարների վերաբերյալ, տարբերվում էին: Ի տարբերություն Թումանյանի՝ Տեքյանը համոզված էր, որ լեզվամշակման Աբովյան – Պոռշյան – Սունդուկյան – Թումանյան ուղղությունը, որքան էլ պատկերավոր լիներ, չէր կարող հաղթել Նազարյան – Շահազիզ – Հովհաննիսյան – Ծատուրյան ուղղությանը: Պատմական զարգացման հետևանքով հայ նոր գրական լեզու էր դարձել ոչ թե «կենդանի ու բնական», այլ «արվեստական», «անկենդան ու շինծու» լեզուն: Գաղութային, անկենդան լեզվի հաղթանակի գլխավոր գործոնը պայմանավորված էր այդ լեզվի համընդհանուր ու հասկանալի լինելով: «Լեզուն զարգանում է ազատ և չի կամենում հպատակվել լեզվաբաննե-

³⁰ Վ. Տեքյան, *Երկերի ժողովածու*, հ. 2, էջ 285:

³¹ Նույն տեղում:

³² Զ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, հ. 4, Ե., 1951, էջ 142:

րին պեղած հին օրենքներին և օրինակներին»³³, – գրում է Տերյանը: Բանաստեղծը հայ գրականության գալիք օրը պատկերացնում էր համամարդկային գաղափարներով ու հույզերով, «լայն ճանապարհի լեզվի» բարձրարվեստ գեղարվեստական մշակմամբ, որը պետք է նոր կյանք տար անկենդան լեզվին:

Տերյանը հայ գրականության գեղարվեստական վերելքի համար անհրաժեշտ երկու հանգամանք էր կարևորում՝ «ագգային կճեպից» դուրս եկած, համամարդկային հույզեր ու գաղափարներ արտահայտող գրականություն և մշակված, զարգացած գրական լեզու: Պատմական յուրաքանչյուր դարաշրջան թելադրում է կյանքն արտացոլելու իր սկզբունքներն ու չափանիշները, ուստի նպաստավոր չէր ժամանակի ռուս և եվրոպական գրականության բուռն որոնումների տեսադաշտում հայացքը ուղղել նախորդ շրջանի «գավառական» կամ «կիսագյուղացիական» գրականությանը: Անհրաժեշտ էր հաղորդակից լինել աշխարհի բարձրարվեստ մշակույթներին և հայ գրականությունը դուրս բերել շրջագծված գրական ավանդույթների կաղապարներից, մոտեցնել ժամանակակից մարդուն ու մտածողությանը: Ինչպես նշում է 20-րդ դ. հայ գրական–քննադատական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Հ. Օշականը, Տերյանն «առանց ցոյցի շեղեցաւ մեծերին սիրելի ավանդութիւններէն» և «բարեշրջեց» արևելահայ բանաստեղծության ընթացքը³⁴: Պատահական չէ, որ Թումանյանի նման մեծությունը արևելահայ չափածոյի լեզվի զարգացման երրորդ փուլի հիմնադիր էր համարում ոչ թե իրեն կամ Իսահակյանին, այլ Տերյանին: Բանաստեղծի քնարերգության՝ իբրև իր ժամանակի գլխավոր ապրումների ու դիմապատկերի ըմբռնումն էր Թումանյանին թելադրում արևելահայ բանարվեստի պատմության մեջ տերյանա-

³³ Վ. Տերյան, *նշվ. աշխ.*, 2, էջ 289:

³⁴ Յ. Օշական, *Արևելահայ դեմքեր*, Պէյրուֆ, 1999, էջ 217:

կան շրջանն առանձնացնել իբրև նոր սկիզբ³⁵:

Տերյանական լեզվի երևան գալով՝ լեզվամշակման ժողովրդական ուղղությունը տեղի տվեց: «Այն չմահացավ, իհարկե,– գրում է Ռ. Իշխանյանը,– բայց Տերյանի հանդես գալով վճռվեց «ով ումի» հարցը. արևելահայոց բանաստեղծության մեջ և առհասարակ գեղարվեստական խոսքում վերջնական ու բացարձակ գերիշխանությունն անցավ զուտ գրական լեզվին»³⁶:

Հայերենի ավանդական բառաշինության ու Մխիթարյանների կատարած գործի նկատմամբ Տերյանը դրսևորում է քննադատական վերաբերմունք: Գրողը ընդգծում է «լեզվի եվրոպականացման» անհրաժեշտությունը, այսինքն՝ «եվրոպական բառերի» առատ մուտքը հայերեն, պետք է փոխառություններ կատարել տարբեր լեզուներից՝ «ստեղծագործական» լեզվի օգնությամբ յուրացնելով և ընդունելով դրանք: Այս առումով նա քննադատում է Մխիթարյանների գործունեությունը. «Նրանք օտար բառը թարգմանում են կամ տեղը մի նոր, ինչպես իրենք են ասում, ավելի հայաշունչ բառ են թխում: Վելոսիպեդին ասում են հեծանիվ, ինտելիգենցիային՝ մտավորականություն, սոցիոլոգիային՝ ընկերաբանություն, ֆիլոսոֆիային՝ իմաստասիրություն, պալատոյին՝ վերարկու, գալոշին՝ կրկնակոշիկ, փեչին՝ վառարան, տրամվային՝ էլեկտրաքարշ և այլն: Այդ ձևը սխալ է ոչ միայն նրա համար, որ «տրամվայ» բառը «էլեկտրաքարշ» բառից և՛ բարեհնչյուն է, և՛ դյուրըմբռնելի, այլև գլխավորապես նրա համար, որ այդպիսի սխալաստիկ ձևով ստեղծվում է մի շարք անկենդան, շինծու, անհասկանալի բառերի ու դարձվածքների, որոնք մեր լեզուն դժվարացնում են, դարձնում ավելի դժվար յուրացվող մի լեզու...»³⁷: Սակայն նշված տեսակետը բանաստեղծը չկիրառեց

³⁵ **Հ. Թումանյան**, Երկերի ժող. 6 հատորով, հ. 4, Քննադատություն և հրապարակախոսություն (1892 -1921), Ե., 1951, էջ 381:

³⁶ **Ռ. Իշխանյան**, *Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն*, Ե., 1978, էջ 348-349:

³⁷ **Վ. Տերյան**, *Երկերի ժողովածու*, հ. 2, էջ 280:

իր ստեղծագործության մեջ: Դրա համար էլ Տերյանի խոսքարվեստը բառաշինության դասական օրինակ է, իսկ ռճական որոշակի արժեքով գործածվող նորաբանությունները գեղարվեստական խոսքի ու միջավայրի երանգավորման նպատակադրում ունեն:

Հայերենի զարգացման, պահպանման ճանապարհին Տերյանը լուրջ խոչընդոտ էր համարում հայ ժողովրդի մեջ խոր արմատներ գցած օտարախոսությունը: Նա մայրենիի պահպանումը համարում էր առօրյա գործելակերպ, լեզվի ամենօրյա բանավոր ու գրավոր գործածություն: Տերյանը բարոյական ու հասարակական աղետ է համարում, որ հայության մտավորականության զգալի մասը հայերեն չի խոսում: «Եթե «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ կարելի է որոշակի հանդուրժողականություն գտնել օտարախոս հայ մտավորականության նկատմամբ, ապա «Հոգևոր Հայաստանում» խստորեն քննադատվում է ազգային լեզվով չխոսող մտավորականությունը: Բանաստեղծը մերժում է օտարախոսության ամեն մի երևույթ: Տերյանը ոչ բնականոն է համարում անգամ՝ իր և ընկերների նամակագրությունը երբեմն հայերեն չէ, այլ դեպքերում խոսում է հայերեն չիմացող կանանց հայերեն սովորեցնելու մասին և այլն:

Ցուլակ Խանզադյանին հասցեագրած մի շարք նամակներում բանաստեղծը խիստ դժգոհություն է հայտնում, որ Խանզադյան ամուսինները իրենց երեխայի հետ հայերեն չեն խոսում. «Ձեր փոքրիկ դստերը բարև կանես և կասես, որ Վահան քեռին դժգոհ է, որ նա հայերեն չի բլբլացնում...»³⁸: Մեկ այլ նամակում, մտաբերելով Լազարյան ճեմարանի դաստիարակ Ալ. Ֆլինկի խոսքերը, գրում է. «Մտաբերում եմ սրիկա Ֆլինկի բառերը՝ «Խղճուկ ժողովուրդ էք, և ձեր լեզուն էլ խղճուկ է: Ո՛չ, լեզուն խղճուկ չէ, բայց մենք համենայն դեպս, իսկապես խղճուկ ժողովուրդ ենք»³⁹: Տերյանը, հայերենը համարելով ամենահարուստ

³⁸ Վ. Տերյան, *Երկերի ժողովածու*, հ. 3, Ե., 1963, էջ 305:

³⁹ Վ. Տերյան, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 452:

լեզուներից մեկն աշխարհում, իր ազգակիցներից շատերին խղճուկ էր համարում այդ պարզևի արժեքը չհասկանալու համար: Տերյանի կյանքից հայտնի են նաև ուրիշ դրվագներ, երբ նա բարոյական անկում է համարում ազգային լեզուն չկիրառելը: Հիշենք նաև այն հայտնի դեպքը, որ առիթ դարձավ «Չեմ դավաճանի իմ Նվարդին» ութնյակի գրությանը, ուր Արայի կնոջ՝ Նվարդի կերպարը խորհրդանշում է հայոց լեզուն:

Այսպիսին են եղել Վահան Տերյանի տեսակետները հայոց լեզվի դերի, նշանակության ու զարգացման հեռանկարների մասին, այն, ինչ էական է եղել բանաստեղծի համար, քանի որ, ինչպես փաստում է նա, լեզուն ազգի լինելության միակ գրավականն է, «լեզուն ազգի հոգին է. կենդանի է այդ հոգին, կենդանի է և ազգը. կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է և երկրորդը»⁴⁰:

Hovhannisyán Mary – The Problems of Language in the Articles and Letters of Teryan. - Teryan was constantly troubled about the issues of literary language, and in his letters and articles he expressed views on the great importance that national language had in the development of fiction and culture, as well as on the areas of usages and processing directions of literary language. It becomes clear from the reports and letters of Teryan, that he considered the role of national language and the path of its development to be the most important factor for the development of literature.

Оганнисян Мери – Языковые проблемы в статьях и письмах Теряна.- Проблемы литературного языка были постоянной заботой Теряна, и в своих письмах и статьях он высказал мнение о большом значении национального языка в развитии художественной литературы и культуры, а также о сферах использования и направлениях переработки литературного языка. Из писем и отчетов Теряна становится ясно, что он считал роль национального языка и путь его развития самым важным фактором развития литературы.

⁴⁰ Վ. Տերյան, *Երկերի ժողովածու*, էջ 290:

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ՄՇՈ ԲԱՐԲԱՌՈՒՄ*

Հայերենի զարգացման բոլոր փուլերում առկայացման քերականական կարգը նշույթային արտահայտություն ունի: Անորոշությունն ու որոշյալությունն արտահայտության պլանում ներկայանում են որոշակիորեն ընդգծված հակադրությամբ: Եթե որոշյալությունը ձևաբանորեն արտահայտվել է բառերի վերջում հոդեր ավելացնելով, ապա անորոշության իմաստը եղել է աննշույթ, զրո վերջավորությամբ⁴¹, սակայն, ինչպես կտեսնենք, նախաաշխարհաբարյան շրջանից սկսած՝ լայն տարածում է ստացել անորոշը նշույթավոր տարբերակով արտահայտելը նույնպես: Հայերենի զարգացման բոլոր փուլերում առկայացման քերականական կարգն արտահայտելուն ծառայել են **ս, դ, ն** հոդերը, որոնք, որպես արմատահնչյուններ, հանդես են գալիս նաև գրաբարյան **սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն** ցուցական դերանուններում: Մա ապացուցվում է ներքին վերականգնման այն օրինաչափությամբ, որ բազմիմաստ **ս, դ, ն** հոդերն անհրաժեշտության դեպքում կարող էին ստանալ անձնական, ցուցական, ստացական դերանունների

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

Միջին հայերենին վերաբերող լեզվական փաստերը հիմնականում տրվում են ըստ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության /հ. Բ, ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975/:

⁴¹ Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, էջ 205:

իմաստ և գործածվել՝ կա՛մ փոխարինելով համապատասխան դերանուններին, կա՛մ վերջիններիս հետ գուգահեռաբար⁴²:

Գոյականների առկայացման համակարգայնությունն արտացոլվում է նաև միջինհայերենյան լեզվական հուշարձաններում ու Մշո բարբառի տարաբնույթ լեզվանյութում՝ թե՛ զըրավոր, թե՛ կենդանի խոսքում: Գրաբարում որոշյալության իմաստը հիմնականում արտահայտվել է **և** հոդով. **ս**, **դ** հոդերն այս գործառույթով հանդես են եկել ավելի սահմանափակ կիրառությամբ: Միջին հայերենում ձևաիմաստային այս նմանօրինակությունը մասնակիորեն վերանում է: Ստացականության իմաստը սկսում է կապվել հիմնականում **ս**, **դ** հոդերի հետ, իսկ **և** հոդը ստանում է առաջին հերթին որոշյալություն արտահայտելու գործառույթ, թեև երկրորդաբար կարող է ունենալ ստացականության և ցուցականության իմաստ: Խիստ հազվադեպ **ս** կամ **դ** հոդերը կարող են կատարել որոշիչ հոդի գործառույթ, ինչպես՝ *Ով գեղեցիկ ի հաւերդ, էրնէկ ականջին, որ լսէ զբարի բարբառ քո*-ՎԱ-30 /դ-որոշիչ/: Բերենք հոդառության տարբեր դրսևորումներին վերաբերող օրինակներ միջին հայերենից՝ *մինչ որ վճարի պարտքերս, որ ի յիմ շալակս է կուսած* - Ֆր.-388 /ս-ստացական/, *տեսէք թե քանի մարդիք յաշխարհէս դարտակ մնացին*, -Ֆր.-434 /ս-ցուցական/, *աչերդ է ի ծով նըման, ուներդ՝ աղեղան լարման*-ԿԵ-156 /դ-ստացական/, *ես այդ աթոռոյդ տէրն եմ*-ԷՄԱ-114 /դ-ցուցական/, *թագաւոր մի կայր, աչուին էր խաժ*-ՆՇ-638 /ս-ստացական/, *ասեն իշխանքն և ճորտերն առ թագաւորն*-ՎԱ-211, *նոր տնկին գինին բնութեամբ այլ հով է, քան զհին այգւոյն*-ԳՎ-84 /ս որոշիչ հոդ/⁴³:

Միջին հայերենում և Մշո բարբառում տարբերակվում են ա/ որոշիչ, բ/ ստացական, գ/դիմորոշ, դ/ ցուցական հոդեր: Այս բոլոր իմաստային տարբերակումները որոշ չափով որոշյալության տարր են պարունակում և վերջին հաշվով ծառայում

⁴² Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, էջ 78:

⁴³ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, էջ 78-79:

են բառերի նշանակած առարկաների առկայացմանը⁴⁴: Ս. Բաղդասարյան-Թափալցյանի գնահատմամբ Մշո բարբառի որոշիչ հոդերն են **ն**-ն և **ը**-ն: **Ն** որոշիչ հոդը դրվում է ձայնավորով վերջացող բառերից հետո՝ **ճին, կադուն, լուն, գինին, Կառուն, քեռին** և այլն: Բարբառագետը **ը** որոշիչ հոդը ներկայացնում է բաղաձայնով վերջացող բառերի գործածություններով, որպես օրինակներ բերում **տունը, շունը, քաղաքը, գեղը, հերը, ախշարքը** բառերը: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, Մշո բարբառում **ը** հոդը տիպաբանորեն բացակայում է, քանի որ համակարգային է **ն**-ի գործածությունն անգամ բաղաձայնավերջ բառերում: Եթե **ը** հոդի գործածությունները կան էլ, ապա դրանք, ենթադրում ենք, **Արարատյան** բարբառի ազդեցությունն է, որում **ը** հոդը ներկայանում է առանց **ն**-ի գուգորդման: Ս.Բաղդասարյան-Թափալցյանը նույնպես նկատել է, որ Մշո բարբառում, երբ բառը վերջանում է բաղաձայնով, հաճախ **ն** որոշիչ հոդից առաջ բառին ավելանում է **ը** ձայնավորը, այսպես՝ **տունըն, շունըն, քաղաքըն, գեղըն, հերըն, ախշարքըն**, սակայն որևէ կերպ չի բացատրում դա: Հետագոտողը գրում է միայն՝ «Երբ որոշիչ **ը** հոդը ստացած բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, այն դեպքում **ը**-ն, հակառակ աշխարհաբարի, չի դառնում **ն**»⁴⁵, ասենք՝ *կընհզըն ըսէժ, կօվըն ուռավ* և այլն: Որպես բացատրություն է հիշատակում այն դեպքերը, երբ հաջորդող բառը **լէ**-ն է: Այդ դեպքում, ըստ Ս.Բաղդասարյան-Թափալցյանի, որոշյալ **ը** հոդին ավելանում է **ն**՝ *գերգու հացըն լէ կերավ, ըզճ ուրըն լէ խըմեց ու գընաց: գերգու ախպերըն լէ գճցին սաղաթ* և այլն: Ս. Բաղդասարյան-Թափալցյանը կար-

⁴⁴ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 184:

⁴⁵ Ս. Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1958, էջ 102:

ծես ընդունում է **ը** հոդի գոյությունը **և**-ի գուգորդմամբ: Մակայն հայերենում երկու հոդ համատեղ, նույն նշանակությամբ գործածվել չեն կարող: Ընդամենը կարելի է ասել, որ մինչ օրս Մշո բարբառում **և** հոդը բաղաձայնավերջ բառերի վերջում շարունակում է գործառել: Այն, որ Մշո բարբառում չկա **ը** հոդը, ժամանակին Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքի տվյալներով դիտարկել է նաև Քերոբ Մադաթյանը⁴⁶: Մշո բարբառն օրինաչափորեն և անաղարտորեն մինչ օրս պահպանել է հինհայերենյան հոդառությունը, քանի որ քերականական կարգերը տոկուն են և հեշտությամբ չեն փոփոխվում և ոչ մի լեզվում:

Մշո բարբառում ու նրա խոսվածքներում կան կիրառություններ, երբ գոյականը որոշիչ հոդ չի կրում: Նմանատիպ դրսևորումները բերում ենք ստորև. ա/ շատ հաճախ ենթական գործածվում է անհոդ՝ *Առշագ գ՛րնած գ՛էր, Ծաղիգ շընգավ գ՛էղին* և այլն, բ/ հանգման և մատուցման անուղղակի խնդիրները հոդ չեն ստանում այն դեպքում, երբ բառը հոգնակի թվում **օծ /ոց/** հոլովման է պատկանում. *գ՛օճիկներ բ՛աժնէճին գ՛էղածոժ, ճամպոտներ մօղէժան քաղկըժօժ*, գ/ թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող ուղիղ խնդիրը, դրվում է առանց որոշիչ հոդի՝ *Մարօն հած թըխէժ, ջ՛նոր բ՛էրէժ, օճխար կըտէժ, էրէխէն մօր շաղ զուգա* և այլն, դ/ ձայնավորով վերջացող անձնանուն ուղիղ խնդիրը գործածվում է առանց հոդի՝ *Մամվէլ գ՛ըրգէժ Վանօյ, զարգէժ Կարօյ, ծէճէժ Մարօյ* և այլն, ե/ առանց հոդի են գործածվում տրականով դրված նպատակի պարագան՝ *Մառան վագավ ջ՛ըրու* և այլն, զ/ ուղղական և տրական հոլովներով տեղի պարագաները, որոնք ներգոյական հոլովի իմաստ ունեն՝

⁴⁶ Ք. Մադաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, էջ 95-98:

Քօճօ արեւտանօծ գ'օնձիկ շաղ կա, դ'առպնօծ թազա փուկս ա դըրբաձ, գ'ադէն էգալ ճ'էոնէր ծօց և այլն: Մշո բարբառում ու նրա խոսվածքներում որոշիչ հոդը հաստատուն կիրառություն ունի: Վերոբերյալ անհոդ կիրառությունները ցույց են տալիս՝ այս քերականական կարգի ոչ համակարգվածությունը պայմանավորվում է նախորդ լեզվափուլերի հետ առնչություններով: Կարծում ենք՝ այսպիսի կիրառություններն արագախոսության հետևանք կարող են լինել:

Որոշյալությունն արտահայտելիս Մշո բարբառը երկու հնչյունական յուրահատկություն է հայտաբերում: Եթե հոդակիր բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, ապա **ն** հոդը արտասանվում է այդ ձայնավորի հետ, իսկ **ը**-ն ընկնում է՝ **քարըն կօղրալ**, բայց՝ **էձըն ուռալ /էձ նուռալ/**: Այս նույն օրինակափությունն է գործում նաև **հ**'-ից առաջ. **հ** խուլ հազագը դուրս է ընկնում, **ն** հոդին հաջորդում է ձայնավոր՝ **քար նընգալ**, այլ ոչ թե **քարըն հ 'ընգալ**: Թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում այն բառերը, որոնք բառավերջում ունեն **ա** ձայնավոր, **ն** հոդից առաջ հնչյունափոխվում են **է**-ի՝ **տղա >տղէն, փարա>փարէն, շըլապկա>շլապկէն, էրէխա>էրէխէն, փէսա>փէսէն** և այլն:

Որոշիչ հոդը միջին հայերենում գուրկ է հոլովատարբերակիչ գործառույթից, ձևաբանական մակարդակում դիրքային ոչ մի պայմանավորվածություն չունի և կարող է կցվել ցանկացած հոլովաձևի՝ եզակի, թե հոգնակի: Օրինակ՝ *կատարեցաւ լիճ ճորտերուն անսիզնին և իրաւներն*-ՄՄԱ-43 /հոգ. սեռ.-տր. և ուղղ./,*իւրեանք իւրեանց անձներովն և ըորգակովն*-ՎԼ-187 /հոգն. և եզ. գործ./,*մէկ մի ի զգայա-րանցն կամ չորս զգայարանքն*-Գր.-93 /հոգն. բաց. և ուղղ./,*գայն այգոյն գեղեցկութիւն* -ՎԱ-179 /եզ. սեռ.-տր./,*եւ թէ մի ոմն հանց նեղ և մութն տեղումն կենար*' *չէր ապրիլ*-ԱՕԲ-27 /եզ. ներգ./: Այս երևույթը Մշո բարբառում զգալի սահմանափակումներով է ներկայանում, քանի որ հոդերն առհասարակ կրց-

վում են բացառապես ուղղական-հայցական և տրական հոլովներին: Մակայն Մշո խոսվածքներում հանդիպում են կիրառություններ, երբ բացառական հոլովը **և** հոդ է ստանում՝ **չուրի յատուց տուն, բեռնիցքն բերեց, ախճըգա մառթիցքն լուր մի չիկա** և այլն:

Մշո բարբառում պատկանելություն արտահայտելիս մեծ կիրառություն ունեն ստացական դերանունները, սակայն շատ հաճախ գործադրվում են ստացական հոդերը, որոնք իրացվում են **ս, դ/տ, և** մասնիկներով: Ընդ որում, առաջին դեմքը ստանում է **ս /ի/- գիրքսի, գըրքերսի-գիրքս, գրքերս**, երկրորդ դեմքը՝ **դ/տ/ի/- գիրքտի, գըրքերտի-գիրքդ, գրքերդ**, երրորդը՝ **ն՝ գիրքըն, գըրքերն-գիրքըն, գրքերն**: Մշո բարբառով, Ալաշկերտի, Մանազկերտի խոսվածքներով խոսող բարբառախոսները ստացական **ս**, և դիմորոշ **դ/տ** հոդերին են ավելացնում նաև **-ի** մասնիկը՝ **օրդնէր> իմ օրդնէր> օրդնէրս>օրդնէրսի, մադ>իմ մադըն>մադըս>մադըսի, գլօի>իմ գըլօյն>գլօյս>գլօյսի, ցալի>քօ ցավը>ցավըդ/տ> ցավըդ/տի, մըռուլ/տ>իմ մըռուլ/տն> մըռուլ/տս>մըռուտսի, մէջք>քօ մէջքը>մէջքըդ> մէջքըդ/տի, թեվ>թեվըս> թեվտի, թուշ> քօ թուշը>թուշդ/տ>թշնէրդ/տի, միդ>իմ միդ> մըտէս>մըդէսի, ախպէր>քու ախպէր>ախպէրտի, փօր>իմ փօրի մէջ> փօրուսի մէջ** և այլն: Օրինակներից երևում է, որ երբ **-ի** մասնիկն ավելանում է **ս** հոդին, արտահայտում է ստացականի, իսկ երբ ավելանում է **դ/տ**-ին՝ դիմորոշի իմաստ:

Ստացական **ս, տ /դ/** հոդերը, երբ ավելանում են բառերին, որոշակի յուրահատկություններ են հայտաբերում: Մշո բարբառում տարածված գործածություն է բառերի՝ ոչ միայն ստացական հոդեր, այլև ստացական դերանուններ ստանալը՝ **իմ քուրսի, քու հառստի, մէր տավարսի, ձէր քավօրտի** և այլն: Մ. Բաղդասարյան-Թափալցյանը ստացական **-ի** մասնիկը համարում է աճական, բայց, թերևս, **-ի** մասնիկը **ես** դերանվան սեռական հոլովի, պատկանելություն արտահայտող **իմ** բառա-

ձևի **ի** արմատահնչյունն է և, հավանաբար, ստացականության իմաստը սաստկացնելու համար դրվում է բառի վերջում: Այս տեսակետը հիմնավորվում է նաև նրանով, որ հինհայերենյան լեզվական հուշարձաններում **իմ** ստացական դերանունը գործառում է նաև հետադաս:

Մշո բարբառի խոսվածքներում ստացական հոդերը գործածվում են դերանունների եզակի թվի փոխարեն, հոգնակի թվում պատկանելության իմաստն արտահայտվում է դերանուններով՝ *ճ՛էոնէրս, ճ՛էոնէրտ, ճ՛էոնէրըն=իմ ձեռքերը, քո ձեռքերը, նրա ձեռքերը*, իսկ երկուսի կամ շատերի ձեռքերը նշելու համար ասվում է՝ *մէր ճ՛էոնէր, ճ՛էր ճ՛էոնէր, ընդօնձ ճ՛էոնէր*: Ետադաս գործածության ժամանակ *մէր, ճ՛էր* դերանունները ենթարկվում են կրճատման՝ *ճ՛էնէր մէ, ճ՛էոնէր ճ՛է*: Մըզի /մէզի/, ճ՛ըզի /ճ՛էզի/ դերանունները ետադաս գործածվելիս չեն կրճատվում՝ *գ՛ըլօխ մըզի, գ՛ըլօխ ճ՛ըզի* և այլն:

Մշո բարբառի խոսվածքներում դիմորոշ են **ս, դ, ն** հոդերը, իսկ **ն**-ն ցուցական հոդի կիրառությունն ունի՝ արտահայտելով ցուցական դերանունների նշանակությունը՝ *կընիգըն>այս կնիգը/այն կնիգը/այդ կնիգը* և այլն: Ք. Մադաթյանի դիտարկումներով՝ Ալաշկերտի խոսվածքում բացակայում են ցուցական հոդերը: Մշո բարբառի խոսվածքներում օրինաչափ երևույթ է կապերի ստացական, դիմորոշ հոդ ստանալը՝ *խոսվան հետս «խոսվեցին ինձնից», կընստիմ մօղըդ «նստում եմ քեզ մոտ», կէրտամ հէտըդ «կգնամ քեզ հետ»* և այլն: Մշո բարբառում **ս, տ/դ**/ հոդերն արտահայտում են և՛ ստացականի, և՛ դիմորոշի իմաստ:

Մշո բարբառում ցուցական հոդը **ն**-ն է, որը հավասարապես կարող է գործածվել և՛ **այս**, և՛ **այն** դերանունների իմաստն արտահայտելու համար՝ *գ՛իրքըն, տունըն* և այլն: Ն հոդն

միաժամանակ նշանակում է ն' *այս գիրքը, այս տունը*, և' *այն գիրքը, այն տունը*:

Միջին հայերենում արդեն նկատելի է դառնում մի թվականի անորոշության իմաստ արտահայտելու միտումը: Գործածության հատուկենտ դեպքերը, ինչպես՝ «...թագաւոր մի կայր» կամ «...վարդապետի մն խօսքն բարի խրատ լինի» /ՍՕԲ-6/, աստիճանաբար լայն տարածում են ստանում, որոնց արտացոլումը տեսանելի է նաև Մշո բարբառում ու հայերենի մյուս տարածական միավորներում: Մշո բարբառում անորոշ առումն արտահայտվում է զրո վերջավորությամբ, ինչպես նաև *մի/մէ/ մը* անորոշ հոդերով, թեև հնչյունական *մը* տարբերակը, որը հիմնականում հայերենի եզրային, արևմտյան բարբառներին է հատուկ, սակավադեպ է հանդիպում, համակարգային չէ և, ըստ էության, հնչաշղթայում արագախոսության հետևանք է: Այս ձևույթները, որոնք նաև դիտվում են որպես անորոշ դերանուններ, ծագմամբ կապվում են *մի* թվականի հետ՝ որոշակիացնելով գոյականի ընդհանուր իմաստը՝ *մէ բան, մէ գործ, մէ խատ, մէ օր, մը ճար, մը խօսք/կ, տուն մի, բան մի, ճար մի, շօր մի* և այլն: Եթե գոյականը լրացում է ունենում, անորոշ *մի/մը* հոդերը դրվում են լրացումից առաջ՝ *մէ ջօջ քար, մէ խունծ փալախ խօղ* և այլն: *Մէ*-ն միշտ նախադաս է, իսկ *մի*-ն՝ հետադաս: Անորոշ հոդի հետ կարող է գործածվել նաև *հաղ* բառը, ինչպես՝ *մէ հաղ տուն, մէ հաղ շուն* և այլն: Հոդի նման գործածությունը Հ.Աճառյանը համարում է «անորոշի գորացում»⁴⁷: Մշո բարբառում նկարագրական եղանակով հոդի արժեք ունի նաև *մեզ* բառը՝ անորոշ կիրառությամբ՝ *մեզ մարթ, մեզ տուն* և այլն:

Համադրումը ցույց է տալիս, որ առկայացման քերականական կարգը միջին հայերենում դեռևս պահպանում է դասական հայերենի նույն կարգի դրսևորումները, որոնք հատկապես տեսանելի են ցուցական, դիմորոշ և ստացական հոդերի դեպ-

⁴⁷ Հ. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 142:

քում, իսկ Մշո բարբառը որոշյալության գրեթե բոլոր դրսևորումներում՝ աղերսվում նախորդ լեզվափուլերին, որոշ դեպքերում՝ հայտաբերում ձևային յուրահատկություններ: Թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում, առկայացման քերականական կարգի ձևաիմաստային լուծումները նույնն են: Միայն ը հոդն է, որ միջին հայերենում ընդհանրապես ձևաբանորեն չի արտահայտվել, իսկ Մշո տարածքի խոսվածքներում տարբեր պատճառներով համակարգային չի դարձել մինչ օրս:

Mkrtchyan Garik- The Peculiarities of Grammatical Category of Taking Articles in Middle Armenian and Dialect of Moush.-The analysis based on the data of Middle Armenian and the dialect of Moush showed that the grammatical category of taking article in Middle Armenian still possesses the manifestations of the same system of the previous linguistic stage. Both in Middle Armenian and the dialect of Moush the form and meaning of the grammatical category of taking article are almost the same.

Мкртчян Гарик- Особенности расчлененной грамматической системы в среднеармянском языке и мушском диалекте .- Исследование, проведенное по данным среднеармянского языка и мушского диалекта, показывает, что в расчлененности грамматической системы в среднеармянском языке имеются проявления предыдущих языковых этапов. В частности, они очевидны в указательных, возвратных и притяжательных артиклях, в то время как мушский диалект соотносится с предыдущими языковыми этапами почти во всех проявлениях определенности. Как в среднеармянском, так и в мушском диалекте образно-смысловые решения расчлененности грамматической системы почти одинаковые.

Մուրադյան Լուսինե
(ԳԱԱ լեզվի ինստիտուտի հայցորդ)


**ՎՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԹԵՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՋԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ,
ՌՈՒՍԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ
ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐՈՒՄ**

Հայերենը, անգլերենը և ռուսերենը տիպաբանական տեսանկյունից երեք տարբեր լեզուներ են, համապատասխանաբար կցական, անջատական և թեքական: Սակայն, հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվում կարող է հանդես գալ տվյալ տիպին ոչ բնորոշ հատկանիշ: Դրանք վեր հանելու համար հայերենի, ռուսերենի և անգլերենի անցյալ անկատար ժամանակաձևերի բայաձևերը վերլուծենք երկու տեսանկյունից՝ *ըստ բայաձևի քերականական մասնիկների արտահայտած իմաստի*՝ մենիմաստ, բազմիմաստ, և *ըստ բայաձևի բաղադրիչների կազմության ձևի*՝ կցում, թեքում, անջատում:


Անցյալ անկատար ժամանակաձևն ունի կազմության երեք կամ չորս բաղադրիչ՝ պարզ բայերի դեպքում արմատ (*խոս-ել, խաղ-ալ*), անկատար դերբայի *-ում* վերջավորություն և *եմ* օժանդակ բայի անցյալ ժամանակի խոնարհված ձևեր, ածանցավոր բայերի դեպքում վերոնշյալին ավելանում է ևս մեկ բաղադրիչ՝ ածանց (սուկաձանցներ և պատճառական ածանցներ)⁴⁸: Ըստ այդմ, հայերենի անցյալ անկատար ժամանակաձևի բայաձևը բաղկացած է երկու մենիմաստ՝ *դերբայական -ում* վերջավորություն, *աձանցներ*, և մեկ բազմիմաստ՝ *էի, էիր, էր*,

⁴⁸ Բազմապատկական ածանցները քննության չեն առնվում՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս կատարյալի հիմքից կազմված բայաձևում չեն ընկնում և չեն ենթարկվում հնչյունական հերթագայության, այլ շարունակում են պահպանել բառակազմական իմաստը:

էինք, էիք, էին, քերականական մասնիկներից: *Ըստ բայաձևի քերականական մասնիկների արտահայտած իմաստի՝* բայաձևն ունի հետևյալ տեսքը.



Եթե անցյալ անկատար ժամանակի բայաձևը վերլուծենք *ըստ բայաձևի բաղադրիչների կազմության ձևի*, ապա կնկատենք բայաձևի բաղադրիչների *և՛ կցում, և՛ անջատում, և՛ թեքում*:



Բայաձևի բաղադրիչների և դրանց ամբողջության մասին պատկերացում կազմելու համար *անցյալ անկատար* ժամանակի բայաձևը կարելի է բանաձևել և այն համեմատել զուգադրվող երկու լեզուների՝ ռուսերենի և անգլերենի նույն ժամանակի բայաձևերի հետ: Անցյալ անկատար բայաձևի արմատական բաղադրիչը նշանակենք **A** տառով, անկատար դերբայի *-ում* վերջավորությունը՝ **d**, օժանդակ բայը՝ **b**, սուկաձանցը՝ **c**, պարզ բայերի դեպքում կունենանք **Ad+bi** բանաձևը⁴⁹, ածանցավոր բայերի դեպքում՝ **Acd+bi**:

Ռուսերենում անցյալ անկատար ժամանակը վերլուծելիս պետք է հաշվի առնել բայի *անկատար* և *կատարյալ կերպի* կազմության առանձնահատկությունները: *Անցյալ անկատար* ժամանակաձևը կազմվում է *և՛ անկատար, և՛ կատարյալ* կերպից: Կատարյալ կերպից կազմվող անկատար կերպի բա-

⁴⁹+ նշանը դրվում է, երբ բայաձևի բաղադրիչները անջատ են գրվում, իսկ բառային մեկ ամբողջություն կազմող բաղադրիչների միջև նշան չի դրվում:


յերը ածանց են ստանում՝ *-ива-/-ва-/-а⁵⁰*: Անցյալ անկատար ժամանակի վերջավորությունը *-л* ածանցն է, որն ավելանում է անորոշի հիմքին, իսկ հոգնակի թվի ցուցիչը՝ *-и-*ն՝ *-л* ածանցին.

1. անկատար կերպ - *игра/ть > игра+л(и), люби/ть > люби+л(и), бра/ть > бра+л(и)*.
2. կատարյալ կերպ - *пере/писа/ть > пере/пис/ыва/л, до/бы/ть > до/бы/ва/л, за/земли/ть > за/земл/ял*:

Ռուսերենի անցյալ ժամանակի երրորդ դեմքն ունի նաև *արական, իգական* և *չեզոք սեռի* ցուցիչներ: Արական սեռն արտահայտվում է գրո վերջավորությամբ, իգականը՝ *-а*, չեզոքը՝ *-о⁵¹*: Սեռի ցուցիչները միանում են եզակի երրորդ դեմքի բայաձևին, հոգնակիում դրանք բացակայում են:


Հայերենի համեմատությամբ՝ *ռուսերենի* անցյալ ժամանակն ունի մեկ առանձնահատկություն. առանց անձնական դերանունների՝ գործողություն կատարողի դեմքը մնում է անհայտ: Այս տեսանկյունից *ռուսերենը* նման է *անգլերենին*, որտեղ դերանունն իր վրա է վերցնում գործողություն կատարողի դեմքի և թվի գաղափարը: Հայերենում անձնական դերանունները միայն ընդգծում են գործողություն կատարողի դեմքը և թիվը:

Հստ բայաձևի քերականական մասնիկների արտահայտած իմաստի՝ *ռուսերենի* անցյալ անկատար ժամանակաձևը հանդես գալիս է հետևյալ դրսևորումներով:




⁵⁰ *Русская грамматика*, т. I, М., 1980, с. 585, 634:

⁵¹ *Русская грамматика*, т. I, М., 1980, с. 627:



Ըստ բայաձևի բաղադրիչների կազմության ձևի՝ անցյալ անատար ժամանակի բայաձևի մեջ միաժամանակ առկա է բաղադրիչների կցում, անջատում և թեքում:



Անցյալ ժամանակը կազմելիս բայակերտ վերջավորությունից առաջ **И** ունեցող բայերում **И**-ն պահպանվում է: Այն, ըստ էության, խոնարհիչի դեր է կատարում, բայց քանի որ, ի տարբերություն հայերենի խոնարհիչների (Ե, Ա), չի ընկնում, ոչ էլ հանդես է գալիս բայաձևի կազմի մեջ մտնող քերականական որևէ մասնիկի հետ, ապա անցյալ անկատար ժամանակի բայաձևի կաղապարը կազմելիս կարելի է դիտարկել այն որպես ածանցական բաղադրիչ, նշանակել **с** տառով՝ զուգադրելով հայերենի սոսկածանցներին: Սոսկածանցները ևս բային նոր իմաստ չեն հաղորդում, իսկ քերականական առանձնահատկությունն այն է, որ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակների բայաձևերում ընկնում են. *հագնել-հագա, հագել էս, դիպչել-դիպա, դիպել էս: -И*-ն ևս ընկնում է, սակայն ոչ թե

⁵² Արական սեռը քերականական ցուցիչ չունի:

կատարյալ կերպից կազմվող բայաձևերում, այլ ներկայում՝ *люблю*, իսկ անցյալ ժամանակի անկատար և կատարյալ կերպից կազմվող բայերում պահպանվում է՝ *любил*, *полюбил*: Այդ իսկ պատճառով *-и*-ն ներկայացնում ենք այնպես, ինչպես *-ն*- և *-չ*- սուկածանցները:

Կարելի է կազմել նաև ռուսերենի անցյալ անկատար ժամանակի կազմության բանաձևը: *Ռուսերենի* դեպքում ևս կա երկու բանաձև: Անկատարի կերպից կազմվող բայաձևի արմատը նշանակում ենք **A** տառով, դերանունը՝ **b**, ժամանակի վերջավորությունը *(-л-)*՝ **d** տառով, գոյականական սեռի ցուցիչը՝ **r** (*род*), ածանցը՝ **c**, ստացվում է ***b+Acđ(r)P***⁵³ բանաձևը: Հոգնակի թվում սեռի ցուցչի փոխարեն հանդես է գալիս հոգնակի թվի ցուցիչը *(-и)*՝ ***b3:ը***: Ստացվում է ***b+Acđ(b3)*** բանաձևը:

Բայի կատարյալի կերպից կազմվող անցյալ անկատար ժամանակի բայաձևերը քերականական երկու մասնիկով ավելի են անկատարի կերպից կազմվող ձևերից: Անկատարի կերպի ցուցիչը՝ *-ыва-*, նշանակում ենք **c** տառով, իսկ նախածանցը՝ *пере-*, որն անցյալ անկատար ժամանակաձևում կատարյալի կերպի ցուցիչն է, նշանակում ենք **cr**: Եզակիում ստացվում է ***b+c1+Acđ(r)***, իսկ հոգնակիում՝ ***b+c1+Acđ(b3)*** բանաձևերը:

Հայերենի և *ռուսերենի* անցյալ անկատար ժամանակաձևին *անզլերենում* համապատասխանում է *անցյալ շարունակականը*՝ *Past Continuous-ը*⁵⁴:

Ինչպես ներկայում, այդպես էլ անցյալում կա նրբերանգային տարբերություն. անցյալ մի ժամանակակետում ընթացքի


⁵³ *r*-ն փակագծերի մեջ դնելու պատճառն այն է, որ հոգնակիում *r*-ն, որպես պարտադիր պայման, ընկնում է, քանի որ դրա փոխարեն հանդես է գալիս *b1-ը*՝ հոգնակերտ մասնիկը. ընդգծում ենք, քանի որ, եթե եզակի թվում գործողություն կատարողն արական սեռ լինի, որի ցուցիչը գրո վերջավորությունն է, այն չի արտահայտվի:

⁵⁴ **В. Каушанская**, указ. соч., с. 90-91:

մեջ եղող գործողություն և առհասարակ գործողություն, որ կատարվում է անցյալում:

Անգլերենում գործողություն կատարողի դեմքն արտահայտում են դերանունները՝ *I, You he/she/it, we, they*: Ի տարբերություն հայերենի՝ առանց դերանվան ոչ մի ժամանակաձև դիմավոր բայի իմաստ չի կարող արտահայտել: *Ռուսերենը հայերենի և անգլերենի միջև միջին դիրք է գրավում*: Այն ժամանակաձևերում, որոնց բայաձևը զուրկ է դիմաթվային վերջավորություններից, հանդես են գալիս անձնական դերանունները: Անգլերենը զուրկ է թեքական տիպին պատկանող լեզուների առանձնահատկությունից՝ դիմաթվային վերջավորություններից: Վերջիններիս փոխարեն եղանակաժամանակային ձևերում հանդես են գալիս դերանունները:

Անցյալ անկատար ժամանակաձևը կազմությամբ նման է *ներկա անորոշին*: Միակ տարբերությունը **-ed** քերականական մասնիկն է, որ կցվում է անորոշի ձևին՝ բացի անկանոն և տարաբնույթությամբ կազմվող բայերից:




Բայաձևի բանաձի կազմությունը պարզ է, նույնանում է ներկա անկատար ժամանակի բանաձևին՝ **b+Ad**: Ի տարբերություն **-s (-es)**-ի՝ **-ed**-ն՝ *d*-ն, հանդես է գալիս եզակի և հոգնակի թվի բոլոր բայաձևերում. *I worked, you worked, he worked, we worked, they worked*:

Եթե *հայերենում* անցյալ անկատար ժամանակաձևի բայաձևն արտահայտվում է երկու առանձին բաղադրիչով, *ռուսերենում*՝ մեկ, ապա անգլերենում՝ երեք. *I was talking, you were playing, she was swimming*. Երկրորդ բաղադրիչը *to be* բայի անցյալի տարբերակներն են՝ *was* (եզակի թվի հետ), *were* (հոգ-


նակի թվի հետ): Վերջիններս անցյալ ժամանակի քերականական ցուցիչներն են և առանձին գործածություն ունեն:

Երրորդ բաղադրիչը կարելի է համեմատել հայերենի անկատար դերբայի հետ, որն անկախ գործածություն չունի, իսկ *-ing* վերջավորության միջոցով բայաձևին հաղորդում է գործողության անավարտության գաղափար: Կազմվում է բայի հիմքին կամ առանց *to* մասնիկի անորոշ ձևին *-ing* մասնիկի կցումով:

Ըստ բայաձևի քերականական մասնիկների արտահայտած իմաստի՝ անգլերենի Past Continuous ժամանակաձևում առանձնացնում ենք և՛ մենիմաստ, և՛ բազմիմաստ քերականական մասնիկներ:



Ըստ բայաձևի բաղադրիչների կազմության ձևի՝ անցյալ անկատար ժամանակաձևի բայաձևի կազմում միաժամանակ առկա է բաղադրիչների *անջատում, կցում և թեքում*:



Նույն կերպ կարելի է բանաձևել նաև անգլերենի *Past Continuous*-ը: Բայի հիմքը նշանակում ենք **A** տառով, *participle I*-ի վերջավորությունը՝ **d** տառով, դերանունը՝ **b**, իսկ ժամանակի ցուցիչը՝ *was/were*, նշանակենք **b1**: Կստացվի *Past Continuous* ժամանակաձևի կազմության **b+b1+Ad** բանաձևը:

Այսպիսով, անցյալ անկատար և անցյալ շարունակական ժամանակաձևերի կազմության բանաձևերը ցույց են տալիս, որ երեք լեզուների զուգադրությամբ ժամանակաձևի *w-*

ռավել պարզ կազմություն ունի հայերենը, ամենաբարդը՝ ռուսերենը, անգլերենը այս երկու լեզուների միջև միջին դիրք է գրավում: Ռուսերենի անցյալ անկատար ժամանակաձևում լեզվի տիպին բնորոշ թեքականության հատկանիշը ցայտուն չի դրսևորվում, իսկ անգլերենի անջատականության հատկանիշը դրսևորվում է:

Աղյուսակ 1: Ըստ բայաձևի քերականական մասնիկների արտահայտած իմաստի:

Լեզու	Հայերեն	Ռուսերեն	Անգլերեն	
			Անցյալ անկատար	Անցյալ անկատար
Մենիմաստ քերականական մասնիկների թիվ	1	2/4	1	1
Բազմիմաստ քերականական մասնիկների թիվը	1	-	-	1
Բառաձևերի թիվը	2	2	2	3

Աղյուսակ 2: Ըստ բայաձևի բաղադրիչների կազմության ձևի:

	Հայերեն	Ռուսերեն	Անգլերեն	
			Անցյալ անկատար	Անցյալ անորոշ
Կցում	1	2/4	1	1
Թեքում	1	-	-	1
Անջատում	1	1	1	2

Muradyan Lusine - The Expression of Agglutination, Inflection and Isolation in Armenian, Russian and English Past Indefinite Tense.- The article represents the parallel typological analysis of the Past indefinite Tense of the Armenian, Russian and English languages. In the article are formed and compared the Past Indefinite's creating formulae of three languages. The comparison shows that more simple forming has Armenian, the most difficult Russian, and English takes medium position with comparing of this two languages.

Мурадян Лусине - Агглютинативное, флективное и изолирующее выражение прошедшего времени армянского, русского и английского языков.- В статье представлен сопоставительно-типологический анализ прошедшего времени в армянском, русском и английском языках. Сформированы и для сравнения представлены формулы прошедшего простого времени трех языков. Сравнение показывает, что в армянском способ построения глагольной формы наиболее простой, самый сложный - в русском, а английский занимает среднее место по сравнению с армянским и русским.

ԱՎԵԼՈՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ
ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ⁵⁵

Խոսքում հաճախ կիրառվում են բառեր, որոնք **ավելորդ են**, խոսքին լրացուցիչ բովանդակություն չեն հաղորդում, չեն նպաստում խոսքն արագ և ավելի արդյունավետ ընկալելուն, ծանրաբեռնում են խոսքը: Այսպիսի բառեր և արտահայտություններ հաճախ կիրառվում են ոչ պաշտոնական, առօրյա շփման ընթացքում, կենցաղում, մտերմիկ զրույցներում, վիճելիս և բանավիճելիս: Ընդունված է նման կիրառությունները հիմնականում վերագրել աղքատ բառապաշար ունեցող մարդկանց՝ կարծելով, որ նրանք չեն կարողանում խոսքն ավելի բազմազան դարձնել, կիրառել հումանիշներ, փոխաբերություններ և այլն, ուստի դիմում են ավելորդ բառերի:

Ավելորդաբանությունները կամ ավելորդ բառերը առաջարկում ենք դասակարգել հետևյալ կերպ.

1. **Բառեր, որ չեն փոխում խոսքի բովանդակությունը, անհրաժեշտ չեն, մակաբույծ են:** Ունենք սիրում են բանավոր խոսքում կիրառել այնպիսի բառեր, որոնք անհրաժեշտ չեն տվյալ միտքը ամբողջությամբ արտահայտելու համար: Հաճախ մարդիկ ձգտում են ավելի արագ և կիրթ խոսել, բայց քանի որ չունեն բավարար բառապաշար, խոսքում արտահայտչական ընդմիջումներ են հայտնվում, նաև այնպիսի բառեր, որոնք, անկախ խոսողի կամքից, անընդհատ կրկնվում են: Սրանք, այսպես կոչված, **մակաբույծ** բառեր են: Նմանատիպ բառերի կիրառումը կարելի է բացատրել ինչպես բառապաշարի սակա-

⁵⁵ Հետազոտությունն իրականացվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 13YR-6B0006 «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի շրջանակներում:

վությամբ, այնպես էլ խոսողի հուզական վիճակով, շտապողականությամբ, անակնկալ հարցադրումներով և այլն:

Չոգեբանները կարծում են, որ մակաբույծ բառերի կիրառումը խոսքում ունի իր հոգեբանական պատճառները: Օրինակ՝ Նրանք, որոնք իրենց խոսքում հաճախակի են կիրառում «*այսպիսով*» բառը, ինքնավստահության պակաս ունեցող մարդիկ են, «*ուղղակի, պարզապես*» բառերը հաճախակի կիրառում են նրանք, որոնք վախենում են պատասխանատվությունից, «*իրականում*» բառը էգոիստ մարդիկ են շատ կիրառում, «*ի դեպ*» հաճախակի ասում են ամաչկոտները և այլն⁵⁶:

Պետք է նշել, որ մակաբույծ բառեր կիրառելը անհատական բնույթ ունի, յուրաքանչյուրն ինքն է «ընտրում», թե որ բառը կիրառի, սակայն կան բառեր, որոնք համընդհանուր կիրառություն ունեն: Մակաբույծ բառերն արտահայտվում են տարբեր խոսքի մասերով, հիմնականում ձայնարկություններով, եղանակավոր բառերով, որոշ դեպքերում՝ միջանկյալ բառերով և արտահայտություններով: Օրինակ՝ *Ըմ-ըմ, է-է, ա-ա, այսպիսով, լավ, բայց, սակայն, ուրեմն, ահա, ի միջի այլոց, կարծում եմ, իմ կարծիքով, հասկանում ենք, ասենք, ենթադրենք, համենայն դեպս, մի տեսակ, եսիմ, պարզ ա, տենց, տենց բաներ, բանք, բա* և այլն:

Առօրյայում հաղորդակցվելիս շփման ցածր մակարդակում տեղ են գտնում ժարգոնային մակաբույծներ: Օրինակ՝ *խոսքի, քցենք...*

2. Բառեր, որոնք կիրառելիս առաջանում է իմաստի կրրկնություն: Երբեմն նախադասության մեջ գործածվում են բառեր, որոնք ավելորդ են, քանի որ այդ բառերի իմաստն արդեն արտահայտում է կից գործածված մյուս բառը կամ բառերը: Օրինակ՝ *Նորից եմ կրկնում, նորից վերհիշեցի* արտահայտու-

⁵⁶ Տե՛ս

http://www.diplomat.am/publ/ani_xudoyan/psixo/makabowyc'_bar'er/22-1-0-720:

թյունների մեջ ավելորդ է *նորից* բառը, քանի որ *կրկնում եմ* բայը արդեն ունի «նորից» իմաստը, նշանակում է *նորից եմ ասում, վերհիշեցի* բառի *վեր* մասնիկը արդեն ունի «նորից» իմաստը: *Քեզ հետ միասին* արտահայտության մեջ ավելորդ է *միասին* կապը, քանի որ *հետ*-ը արդեն նշանակում է միասին:

Կամ՝ *Մինչև առ այսօր* արտահայտությունը սխալ է, պետք է գործածել կա՛մ *մինչև*, կա՛մ *առ*, քանի որ գրաբարյան *առ* նախդիրն ունի «մինչև» իմաստը: *Նրանք միմյանց փոխադարձաբար ողջունեցին* նախադասության մեջ սխալ է *միմյանց*-ի և *փոխադարձաբար*-ի միաժամանակյա կիրառությունը: *Միմյանց, իրար, մեկմեկու* դերանուններն ունեն փոխադարձության իմաստ, ուստի *փոխադարձաբար* բառն ավելորդ է:

Անվճար նվեր, անվճար նվիրել արտահայտությունները խոսակցական լեզվում սկսել են տարածվել հավանաբար գովազդի հետևանքով: Անշուշտ հասկանալի է, որ նվերը վճարովի չի լինում, բայց գովազդում կիրառվում է այս ավելորդաբանությունը, որպեսզի ավելի շեշտվի մատուցվող ծառայության անվճար լինելը:

3. Բառեր, որոնք արդեն հայտնի են, ինքնին հասկանալի, լրացուցիչ բովանդակություն չեն հաղորդում խոսքին:

Օրինակ՝ Երևան քաղաքը – Երևանը, երկուշաբթի օրը- երկուշաբթի, հայերեն լեզուն- հայերենը // հայոց լեզուն, դեղին գույնը-դեղինը, մարտ ամսին- մարտին և այլն: Հայտնի է, որ Երևանը քաղաք է, ուստի ավելորդ է *քաղաք* բառը, նմանապես ավելորդ են նաև *լեզու, օր, գույն, ամիս* բառերը:

Կամ՝ *խիստ ձևով, դաժան կերպով* արտահայտություններում ավելորդ են *ձևով* և *կերպով* բառերը, քանի որ *խիստ* և *դաժան* մակբայներն արդեն ինքնին արտահայտում են *ձևով* և *կերպով* բառերի իմաստները:

Հինգ հատ արտահայտության մեջ էլ ավելորդ է *հատ* բառի գործածությունը, քանի որ թվականները նշանակում են հենց քանակ:

Նմանատիպ արտահայտություններ են նաև *հանդիպել միասին, լրացուցիչ բռնուս, ուրիշ այլընտրանք, տեղացի արքրիզեն, ժողովրդական բանահյուսություն, անսպասելի անակնկալ, խառնել իրար, փոխադարձ համագործակցություն* ևն:

4. ***Բառեր, որոնք ավելորդ են, քանի որ հայերենի քերականությանը հարիր չեն, կիրառվում են օտար լեզուների ազդեցությամբ, բառացի թարգմանությունների հետևանք են, հիմնականում ռուսաբանություններ:*** Օրինակ՝ *գտնվում է լավ վիճակում, հանդիսանում է ներկայացուցիչը* արտահայտություններում ավելորդ են *գտնվել, հանդիսանալ* բայերը, քանի որ է օժանդակ բայը նշանակում է «*գտնվել, լինել, գոյություն ունենալ*», ուստի լիովին արտահայտում է այդ իմաստը:

Նմանապես *համարվում է, կայանում է* օտար կառույցներում ավելորդ են *համարվում և կայանում* բայերը, դրանց փոխարեն պետք է կիրառել է օժանդակ բայը: Օրինակ՝ *բանը կայանում է նրանում*-ի փոխարեն՝ *բանն այն է...*

Ներկայացնենք հայերենին խորթ մեկ այլ օրինակ, երբ ենթակայից հետո միաժամանակ դրվում է *դա* կամ *դրանք* որպես լրացուցիչ ենթակա: Օրինակ՝ *Հայրենիքը՝ դա, երազանքները՝ դրանք*, արտահայտություններում ավելորդ են *դա, դրանք* դերանունները, քանի որ դրանց կիրառությունը խորթ է հայերենին. ռուսերենից բառացի թարգմանությունների հետևանք են՝ ռուսերենի *это* դերանվան նմանողությամբ:

Խոսքում ավելորդ բառերի կամ ավելորդաբանությունների լայն կիրառությունը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ հանրության տարբեր ներկայացուցիչներ տարբեր հաճախականությամբ և տարբեր չափով են կիրառում դրանք, այսինքն՝ ավանդույթով փոխանցվում է դրանց կիրառությունը: Մինչդեռ կան ավելորդաբանություններ, որոնք անհատական, դիպվածային բնույթ ունեն, դրանք ժամանակակից ավելորդաբանություններ են, որ հիմնականում կապված են նոր երևույթ-

ների, ժամանակակից տեխնոլոգիաների հետ: Ըստ այդմ՝ առանձնացնում են ավելորդաբանությունների երկու խումբ⁵⁷՝

1. Խոսակցական լեզվում արմատացած կառույցներ՝ ավանդական ավելորդաբանություններ,
2. Դիպլոմատիկ, անհատական կառույցներ՝ ժամանակակից ավելորդաբանություններ:

Այսինքն՝ այդ կառույցները արմատացել են լեզվում, իսկ դրանց կիրառական հաճախականությունը արդեն խոսակցական լեզվի նորմ է դառնում:

Պետք է նշել, որ կան ավելորդաբանություններ, որոնք ի սկզբանե կիրառվել են մասնագիտական նեղ ոլորտներում կամ հասարակության որևէ խմբավորման շրջանակներում, բայց աստիճանաբար սկսել են տարածվել, կիրառվել հանրության լայն շրջանակների կողմից: Տեղեկատվական տեխնոլոգիաներին, համակարգչին և հաշվողական տեխնիկային առնչվող նմանատիպ շատ օրինակներ կան, որոնք մեծ տարածում ունեն: Օրինակ՝ *IT տեխնոլոգիաներ* արտահայտության մեջ հապավումն արդեն ներառում է *տեխնոլոգիաներ* բառը, նմանապես ավելորդ է *CD դիսկ* արտահայտության *դիսկ* բառը, *LCD էկրան* արտահայտության՝ *էկրան* բառը, *GPS համակարգի*՝ *համակարգը* ևն:

Նշենք, որ այնպիսի ծեծված արտահայտություններ, ինչպիսիք են *ես անձամբ*, *սեփական աչքով տեսնել* ևն, կիրառվում են ոչ միայն առօրյայում հաղորդակցվելիս կամ ընկերական գրույցներում, այլև գիտական կամ քաղաքական բանավեճերի ժամանակ: Նմանատիպ ավելորդաբանությունները այնքան արմատացած են խոսակցական լեզվում, որ հաճախ խոսողը չի էլ գիտակցում, որ ավելորդ բառ է կիրառում, պարզապես այս կամ այն իրադրության մեջ ցանկանում է ընդգծել իր ասելիքը:

⁵⁷ Տե՛ս <http://files.school-collection.edu.ru/dlrstore/4aaff19e-4f7b-c6eb-fc10-dfcf6b97cb8b/1008591A.htm>

Կարծում ենք՝ հաճախ ավելորդաբանություններ կիրառվում են ոչ թե անգրագիտության կամ չիմացության, այլ հետևյալ պատճառներով՝

1. Խոսողը հաճախ լսում է դրանք՝ ցանկանալով հետևել լեզվական ընդհանուր միտումին, այսինքն՝ առանց գիտակցելու՝ կիրառում է դրանք որպես լեզվական քարացած ձևեր */մայիս ամսին, էս անձամբ/*:

2. Տվյալ արտահայտությունը ճիշտ է համարում. դրանք այնքան արմատացած են խոսքում, որ դրանց ավելորդ լինելը չի գիտակցվում */նախապես կանխազգալ, հիմնական էությունը, վերն բարձրանալ, նորից կրկնել/*:

3. Ցանկանում է խոսակցի ուշադրությունը հրավիրել տրվյալ արտահայտության վրա, ուստի այն ավելի ընդգծելու համար կիրառում է ավելորդաբանություն */սեփական աչքով տեսնել/*:

Ամփոփելով նշենք, որ չնայած ավելորդաբանություններն անհարկի, ոչ ցանկալի, խոսքը ծանրաբեռնող լեզվական երևույթներ են, բայց դրանք, այնուամենայնիվ, ոճական արժեք ունեն, խոսակցական կենդանի լեզվի անբաժանելի մասն են. դրանք խոսքը դարձնում են ավելի կենդանի և բազմազան:

Sargsyan Meri – Pleonasms in the Colloquial Language of Yerevan.-

In this article, pleonasms used in colloquial language of Yerevan are shown, also their classification is represented by the peculiarities of their usage: 1. parasite words, 2. words generating a repetition of the meaning, 3. words already known, understandable by itself, 4. russifications. In the article the peculiarities and the reasons of application of the pleonasms are also represented.

Саргсян Мери- Плеоназмы в разговорном языке Еревана.- Представлена классификация плеоназмов в разговорном языке Еревана по особенностям их применения: 1. слова паразиты, 2. слова, порождающие повторение значения, 3. слова, уже известные, сами по себе понятные, 4. русификации. В статье также представлены особенности и причины применения плеоназмов.

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ Ն Ե Ր

Ղամոյան Լուսինե
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԵՐԵՎԱՆԻ ԼԵԶՎԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ⁵⁸

Անժխտելի փաստ է, որ լեզուն է սովյալ ժողովրդի գոյության, հարաստության և ինքնահաստատման հիմքերի հիմքը: Լեզվի զարգացումը, նրա հասարակական գործառնությունը մեծապես պայմանավորվում է հասարակական այն պայմաններով, որոնցում ապրում է նրանով խոսող հասարակությունը:

Լեզվավիճակի վրա ազդող հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային գործոնները բազմազան են, ինչպես՝ տարիքային խմբերը, ազգային կազմը, ժողովրդական կրթությունը, հանրության կենցաղն ու մշակութային բնութագիրը և այլն⁵⁹:

Լեզվի զարգացման գործում առաջատար դերը սովորաբար պատկանում է քաղաքներին: Հետևաբար՝ հայերենի խոսակցական լեզվի արդի վիճակի ուսումնասիրության համար նպատակահարմար ենք գտել վերցնել Երևանը:

Երևանում հայերենից բացի զգալի տեսակարար կշիռ ունեցող այլ լեզուներ չեն գործառում: Թեև մայրենի լեզուն են համարում գրական հայերենը, սակայն, ցավոք, այսօր հայերենի, որպես պետական լեզվի, կարգավիճակը ոչ միայն ապա-

⁵⁸ Հետազոտությունն իրականացվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 13YR-6B0006 «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի շրջանակներում:

⁵⁹ Տե՛ս **Ն. Զաքարյան**, Երևանի արդի լեզվավիճակը. - *Հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և համեմատալեզվաբանական հետազոտություններ*, Ե., 1979, էջ 19:

հովված չէ, այլ ենթարկվում է համակարգային խաթարումների, աղավաղումների, կորցնում լեզվակիրներին:

Առօրյա գործածության հայերենը Երևանում գրական լեզվի խոսակցական տարբերակն է, որն էլ բանավոր հաղորդակցման հիմնական միջոցն է: «Դա ոչ միայն գրական լեզուն տիրապետող հանրության բանավոր, անկաշկանդ, ոչ պաշտոնական խոսքն է, այլև հասարակության այն մասի խոսքը, որի համար գրական լեզուն սովորաբար հաղորդակցման միջոց չէ»⁶⁰: Այդ հայերենով երևանցիները խոսում են տանը, փողոցում, մտերիմների, աշխատանքային ընկերների հետ և այլն: Առօրյա խոսակցական հայերենը թեև հարաբերակցվում է գրական լեզվին, այդուհանդերձ, հեռանում է նրանից որոշ հատկանիշներով՝ երբեմն մաքուր, իսկ սովորաբար այս կամ այն չափով բարբառախառն կամ էլ օտարաբանություններով (հիմնականում ռուսաբանություններով) աղավաղված:

Այսօր խոսակցական հայերենն ու գրական հայերենն ակնհայտորեն հեռացել են իրարից. առօրյա շփման ժամանակ մի լեզվով ենք հաղորդակցվում, իսկ գրավոր կամ պաշտոնական հաղորդակցման ժամանակ փորձում խոսակցական լեզվի տարբերը մաքրել, որն էլ դժվարացնում է հաղորդակցումը: Առօրյա խոսակցական հայերենի և գրական հայերենի այս խզումը զգալիորեն թուլացնում է հայերենի դիրքերը մի շարք ոլորտներում (պաշտոնական գրագրություն, պետական հիմնարկներ, կրթություն, գիտություն, տեխնիկա և այլն):

Բազմաթիվ են խնդիրները՝ ուղղախոսությունից մինչև շարահյուսական կառույցներ: Այսպես՝ քանի որ խոսակցական լեզվին բնորոշ է հանպատրաստից, խոսելու ընթացքում առանց նախապատրաստվելու դրսևորվելը (լեզվաբաններն այն կոչում են ինքնաբերականություն), հաճախ երկարաշունչ բառերն ու անձնանունները բանավոր խոսքում արհեստականորեն կր-

⁶⁰ Ս. Մելքոնյան, *Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության*, Ե., 1984, էջ 218:

ճատվում են, այսպես՝ *հաջողությունը* դառնում է *հաջող, ցտեսությունը՝ ցը, մորաքույրը՝ մոք, հորաքույրը՝ հոք, հորեղբայրը՝ հոպար, մորեղբայրը՝ քեռի/քեռ* և այլն, այդպես նաև՝ *Համբո* (Համբարձում), *Մկո* (Մկրտիչ), *Ան* (Անուշիկ, Անի, Աննա, Անահիտ և այլն), *Ամո* (Արմինե), *Վլո* (Վոլոդյա), *Խչո* (Խաչատուր) և այլն: Գուցե այս պատճառով էլ հաճախ *շնորհակալության* փոխարեն գործածում են *մերսի* օտարաբանությունը, *ցտեսության* փոխարեն՝ *պակա*-ն, որն անշուշտ հանձնարարելի չէ: Կամ, օրինակ, երբ դպրոցականները թվաբանությունը *թվաբ* են ասում, բնագիտությունը՝ *բնագ*, մաթեմատիկան՝ *մաթեմ* և այլն, հասկանում ենք, որ «ուրյուն»-ները կրճատելով՝ արտահայտվում է կարճ խոսելու ձգտումը, այսպես կոչված՝ «տնտեսման սկզբունքը», որը հատուկ է ամեն մի խոսակցական լեզվի: Բայց երբ անձնանունների փոխարեն «մականուններ» են գործածվում, սա բացասական երևույթ է, ինչպես՝ *Սոված, Բոյով, Զուբ, Ճուտ, Շակալ, Չիկո (Չախկալ), Զարլ* և այլն:

Ժողովրդախոսակցական բառաշերտի մեջ առանձին որակ են կազմում հասարակաբանական-խոսակցական բառերը: Սրանք հուզաարտահայտչական երանգավորում ունեցող ցածր ոճի այն բառերն են, որոնք ունեն որոշակի հասարակաբանական ոճական երանգ և, բնականաբար, ոճական նշույթավոր բառեր են, ինչպես՝ *սառուց, կապուտ, հեր, մեր, ախպեր, գել, լեն, ծեր, կայնել, ախչի, էրկու, իրեք, էսիմ, խի, յա, ընչի, ըտե, ըսքան, ըստուց, ընդուց, ով ա ասե, ինչ ա ըլե, քառսուն, հավքել, լողնալ, վախցընել, հիշըցնել, ատեցնյակ, ախպերնյակ, ընգերնյակ* և այլն:

Երևանի խոսակցական լեզուն, ցավոք, առատ է ժարգոնային բառերով ու արտահայտություններով (*տոչկել, շվցնել, ցվրվել, կայֆ բոնել, քյոլել, եզոտ, ցկցկալ, տոժալ, մզզցնել, խզարել, չորով դնել, բեսամթ դգել, բըլլըրցնել, լոմկա, մանթո, բիթի, ճաքել էինք, բացում ա, ջոգած ա, լիշնի խոսել, գլուխ հարթուկել, ծնզլահան անել* և այլն), գոեհկաբանություններով

(քյալ, խդր, տուֆտա, քնձի, չմո, համբալ, հայվան, քնձոտ, շնթոկէլ, խուժան, գոթուզիբիլ և այլն): Կան նաև բազմաթիվ բարբառային իրողություններ, բարբառների կամ առանձին խոսվածքների միջոցով արևելյան լեզուներից (թուրքական, պարսկական, արաբական) Երևանի խոսակցական լեզվին անցած բազմաթիվ բառեր, ինչպես՝ պարսկերենից՝ բալիշ, բախչա, բեթար, բեխարար, լագյան, լեշ, խամ, խիար, խումարբազ, հավես, հեչ, մահանա, մուխտառ, չանա, չանգյալ, սթար, և այլն, թուրքերենից՝ ադաշ, ամագ, արշին, բալքի, բայդուշ, բաջանադ, բիրիք գյամ, գոռ, գորա, դալան, դուզ, դուզգունի, գոռ, գոռբա, թագա, թայ, լայադ, դոնախ, մադալ, յախու, յորդան, չափալախ, չաքուջ, ջանջալ, սադ, քյասիբ, օյադ, օյին, օյինբազ և այլն, արաբերենից՝ ալիբ, աջալ, բարաքյաթ, եթիմ, թայֆա, թադարուք, ինադ, խարար, խաթր, խարար, խեր, հալալ, հալբաթ, հարամ, հարիֆ, դադր, դալաթ, դալմադալ, դամաթ, մուննաթ, նադդ, շառ, շարբաթ, ջրհանդամ, ջեր, սալամաթ, սամթ, վախտ, քեֆ և այլն⁶¹:

Լեզվին տիրապետելու մակարդակը, խոսքի որակը և հասարակական տարբերակման աստիճանը մեծ չափով պայմանավորված են խոսողների կրթությամբ և մշակութային ընդհանուր զարգացմամբ:

Մայրենի լեզվով ճիշտ խոսել ու գրել սովորելը (նաև սովորեցնելը) և՛ ազգային պարտականություն է, և՛ կյանքի հրամայական: Որպեսզի մարդն իր միտքը ճիշտ ու գեղեցիկ արտահայտի, պետք է կարողանա իր խոսքը կառուցել լեզվի ռճական ու քերականական կանոններին համեմատ: Մակայն ցավալին այն է, որ այսօր տասներկու տարի «չոր քերականություն» սովորելուց հետո, հայախոս շրջանավարտը չի կարողանում գրա-

⁶¹ Տե՛ս **Ս. Բաղդասարյան-Թափալցյան**, *Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում*, Ե., 1973, էջ 184-203, **Ս.Ղուկասյան**, *Առօրյա բառարան*, Ե., 2013, էջ 255-278, **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, Ե., հտ. 1-4, 1971-1979:

վոր և բանավոր շարադրել իր մտքերը: Դրա համար քերականություն ուսուցանելուն զուգահեռ պետք է իրականացվի լեզվի, խոսքի գրավոր և բանավոր ուսուցում: Ե՛վ դպրոցներում, և՛ համալսարանական միջավայրում կանոններ սերտելու փոխարեն պետք է նախ լեզու սովորել:

Այսօր բառաձևերի բազում խախտումներով ու սխալներով են խոսում և՛ բարձրագույն, և՛ միջնակարգ կրթություն ունեցողները հավասարապես, ինչպես՝ **ավելորդ, կանանցի, անձեռնոցիկ** (փոխ.՝ *ավելորդ, կանացի, անձեռնոցիկ*), **ալանի** (նկատի ունենք՝ առանց աղի, փոխ.՝ *անալի*), **բալանի** (փոխ.՝ *բանալի*), **հաշվանդամ** (փոխ.՝ *հաշմանդամ*), **տուժվել, կապնրվել, խաբնվել** (փոխ.՝ *տուժել, կապվել, խաբվել*), **տարեկետում, թույլատվություն, ութանասուն** (փոխ.՝ *տարկետում, թույլտվություն, ութսուն*), **պատճե** (փոխ.՝ *պատճեն*), **իմ մոտ, իմ վրա** (փոխ.՝ *ինձ մոտ, ինձ վրա*) և այլն: Հաճախակի են գործածում բառիմաստային, քերականական օտարաբանություններ և օտար այնպիսի կառույցներ, ինչպիսիք են՝ «Ես **ինձ մոտ** եմ», «Բանը **կայանում է** նրանում...», «Նա **համարվում է** մեր կուրսի ամենալավ ուսանողը», «Էդ խանութը Ամիրյան **փողոցի վրա** է», «Անահիտը նվագելու է **դաշնամուրի վրա**», տարածված սխալ է նաև՝ «Ես **Անհի վրա եմ սիրահարվել**» և այլն⁶²:

Բուհերի՝ լեզվի անադարտությունը պահպանելու դերը շատ մեծ է: Մինչդեռ մեր կրթահամակարգն իր բովանդակությամբ այսպիսի խնդիր լուծել չի կարողանում: Կարծես այսօրվա կրթահամակարգի խնդիրը միանգամայն այլ է՝ «համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխան քաղաքացիներ կրթելն է»: Հայաստանում այսօր սնկի պես աճում են օտարալեզու, օտարամշակույթ հաստատություններ՝ և՛ պետական, և՛ մասնավոր: Գիտատեխնիկական հայալեզու գրականության բացակայության պատճառաբանությամբ ամուր են

⁶² Տե՛ս **Պ. Բեդիրյան**, *Հայ լեզուն և մեր խոսքը*, Արևելահայերեն խոսքի ուղեցույց, Ե., 1999:

պահվում ռուսերենի դիրքերը, համակարգիչներ ներդնելով «անփոխարինելի» դարձնում անգլերենը: Շատերն են ցանկանում կրթվել օտար լեզվով՝ մոռանալով, որ բարեկեցության առաջին պայմանը սեփական լեզվի իմացությունն է: Մեր կարծիքով, իր երեխային օտարալեզու դպրոց տվող հայաստանաբնակ հայը գոհաբերում է ն՝ իր, և՛ իր զավակի ազգային արժանապատվությունը՝ ստեղծելով պարարտ հող օտարամտության համար:

Ճիշտ է, թեև ժամանակը ստիպում է մարդուն տիրապետել առնվազն երկու լեզվի (այդ երևույթը բնութագրվում է ազգային լեզուների փոխազդեցությամբ և փոխադարձ հարըստացմամբ), սակայն, ինչպես լեզվի նկատմամբ անփույթ վերաբերմունքի և լեզվական ցածր մշակույթի, այնպես էլ երկրորդ լեզուն վատ տիրապետելու պատճառով ի հայտ են գալիս բազմաթիվ սխալներ ու լեզվական շեղումներ:

Ռուսերեն բառերի մի մեծ խումբ (եթե բավարարվենք միայն բառերով՝ *պրիվետ, պակա, վաբշե, մարշրուտկա, աստանովկա, մոստ, մարոժնի, զոնտիկ, լիֆտ, պերերիվ, դակումենտ, մոստ, սադ, ռուչկա, շկաֆ* և այլն) լայնորեն գործածվում է խոսակցական հայերենում: Գուցե այս փաստը կարելի է բացատրել պարզ սովորության ուժով: Դժվար է նույն կերպ բացատրել Երևանում ռուսական դիմելաձևի (Այսինչ Այսինչովիչ) լայն տարածումը: Ակնհայտ է, որ ռուսական դիմելաձևը Երևանում դեռևս հարգանքի և հասարակական որոշակի կարգավիճակի ճանաչման և արտահայտման անփոխարինելի արտահայտություն է: Կամ՝ խոսակցական լեզվի արտասանական համակարգում ռուսերենից հայերեն ներթափանցած բառերը ռուսերենի նմանությամբ արտաբերելու սովորությունը:

Մաքուր, գեղեցիկ հայերեն խոսք այժմ, իհարկե, հաճախ կարելի է լսել՝ հասարակական վայրերում, ընտանիքներում: Քիչ չեն այն մարդիկ, որոնք ուշադիր են իրենց խոսքի նկատմամբ, սիրով, երկյուղածությամբ են վերաբերվում մայրենի լեզվին և չեն գործածում վերոհիշյալ և այլ անհարկի, ոչ հայերեն

բառեր: Բայց ովքեր անփույթ են իրենց խոսքի նկատմամբ, չեն ինսայում մայրենին, նրանք, բնականաբար, իրենք իրենց չեն ինսայում: Այս սովորույթի ուժը հատկապես մեծ է միջանկյալ բառերի նկատմամբ (**դաժե, վայոժե, գատո, նեուժելի, պոստը, վարշե, վարշե տը, վոբշեմ** և այլն):

Հասարակության տնտեսության, մշակույթի զարգացման հետ օրեցօր շատ ավելի մեծանում է անգլերեն կամ եվրոպական այլ լեզուներից վերցված բառերի տեսակարար կշիռը՝ **ok, please, thanks, hy, bye, «FULL ա», «BREND-ովի ա», «LIKE անել», «Լայքեք** և տարածեք», **Ֆոի քաո** ենք անում», **Ֆլեշմոք** ենք անելու», **«Քենսլ** արա», **«Քումենթել** եմ», **«Քոփի** եմ արել», **«Էսօր փարթի ա», «Անցկացվում է քաստինգ», «Սերը իրա մոտ պիկ ա տվել», «Ստատուսդ** կբարձրանա» և այլն:

Փաստորեն, եթե մի կողմից՝ նկատվում է Երևանում հայերենի դիրքերի ամրապնդման միտում, ապա մյուս կողմից՝ գնալով մեծանում է ժողովրդական զանգվածների՝ ռուսերենին և անգլերենին տիրապետելու աստիճանը: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ ժամանակն անհատից պահանջում է ռուսերենի, անգլերենի լավ իմացություն, և դրանց իմացության պակասը աշխատանքային գործունեության մեջ կարող է զգալի դժվարությունների առաջ կանգնեցնել, հետևաբար՝ մարդիկ չեն կարող չարձագանքել այդ երևույթին, չեն կարող նկատի չառնել կյանքի թելադրող պահանջները:

Հայերենը տիրապետող է Երևանի պետական ու հասարակական-քաղաքական կյանքում, գեղարվեստական գրականության ոլորտում: Երևանում հիմնականում հայերեն է նաև տեղեկատվական զանգվածային միջոցների լեզուն, ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերի գերակշիռ մասը: Սակայն չպետք է մոռանալ, որ այսօր մամուլի լեզուն բազմաշերտ է: Ինչ վերաբերում է հեռուստատեսությանը, ապա որոշ հաղորդումներում հնչում է մաքուր գրական հայերենը, սակայն նույնը չի կարելի ասել հեռուստատեսիվայների կամ որոշ երգիծական հաղորդումների մասին, որոնցում հաստատապես աղավաղված է

գրական հայերենը: Փողոցի լեզուն մտել է հեռուստատեսություն. երևույթ, որը շատ վտանգավոր է, հետևաբար անհրաժեշտ է հեռուստալեզվի նկատմամբ մասնագիտական և պետական լուրջ վերահսկողություն սահմանել:

Լեզվապահպանությունը ինչպես ազգային, այնպես էլ պետական լուրջ հիմնահարց է, բայց, ցավոք, դուրս է մնացել կարևորագույն համարվողների շարքից: Հայի սուրբ պարտականությունն է ուսում ստանալ հայերեն, կրթվել, մտածել, խոսել և արարել հայերեն, քանի որ ազգային նկարագիր ունեցող մարդն ինքնին արժեք է:

Մեր ժողովրդի մեծագույն հարստությունը լեզուն է, որը պետք է պաշտպանված լինի բոլոր ոտնձգություններից:

Gamoyan Lusine- Current State of the Yerevan Language.-The vocabulary of the spoken language of Yerevan is a constantly changing and developing sphere, where linguistic and extra-linguistic, literary and non-literary different variants and realities are mutually influenced.

Nowadays, the colloquial Armenian and literary Armenian of Yerevan apparently are separated from one another. This gap between colloquial and literary Armenian considerably weakens the position of Armenian in a number of spheres (official documents, education, science, technology, etc.). The problems are various starting from correct pronunciation to syntactic structures.

Гамоян Лусине- Современное состояние языка Еревана.- Разговорная лексика Еревана, постоянно меняющаяся и развивающаяся область, где взаимно влияют элементы и реалии языковых и внеязыковых, литературных и нелитературных, а также дополнительных форм.

Сегодня, очевидно, разговорный язык отделился от литературного. Этот разрыв в повседневном разговорном и литературном армянском языке значительно ослабляет позиции армянского языка в ряде областей (официальная переписка, образование, наука, техника и т.д.). Есть много вопросов - начиная от орфоэпии до синтаксических структур.

Մելքոնյան Լուիզա
(Երևանի պետական համալսարան)

**ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆ ԽՈՍՔՈՒՄ**

Լեզվի բառապաշարում արտացոլվում է հասարակական կյանքի ամեն մի փոփոխություն՝ գիտատեխնիկական նորագույն նվաճումները, հասարակական-քաղաքական նոր հարաբերությունները, սոցիալ-տնտեսական և կենցաղային նոր երևույթները: Այս նոր հասկացություններն արտահայտելու համար լեզուն մի կողմից ստեղծում է նոր բառեր, որոնք ժամանակի ընթացքում կարող են մերվել կամ չմերվել գործուն բառաշերտին, կամ այլ լեզուներից կատարում է փոխառություններ:

Փոխառություն կատարելու լեզվական գործոնը պայմանավորված է լեզվակիրների՝ տվյալ առարկայի մասին իրենց գիտելիքները լրացնելու, խորացնելու և ընդլայնելու ձգտումով, ինչպես նաև իմաստային ու գործառության ինքին հատկանիշների միջոցով տարբերակելու, մասնավորեցնելու տվյալ հասկացությունը: Վերջինս առնչվում է այն իրողությանը, երբ տրվյալ լեզվի հոմանիշային կամ հականիշային շարքում հայտնվում է փոխառյալ ձևը, որն ունի իմաստային լրացուցիչ երանգավորում կամ դրսևորում է կիրառության տարբերություններ (հանդես է գալիս այլ ոլորտներում):

90-ականներին հայոց լեզվում զգալիորեն մեծացավ փոխառությունների հոսքը: Դա պայմանավորված էր երկրի քաղաքական կյանքում, տնտեսության, մշակույթի բնագավառներում, ինչպես նաև հասարակության սոցիալական գիտակցության մեջ տեղի ունեցած փոփոխություններով: Այդ բառերը թափանցում են գրական լեզվի բառապաշար նոր երևույթի, նոր հասկացության, նոր առարկայի, սարքավորման երևան գալու հետ միաժամանակ և գործածվում են այնքան ժամանակ, մինչև

լեզվում ստեղծվի համապատասխան համարժեքը: Երկրի քաղաքական կյանքում սկսեցին հարմարվել նոր հասկացություններին և օտար տերմինները տիրապետող դարձան գիտության ու տեխնիկայի առաջատար ոլորտներում, առևտրաֆինանսային ոլորտում, ինչպես՝ **լեկտորատ աուդիտ, բրոքեր, դիլեր, ինվեստիցիա, հոլդինգ, մոնիտորինգ, փեյջեր, ֆայլ, ֆաքս** և այլն: Մշակութային ոլորտ թափանցեցին այնպիսի բառեր, ինչպես՝ **բլոքբաստեր, թրիլեր** (հոգեբանական մոտեցմամբ դետեկտիվ ժանրի հրապուրիչ ֆիլմ կամ գիրք), **լեկտորո, հիթ, շոու, շոումեն, ռեմիքս** (երգի, ֆիլմի փոփոխված տարբերակը), **սաունդտրեկ** (որևէ ֆիլմում հնչող երաժշտություն), **սերիալ, վեսթեռն**⁶³ (ֆիլմ կամ գիրք 19-րդ դարի ԱՄՆ-ի արևմուտքի, առավելապես քովբոյների կյանքի մասին), **տրեկ** (երգ), **հիփ-հոփ, ֆանք, սոուլ** (երաժշտական ոճեր) և այլն: Արագ փոխվեց նաև կենցաղային խոսքը՝ իր մեջ առնելով ոչ հայկական անվանումներ՝ **լանչ, համբուրգեր, հոթդոգ, չիզբուրգեր, չիպս, պիցցա, թրաֆիկինգ, տրանսֆերտ, բանկոմատ, քարթրիջ** և այլն: Քանակական տեսանկյունից նորագույն փոխառություններում գերակշռում են արտաքին փոխառություններն ու պատճենումները՝ անցման միջնորդավորված եղանակով (առավելապես ռուսերենի միջնորդությամբ):

Հասարակական կյանքի փոփոխությունները, նորանոր հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը պատճառ են դառնում, որ բառապաշարը ոչ միայն համալրվի, հարստանա բառային նոր միավորներով ու նոր բառիմաստներով, այլև վերաբաշխում կատարվի բառային միավորների ու իմաստների միջև, այսինքն՝ տեղի է ունենում բառային միավորների անցում բառապաշարի մի շերտից մեկ այլ շերտ: Այդ առումով առանձնացնում ենք փոխառություն-օտարաբանություն անցումը, երբ օտար փոխառյալ բառերի թարգմանվում է օտար բառի

⁶³ Թեև այս հասկացությունը եղել է վաղուց, բայց *վեսթեռն* բառը, որևէ բառարանում նշված չէ:

հայերեն համարժեքը, մինչ այդ գործածական փոխառությունը համարվում է օտարաբանություն և մերժելի գործածության առումով:

Սակայն այս հարցին պետք է որոշ վերապահումով մոտենալ. երբեմն փոխառյալ բառի իմաստային որոշ նրբերանգներ հայերեն բառում չեն արտահայտվում. ասենք, ինչպե՞ս կարելի է թարգմանել **շոու** բառը, **շոումեն**, **բիզնես**, **պրոդյուսեր**, **վիրտուալ**, **օլիգարխ**, **բոմժ**, **սերիալ**, **դիզայներ**, **կաստինգ** բառերը, իսկ թարգմանելու փորձերն էլ իմաստը ամբողջությամբ չեն արտահայտում. **մոնիտորինգը** նույն **դիտումը**⁶⁴ չէ. դա դիտում է հատուկ նպատակով, որևէ երևույթի ուսումնասիրությունն է՝ դրան հետևելու միջոցով: **Դիզայներ** բառի համար գործածում են կա՛մ **դերձակ**, կա՛մ **ձևավորող**, կա՛մ **գեղարար** տարբերակները, սակայն **դիզայները** միայն դերձակը կամ միայն ձևավորողը չէ. այդ բառի մեջ հասկացվում են այդ բոլոր իմաստները միաժամանակ: **Բոմժ** բառը չի նշանակում միայն *մուրացկան* կամ *անտուն*, *տնանկ*. երկու իմաստներն էլ միաժամանակ գիտակցվում են: **Սերիալ** բառի համար ստեղծվել է **հեռուստանովել** տարբերակը, որը, սակայն, այնքան էլ նույնը չէ. **հեռուստանովել** կարող են կոչվել հեռուստատեսային տարատեսակ հաղորդաշարեր, որոնք շարունակական բնույթ ունեն. սերիալը հատուկ առանձնահատկություններ ունեցող հեռուստատեսային ֆիլմ է և կարող է անվանվել հենց այդպես՝ **սերիալ**: Երբեմն փոխառյալ բառի իմաստը արտահայտելու համար նկարագրական կառույց են գործածում, այսինքն՝ հնարավոր չէ այդ իմաստն արտահայտել մեկ բառով, ինչպես՝ **բիժուտերիա**-ոչ թանկարժեք զարդեր, **քիլեր**-վարձու մարդասպան, **քաստինգ**-դերասանների (աշխատողների) ընտրութ-

⁶⁴ Օտար բառերի համար տրվում են դրանց ոչ միայն բառարանային բացատրությունները, այլև այն իմաստները, որոնցով դրանք գործածվում են տարբեր ոլորտներում:

յուն⁶⁵, **SMS**-կարճ հաղորդագրություն: Այս բառերը դժվար է բնութագրել որպես օտարաբանություն, հետևաբար նաև՝ գործածության առումով անհանձնարարելի: Երբեմն նաև իմաստային-բովանդակային անհամապատասխանություն է նկատվում, ինչպես **դոպինգ** տերմինի համար հանդիպում է **խթանիչ** բառը, սակայն հայերեն այս ձևը չի ընկալվում որպես գոյական համարժեք, *խթանիչ* բառն ավելի ածականական ընկալում ունի, և այդ բառի հետ գործածում են նաև *դեղամիջոց* գոյականը՝ *խթանիչ դեղամիջոց*:

Վինետկա բառի փոխարեն հանդիպում է **խմբանկար** հայերեն տարբերակը, սակայն նկատենք, որ վինետկան ոչ թե խմբի նկար է կամ նկար խմբով, այլ առանձին անձերի նկարների հավաքածու է: **Անեկդոտ** բառը թարգմանվել է **խնդուկ**⁶⁶, սակայն այս նոր բառը և՛ կազմության, և՛ իմաստային առումով ընկալելի չէ որպես *անեկդոտ*-ի համարժեք: **Դիկտոֆոն** տերմինի համար ունենք հայերեն **խոսագիր, թելադրագիր** բառերը, սակայն հայերեն երկու տերմիններն էլ գործածական չեն: **Բրելոկ** բառի համար գործածում են **կախազարդ**-ը, սակայն նշենք, որ *կախազարդ* բառը՝ որպես զարդի անվանում, համապատասխանում է օտար *կուլոն* բառին, իսկ *բրելոկ* իմաստի համար գործածում են *բանալիների կախազարդ* կապակցությունը. փաստորեն թարգմանելիս արհեստականորեն երկարում է առարկայի անվանումը, որի պատճառով էլ գործածության մեջ չի երևում: **Ատեստատ** բառի փոխարեն գործածում են **ավարտական վկայական** բառակապակցությունը, որը, սակայն, ավելի երկար լինելու պատճառով չի գործածվում. նկատենք նաև, որ ավարտական վկայականը կարող է վերաբերել

⁶⁵ *Քաստինգ* բառի համար Ռ. Մաքսպետոյանի «Արևմտահայերենի բառարանում» նշվում է *նախազտում* հայերեն տարբերակը, որը, սակայն, իմաստային առումով այնքան էլ նույնը չէ և չի կիրառվում:

⁶⁶ Նկատենք, որ «Բններորդ հրաշալիք» ամսագրում *անեկդոտ* բառի փոխարեն բոլոր դեպքերում գործածվում է *խնդուկ* բառը:

ոչ միայն դպրոցն ավարտելուն. ցանկացած բնույթի դասընթացի ավարտին տալիս են ավարտական վկայական, մինչդեռ *ատեստատը* վերաբերում է հենց դպրոցն ավարտելուն: Նույն կերպ և **դիպլոմ** բառի փոխարեն հանձնարարվում է **վկայագիր** բառը, որը իմաստային առումով թերի է. լրացուցիչ տեղեկության կարիք ունի *դիպլոմ*-ին համապատասխանելու համար: **Բոնուս** բառի փոխարեն գործածում են **սարգևավճար** տարբերակը, սակայն իմաստային առումով այս երկու բառերը համարժեք չեն, քանի որ *բոնուսը* կարող է լինել նաև միավորների տեսքով, իսկ *սարգևավճար* բառը ենթադրում է գումարային վճար: Նշենք, որ *սարգևավճար* բառը հանձնարարվում է նաև **սրբամիա** օտար բառի փոխարեն: **Բանկետ** փոխառյալ բառի համար որպես փոխարինող համարժեք հանդիպում են **ճաշկերույթ, խնջույք** բառերը, սակայն *բանկետը* միայն *ճաշկերույթ, խնջույք* չէ. դա ճաշկերույթ է՝ որևէ մեկի պատվին կամ որևէ առիթով և այլն: Նկատենք, որ հայերեն համարժեքներ ունեցող որոշ օտարաբանություններ դեռևս գործուն են բառակազմության մեջ՝ որպես բաղադրիչ, ասենք՝ **բիզնես** փոխառյալ բառի համար ունենք **գործարարություն** հայերեն տարբերակը, սակայն հայերեն բառը գործածության մեջ չի փոխարինում օտար բառին, մանավանդ բառակազմական բաղադրիչի դերում. օրինակ՝ «**բիզնես-համաժողով, բիզնես-քննարկում**» կառույցներում **գործարարություն** տարբերակը գործուն չէ և չի փոխարինում օտար փոխառությանը:

Երբեմն փոխառված բառը բազմիմաստ է լինում, և իմաստներից մեկն արտահայտելու համար հայերենը ստեղծում է համարժեք բառ, և օտար բառը դառնում է օտարաբանություն, անցնում ոչ գործուն բառաշերտ, իսկ մեկ այլ իմաստով գործածվելիս այն դիտվում է իբրև փոխառություն. օրինակ՝ **ակցիա** < ռուս. акция < ֆր. action բառը մի դեպքում ֆինանսական տերմին է և ունի հայերեն **բաժնետոմս, բաժնետիրոջ** համարժեք բառերը, և այդ իմաստով գործածվելիս **ակցիա** բառը օտարաբանություն է, մեկ այլ իմաստով այն նշանակում է

գործողություն, միջոցառում, որը կատարվում է քաղաքական կամ տնտեսական նպատակներ իրականացնելու համար: Հայերեն մեկ բառով այս իմաստը չի արտահայտվում, ուստի այս իմաստով *ակցիա* բառը փոխառություն է: **Ակտիվ** օտար բառը նշանակում է **գործուն, գործունյա, եռանդուն, ներգործող** և այս իմաստներով այն արդեն օտարաբանություն է. իսկ երկրորդ իմաստով նշանակում է «*որևէ կազմակերպության, հիմնարկի, կուսակցության և այլնի առավել գործուն մասը*», այս բառը նշանակում է նաև «*հիմնարկության, կազմակերպության ունեցվածքը*». այս իմաստներով *ակտիվ* բառը փոխառություն է: **Անալիզ** տերմինը նշանակում է «*վերլուծություն, ուսումնասիրության մեթոդ*» և այս իմաստով օտարաբանություն է, սակայն բժշկագիտության մեջ այն կիրառվում է որպես միակ ձև, հայերեն համարժեք չունի և ընդունվում է որպես փոխառություն: Բազմիմաստ տերմինները թարգմանելիս երբեմն ստեղծվում են առանձին իմաստներին համապատասխան հայերեն առանձին տերմիններ, որոնք օտար բառի իմաստը մասնավորեցնում, որոշակիացնում են՝ ըստ կիրառության ոլորտի, ինչպես՝ օտար **ռեցեպտ** տերմինը գործածվում էր և՛ բժշկագիտության ոլորտում, և՛ սննդի արդյունաբերության մեջ. այս բառի բժշկագիտական իմաստի համար այժմ գործածվում է **դեղատոմս**, իսկ սննդի արդյունաբերության մեջ՝ **բաղադրատոմս** համարժեքները: **Միսիա** բառի փոխարեն գործածվում են **առաքելություն** և **ներկայացուցչություն** տարբերակները. երկուսն էլ հասարակական-քաղաքական ոլորտի բառեր են: **Պարկ** օտար բառին՝ որպես առօրյա գործածական բառի, փոխարինել է **գրասպազի** տարբերակը, իսկ որպես տրանսպորտի ոլորտի տերմինի՝ **հավաքակայան** տարբերակը (հմմտ. *տրամվայի հավաքակայան*):

Փոխառությունների և օտարաբանությունների մեջ առանձնանում են այսպես կոչված էկզոտիզմները՝ այն օտար բառերը, որոնք արտահայտում են որևէ ժողովրդի կենցաղին, մշակույթին բնորոշ առարկաներ, երևույթներ, հասկացություն-

ներ, իրեր, և որոնք գոյություն չունեն մեկ այլ ժողովրդի մշակույթում, կենցաղում:

Այս բառերը, ըստ էության, փոխառություններ են, որոնք, սակայն, փոխառվում են ոչ թե նրանց անվանաձ առարկաների ու երևույթների հետ, այլ վերցվում են առանց առարկաների և գործածվում են միայն հենց այդ առարկաների մասին խոսելիս: Այսպիսի նպատակային գործածություն ունեցող բառերը Պ. Պողոսյանը անվանում է օտարամոծություններ. «Դրանք այն բառերն են, որոնք առնվում են օտար միջավայրից և տվյալ պահի թելադրանքով գործածվում խոսքում⁶⁷ միջավայրի անմիջականությունը ընդգծելու կամ տվյալ գաղափարն այլ կերպ արտահայտելու հնարավորություն չունենալու պատճառով»⁶⁷: Հեղինակը նշում է նաև, որ օտարամոծությունների դիմում են այն գրողները, որոնց ստեղծագործության բովանդակությունը դուրս է գալիս հայրենի երկրի միջավայրից և ընդգրկում տարաշխարհիկ սոցիալական ու աշխարհագրական միջավայր⁶⁸: Իսկ Ֆ. Խլղաթյանը, խոսելով օտար ժողովուրդների կյանքին, կենցաղային սովորույթներին վերաբերող հասկացություններ արտահայտող այս բառերի մասին, դրանք անվանում է **տարաշխարհիկ բառեր**⁶⁹:

Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ օտար, մասնավորապես ռուս լեզվաբանական գրականության մեջ տարակարծություններ կան: Մեզ հետաքրքրող բառաշերտը նրանք անվանում են «**էկզոտիզմներ**»⁷⁰: Այս բառերը հատուկ քննության նյութ են դարձել անցյալ դարի կեսերին: Ա. Գվոզդևը

⁶⁷ Պ. Պողոսյան, *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ*, հ.1, Ե., 1990, էջ 161:

⁶⁸ Նույն տեղը, էջ 162:

⁶⁹ Տե՛ս Ֆ. Խլղաթյան, *Ոճաբանական բառարան*, Ե., 2000, էջ 159:

⁷⁰ Տե՛ս В. Ярцева, *Большой энциклопедический словарь, Языкознание*, М., 1998, с. 158, Т. Жеребило, *Словарь лингвистических терминов*, М., 2010, с. 461.

դեռևս 1955թ. գործածում է «Էկզոտիկ բառապաշար» տերմինը⁷¹, իսկ լեզվաբան Լ. Շչերբան նշում է, որ «այս բառաշերտի դերը ոչ միայն ազգային նկարագրի լեզվական փոխանցումն է ամբողջությամբ, այլև պայմանական ակնարկ է տվյալ տարածաշրջանի մասին»⁷²: Քանի որ այս բառերի օգնությամբ հեղինակները ներկայացնում են այլազգիների սովորույթները, օտար իրականությանն առնչվող իրողությունները, հասկացությունները, դրանք ժամանակակից գրական լեզվում հիմնականում չունեն իրենց համարժեքները. դրանց ստեղծման անհրաժեշտությունը չկա: Ըստ Էդ. Ադայանի՝ այս կարգի բառերը *հատկական փոխառություններ* են. «Դրանց առանձնահատկությունն այն է, որ նրանք մեծ մասամբ գործածվում են այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է տվյալ երկրին կամ ժողովրդին»⁷³:

Էկզոտիզմները փոխառություններ են և սովորական փոխառություններից տարբերվում են նրանով, որ դրանց արտահայտած առարկաներն ու երևույթները հատուկ չեն հայ կյանքին: Նկատենք նաև, որ էկզոտիզմները հիմնականում վերաբերում են որևէ ժողովրդի կենցաղին և մշակույթին. դրանք հագուստի, արդուզարդի, կենցաղային առարկաների, սննդի տեսակների, կրոնական հասկացությունների անվանումներ են, որոնք բնորոշ են կոնկրետ ժողովրդի, չունեն համարժեքներ կամ հոմանիշներ հայերենում (նաև այլ լեզուներում) և չեն թարգմանվում, օրինակ՝ **կունիս, մաչետե, թեկիլա, ռոմ, բուլերո, սարի, սուշի, ռագու, կուլիչ, մատրյոշկա, սոլյանկա, չադրա, ֆես, նարգիլե, գեյշա, գոնդոլ** և այլն:

Թարգմանական գրականության մեջ նման բառերը համարվում են անթարգմանելի ռեալաներ: Նկատենք նաև, որ կան

⁷¹ А. Гвоздев, *Очерки по стилистике русского языка*, М., 1955, с. 85-86.

⁷² Л. Щерба, *Избранные работы по русскому языку*, М., 1957, с. 119-120.

⁷³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Է. Ադայան և ուրիշներ, *Հայոց լեզու*, հ.1, Ե., 1980, էջ 330:

այլ ժողովուրդների կենցաղին ու մշակույթին վերաբերող շատ բաներ, որոնք ունեն հայերեն համարժեքներ, օրինակ՝ **սամովար-ինքնաեռ**. այս դեպքում արդեն **սամովար** բառը օտարաբանություն է, և եթե տեքստում գործածված է **սամովար** տարբերակը, ապա գործ ունենք օտարաբանության պատճառաբանված կիրառության հետ: Հեղինակը նախապատվությունը տվել է օտար բառին համապատասխան միջավայր ստեղծելու նրպատակով: Այսպիսով, էկզոտիզմները ոչ թե օտարաբանություններ, այլ փոխառություններ են, քանի որ չունեն համարժեքներ:

Պետք է նկատել, որ թեև փոխառություն և էկզոտիզմ երևույթները տարբերակվում են, այնուամենայնիվ դրանք բացարձակորեն սահմանազատված չեն, և հարց է ծագում. հնարավոր է արդյոք, որ էկզոտիզմը ինչ-որ մի ժամանակահատվածում մերվի տվյալ բառաշերտին և դառնա սովորական փոխառություն: Ուսումնասիրված գրականության մեջ այս հարցի առնչությամբ որևէ հստակ նկատառում չկա: Մեր կարծիքով հնարավոր է, որ էկզոտիզմը վերածվի սովորական փոխառության այն դեպքում, երբ տվյալ առարկան, երևույթը, հասկացությունը մի այլ ժողովրդի մշակույթից, կենցաղից աստիճանաբար ներթափանցի մեր միջավայր և դառնա դրա բաղկացուցիչ տարր: Հատկապես խոհանոց, կենցաղ ներկայացնող բառերը ավելի շատ են ենթակա վերոնշյալ անցման, ինչպես ասենք **պիլմենի, պիցցա, սպագետտի** բառերը, որ սկզբում հայերենի բառապաշար մտան որպես էկզոտիզմ, այսօր արդեն դարձել են սովորական փոխառություններ, քանի որ թափանցել են հայկական խոհանոց և կորցրել իրենց բուն ազգային ուտեստ լինելու հատկանիշը: Դրան հակառակ՝ կրոնական ոլորտ ներկայացնող բառերը մնում են էկզոտիզմներ (**մինարե, մզկիթ, դուրան, շարիաթ**): Ինչ-որ առումով էկզոտիզմներ կարելի է համարել նաև այն հատուկ անունները, որոնք գործածական չեն հայկական միջավայրում և հուշում են կոնկրետ ազգային

կամ կրոնական պատկանելության մասին, ինչպես՝ **Մալվա-
որ, Ջուզեպպե, Մուհամեդ** և այլն:

Անդրադառնալով փոխառությունների, էկզոտիզմների և օտարաբանությունների՝ ոճական արժեքին՝ նկատենք, որ փոխառություններն այդ առումով ակտիվ տարրեր չեն. դրանց գործածությունը հատուկ ընտրության արդյունք չէ, քանի որ դրանք ինչ-որ առարկա, երևույթ արտահայտելու միակ անվանումներն են, ուստի պատկեր կամ կերպար ստեղծելու գործընթացում հատուկ նպատակով չեն գործածվում: Ինչպես ընդհանրապես փոխառությունները, այնպես էլ էկզոտիզմները մասնավորապես ոճական-արտահայտչական առումով ակտիվ տարրեր չեն: Այդ բառերը առավելապես անվանողական միավորներ են, թեև անվանողական արժեքից բացի ունեն նաև հատուկ ոճական-արտահայտչական երանգավորում. ստեղծում են միջավայրի ճիշտ գունավորում:

Օտարաբանություններն այդ առումով առավել նպատակային տարրեր են, քանի որ դրանց գործածության հիմքը բառընտրությունն է: Եթե դրանց գործածությունը անթույլատրելի է համարվում չեզոք-գործնական տեքստերում, ասենք՝ պաշտոնական գրագրության կամ փաստաթղթերի լեզվում, ապա գեղարվեստական տեքստերում դրանց կիրառությունը հատուկ ոճական նպատակ և երբեմն անփոխարինելի արժեք ունի. դրանք նպաստում են կերպարի, միջավայրի ընդհանուր տիպականացմանը և խոսում են հեղինակի հատուկ նպատակադրման մասին:

Melkonyan Luiza- Foreign uses and loans in the Modern Armenian .- In the different stages of development process, loanswords are considered effective factors of completing lexicon of the Armenian language. Loan of new words is arranged with the influence of foreign culture, with the emerge of new actualities, subjects and understandings. Recurrence to loans is a regular process, loans as denominations of new appearance are necessary for language, also if we can account the fact that with the appearance of new actualities mainly in the first

period are taken from foreign denominations. Only subsequently due to copies of word structure and word-structural patterns are emerged Armenian equivalents, which, at first, being used with the loanword, gradually can push it and can become winners in that competition of word usages.

Мелконян Луиза- Заимствованные слова и варваризмы в современном армянском языке.- В течение разных стадий своего развития, включая новейший период, лексика армянского языка пополнилась заимствованиями из русского и других языков. Новейшие заимствования появились как наименования новых событий, предметов, явлений, которые сформировались и появились в течение двух последних десятилетий в результате изменений в социальной жизни. Проникновение слов в неактивный слой лексики происходит под влиянием языковых факторов, в частности в результате перевода заимствованного иностранного слова, когда создается его армянский эквивалент и заимствование уже выходит из употребления, проникает в неактивный слой лексики, пополняя ряды архаичных слов.

**ԷԶՄԻԱԾՆԻ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՆԵՐԻ
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Տեղանունները, որպես լեզվի ընդհանուր բառապաշարի միավորներ, դասվում են հատուկ անունների շարքը: Հատուկ անունները հասարակներից տարբերվում են քերականական, ուղղագրական, հատկապես իմաստային որոշ հատկանիշներով, որոնք էլ հնարավորություն են տալիս հատուկ անունները դիտել իբրև լեզվական ինքնուրույն միավոր:

Հատուկ անունների և տեղանունների իմաստային առանձնահատկությունն այն է, որ այդ բառերը, ի տարբերություն հատուկ գոյականների, արտահայտում են ոչ թե հասկացական իմաստ, այլ անվանում են եզակի, անհատական հասկացություն: Հատուկ անունները և տեղանունները անվանում են առանձին առարկա, օբյեկտ, ուստի ձևաբանական մակարդակում անհոգնական են: Տեղանունները կողմնորոշիչ նշաններ են, որոնք պարունակում են ուղղակի տեղեկություն անվանակոչված օբյեկտի մասին՝ տեղանվանահիմք դարձած բառի միջոցով: Տեղանունները քաղաքակրթության արդյունք են, առանց դրանց անհնար է պատկերացնել շփումը ժողովուրդների և երկրների միջև: «Մշակույթի, գիտության և ընդհանրապես քաղաքակրթության զարգացումը հանգեցնում է առանձին լեզուների տեղանունների շերտի անընդմեջ ընդլայնման»⁷⁴:

Տեղանուններն օժտված են հարուստ բովանդակությամբ և տեղեկատվությամբ: Տեղանունների բառակազմական վերլուծության միջոցով կարելի է բացահայտել տվյալ ազգային լեզվի զարգացման գրեթե բոլոր շրջանների օրինաչափու-

⁷⁴ Ն. Դիրարյան, Պատմաաշխարհագրական և լեզվական գործոնները Հայաստանի տեղանուններում, Ե., 2001, էջ 4:

յունները: Աշխարհագրական անունները անգնահատելի նշանակություն ունեն պատմության համար: Դրանք կարող են ապրել դարեր: Հետաքրքիրն այն է, որ դրանք երբեմն ոչ մի փոփոխության չեն ենթարկվում և պահպանելով իրենց նախնական անունը՝ հակասություն են առաջացնում փոփոխված իրողության մեջ:

Տեղանվան ծնունդը արդյունք է երեք գործոնների՝ պատմական, աշխարհագրական, լեզվական:

Աշխարհագրական անունները վկայում են նաև հասարակարգերի բնույթի մասին: Ցանկացած տարածաշրջանում կարելի է հանդիպել աշխարհագրական անուններ պատմական ամենատարբեր շրջաններից: Դրանք որպես անգնահատելի փաստ ծառայում են լեզվի պատմությանը՝ մեզ հասցնելով շատ այնպիսի բառեր, ձևեր և հնչյուններ, որոնք արդեն գոյություն չունեն կենդանի խոսքում: Դրանց միջոցով կարելի է վերականգնել լեզվի նախկին վիճակը: «Տեղանունը լեզվական փաստ է՝ ամրագրված տարածքայնորեն, դրանք մեզ հասնում են դարերի, հազարամյակների միջոցով, թույլ տալիս ուսումնասիրել անցյալի լեզվական երևույթները աշխարհագրորեն՝ որոշելով դրանց տարածական սահմանները»⁷⁵: Սրանք ժողովրդական ստեղծագործությունների, կենցաղի, հավատալիքների ուսումնասիրության համար շոայլ ու անգնահատելի աղբյուրներ են:

Տեղանվանագիտությունը չի գործառում նորահայտ ու ինքնակերտ բառերով, տեղանունները ծնվում են լեզվի սովորական բառերից և ենթարկվում համապատասխան ձևափոխությունների:

Տեղանվանագիտությունը լեզվի պատմության, բառարանագիտության, բառագիտության և լեզվաբանության այլ բաժինների խաչմերուկում է և անքակտելիորեն կապված է պատմությանը, աշխարհագրությանը, ազգագրությանը: Ամեն մի ժամանակաշրջան ունի իրեն հատուկ «տեղանվանագիտա-

⁷⁵ **В.А. Никонов**, *Введение в топонимику*, М., 1965, ст.14.

կան բառախումբը», որն ամբարում է տվյալ պետության, հասարակության, նյութական և հոգևոր մշակույթի զարգացման աստիճանը⁷⁶:

Սույն հոդվածում ուսումնասիրվել են Արմավիրի տարածաշրջանի միայն գյուղանունները: Առավելապես կենտրոնացել ենք Վաղարշապատի տարածաշրջանի տեղանունների վրա՝ ուսումնասիրելով նաև մանրատեղանունների հիմնական մասը(այգի, դաշտ, աղբյուր և այլն): Նշենք, որ Արմավիրի տարածաշրջանի մեջ մտնում է երեսունինը, իսկ Վաղարշապատի տարածաշրջանի մեջ՝ քառասունեք գյուղ:

Էջմիածնի տարածաշրջանի տեղանունների իմաստաբանական քննություն: Տեղանվանահիմքերի գիտական դասակարգումը կատարվում է տարբեր սկզբունքներով՝ ձևաբանական, բառակազմական և իմաստաբանական⁷⁷: Հատկանվանագիտության մեջ ընդունված է տեղանվանահիմքերը նախ բաժանել երկու խմբի՝ պարտադիր (իմպերատիվ) և ոչ պարտադիր (ֆակուլտատիվ), ապա վերջիններս դասակարգել վերոհիշյալ երեք սկզբունքներով⁷⁸: Պարտադիր տեղանվանահիմքերի իմաստաբանական դաշտն ընդգրկում է. ա) աշխարհագրական-ֆիզիկական տարբեր եզրույթներ՝ լեռ, քար, ծով և այլն, բ) բուսական աշխարհի եզրեր, տեսակների անվանումներ, գ) կենդանանուններ՝ արջ, աղվես, գայլ և այլն, դ) եղանակային և բնական երևույթների անուններ՝ ձյուն, քամի, մրրիկ և այլն, ե) մարդու և կենդանիների մարմնամասերի անուններ՝ ոտ, ձեռ, բերան և այլն, զ) մետաղների և հանքատեսակների անուններ՝ ոսկի արծաթ, պղինձ և այլն, է) դիցանուններ և առասպելական ու պատմական հերոսների անուններ՝ աստված, ա-

⁷⁶ Ն.Պողոսյան, *Տեղանվանագիտության համառոտ դասընթաց*, Ե., 2008, էջ 6:

⁷⁷ А.Суперанская, *Структура имени собственного*, М., 1969, ст.41-43.

⁷⁸ Ն.Դիլբարյան, Հայկական տեղանվանահիմքերի իմաստային դաշտը, *Պատմաբանասիրական հանդես*, Ե., 2007, էջ14:

ռաքյալ, խաչ, բագին և այլն, ը) մասնագիտություն, արհեստ նշանակող բառեր՝ սայլվոր, դարբին, գրիչ և այլն, թ) ազգակցություն ցույց տվող բառեր՝ հայր, մայր, աղջիկ և այլն: Պարտադիր տեղանվանահիմքեր են դառնում նաև օբյեկտները բնութագրող որոշիչները, մակդիրները՝ վերին, ներքին, բարձր, ցածր, մեծ, փոքր և այլն: Օբյեկտները բնութագրող որոշիչներով հարուստ են հատկապես մանրատեղանունները: Այդ որոշիչները ստույգ նկարագրում են տվյալ աշխարհագրական օբյեկտը: «Փոքր աշխարհագրական օբյեկտների անունները, որոնց հայտնիությունը դուրս չի գալիս այդ վայրում ապրող մարդկանց նեղ շրջանակներից, ընդունված է կոչել մանրատեղանուններ»⁷⁹: Մանրատեղանունները ոչ մեծ բնական կամ արհեստականորեն ստեղծված (ձեռակերտ) օբյեկտների անհատական անվանումներն են, որոնք սովորաբար արտացոլում են դրանց բնույթն ու հատկանիշները: Բնակչության փոփոխությունը հանգեցնում է մանրատեղանունների զանգվածային փոփոխությունների, հետևաբար մանրատեղանունները կազմում են տեղանվանագիտության առավել շարժուն մասը: Սույն տարածաշրջանում ևս ակնհայտ է այս երևույթը՝ կապված մանրատեղանունների անվանումների փոփոխությունների հետ: Մանրատեղանուններ կազմելիս շատ են հանդիպում հատկապես անձնանուններ (Համոյի դաշտ, Նուշոյի այգի և այլն): Այս տեղանունները ոչ միայն անվանում են համապատասխան օբյեկտը, այլև վկայում դրա պատկանելությունը: Ուսումնասիրված տարածաշրջանի (Էջմիածնի և Արմավիրի) տեղանունները դասակարգենք ըստ իմաստային դաշտերի:

Տեղանքի միավորներ նշանակող բառերը տեղանուններում: Տեղանքի միավորներ նշանակող բառերը կամ աշխարհագրական եզրույթները չափազանց հաճախ են հանդիպում տեղանուններում, և նման բառերից ծագած տեղանունները, թերևս, կարելի է համարել հնագույն կառուցվածքներ

⁷⁹ А.Суперанская, նշվ. աշխ., ժ.42.

կամ կադապարներ: Որովհետև հնում մարդիկ տեղանունները նույնացնում էին տեղանքի աշխարհագրական միավորների հետ, օրինակ՝ հնում մարդը ծովը անվանել է ծով, լեռը՝ լեռ: Տեղանքի միավորները կամ բնակավայրերի եզրույթները տեղանունների հիմք են դառնում մի շարք եղանակներով. եզրույթը ուղիղ ձևով վերածվում է տեղանվան: Այս տիպի անվանումները բավական սակավաթիվ են մեր տարածաշրջանի տեղանուններում, և ընդհանրապես այս եղանակը գործուն չէ հայերենի արդի շրջանում: Այս տարածաշրջանում հանդիպում է այս տիպի կազմության ընդամենը մեկ օրինակ՝ *Դաշտ*:

ա) Փոքր-ինչ ավելի տարածված են նման բառերից տարբեր ածանցներով կազմված տեղանունները, օրինակ՝ *Այգեկ, Արևիկ, Շենիկ*. երեքն էլ գյուղանուններ են: Այս շարքին կարելի է դասել նաև գրաբարի «ք» հոգնակերտով կազմված տեղանունները, որոնց «ք» բաղադրիչը աստիճանաբար կորցրել է հոգնակիության իմաստը: Տարածաշրջանում այդպիսի ընդամենը մեկ օրինակ կա՝ *Լիճք*, որը աղբյուրի անվանում է:

բ) Բարդ բառ-տեղանուններ, որոնց բաղադրիչներից մեկը տեղանքի միավոր նշանակող արմատ է: Այս կադապարի տեղանունները ամենագործուն են եղել հայերենի զարգացման բոլոր շրջաններում: Իսկ «քար», «սար», «ձոր» տիպի հիմքերն այսօր կորցրել են իրենց իմաստային բովանդակությունը՝ վերածվելով տեղանվանակերտ ձևույթների: Այս կադապարի տեղանունների բազմաթիվ օրինակներ կան տարածաշրջանում: Օրինակ՝ *Առատաշեն, Արագաի, Արևադաշտ, Երասխահուն, Լուսագյուղ, Ջրաշեն, Հայկաշեն, Կողբավան*. նշվածները գյուղանուններ են:

գ) Բառակապակցական տեղանուններ: Տեղանքի միավոր նշանակող բառերով կազմված բառակապակցական տեղանունների բոլոր օրինակները մանրատեղանուններ են: Այս տարածաշրջանում ընդհանրապես բառակապակցական կառույցները հատուկ են միայն մանրատեղանուններին: Օրինակ՝ *Իշխանաց այգի, Թթի այգի, Ջրադացի առու, Ակնաշենի ջրանցք*,

Ծաղկալանջ բլուր և այլն: Ուսումնասիրված տարածաշրջանում տեղանքի միավորներ նշանակող բառերով կազմված տեղանունները շատ են: Սրանց թիվը հասնում է մոտ երեք տասնյակի: Այսպիսի կադապարներում առանձնացվում են որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ կառուցներ: ա) Որոշիչ-որոշյալ՝ *Ծաղկալանջ բլուր, Սևքար, Սևջուր, Ծանծաղ լիճ* և այլն: բ) Հատկացուցիչ-հատկացյալ՝ *Աղավնատուն, Բշխանաց այգի, Խամերի դաշտ, Խնձորի այգիներ, Սևջրի կամուրջ, Ջրադացի թառակ* և այլն: Ակներև է, որ այս տարածաշրջանում հատկացուցիչ-հատկացյալով կառույցներն ավելի շատ են: Սրանք ցույց են տալիս պատկանելություն: Սեփականատիրության հոգեբանությունն ակնհայտ է, դա ապացուցում են նաև բազմաթիվ մանրատեղանունները՝ կազմված անձնանուններից:

Կրոնական բովանդակության տեղանուններ: Ցանկացած ազգի անցած պատմական ուղին և դրա խտացումը՝ հոգևոր մշակույթը, իր աստիճանական զարգացմամբ արտահայտվում և մարմնավորվում է ոչ միայն նյութական հուշարձաններում, այլև ազգային լեզվում: Տեղանունների ուսումնասիրությունը թույլ է տալիս թափանցելու տվյալ ժողովրդի ունեցած գաղափարների շրջանակը:

Կրոնական բովանդակության տեղանունները նախ բաժանվում են հեթանոսական և քրիստոնեական խմբերի: Հեթանոսության ծնունդ տեղանունները, ծագումնաբանորեն ավելի հին լինելով, պատմական ու լեզվական ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Այս խմբի տեղանունների շարքում նախ առանձնացնում են հեթանոսական դիցարանի գլխավոր աստվածների և աստվածուհիների անուններից ստեղծված տեղանունները: Մակայն ուսումնասիրված տարածաշրջանում այս տիպի անուններից կազմված տեղանուններ չկան: Հեթանոսության պաշտամունքի հետ կապված կա մեկ տեղանուն՝ *Բազարան* (գյուղանուն): Բնականաբար այս անունը ծագել է մինչքրիստոնեական շրջանում և կապված է հեթանոսական

հավատքի հետ: Քրիստոնեական տեղանունները հասկանալի պատճառով (այն, որ Էջմիածինը հայոց հոգևոր կենտրոնն է) շատ ավելի մեծաթիվ են: Կրոնական բովանդակության տեղանունների ստեղծման հիմքում ընկած են անվանակոչման երեք սկզբունքներ՝

ա) ըստ անձնանունների,

բ) ըստ անվանվող օբյեկտին բնորոշ հատկանիշների,

գ) ըստ տվյալ վայրում գտնվող եկեղեցու կամ վանքի:

Այս տարածաշրջանի՝ կրոնական բովանդակության տեղանունները կազմվել են անձնանունների հիմքի վրա: Անձնանունը տվյալ տեղանվան գլխավոր բաղադրիչն է դառնում: Սրանք հիմնականում եկեղեցիների, ուխտավայրերի, մատուռների անուններ են: Օրինակներ՝ *Սբ. Հովհաննես եկեղեցի*, *Սբ. Թովմա առաքյալի եկեղեցի*, *Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցի*, *Սբ. Ստեփանոս եկեղեցի*, *Թուխ Մանուկ ուխտավայր*, *Սբ. Կարապետ ուխտավայր*, *Սբ. Սարգիս եկեղեցի*, *Սբ. Հարություն եկեղեցի*, *Սբ. Ստեփանոս Նախավկա եկեղեցի* և այլն: Աստվածածին բաղադրիչով կազմված անունները շատ տարածված են այս տարածաշրջանում: Միայն Էջմիածնի տարածաշրջանի յոթ գյուղերի սրբավայրերը անվանակոչված են Սբ. Աստվածածին անունով:

Կենդանանուններից ածանցված տեղանուններ: Կենդանանուններն այն լեզվական բաղադրիչներն են, որոնցից բավական արդյունավետ բաղադրվում են տեղանունները, ընդ որում տեղանվանակերտման այս կաղապարն առավել տարածված էր լեզվի հնագույն և հին ժամանակներում: Այս տեղանունները մեծավ մասամբ փոխաբերական աշխարհագրական եզրույթներ են ստեղծում⁸⁰: Կենդանանուններից կազմվող հայերենի տեղանունները իմաստաբանորեն դասակարգելիս առանձնացվում է 4 տիպ՝ ա) վայրի և բ) ընտանի կենդանանուններից, գ) թռչունների, դ) սողունների անուններից կազմված տե-

⁸⁰ Ն. Դիլբարյան, *Պատմաաշխարհագրական և լեզվական... Էջ 41:*

դանուններ: Ընդհանրապես հայերենի տեղանուններում իրենց քանակով ու տարածման հաճախականությամբ աչքի են ընկնում «արջ» բառից կազմված տեղանունները՝ *Արջաքարեր, Արջավազ, Արջագազաթ* և այլն: Տարածված են նաև «գայլ» բառով կազմվածները: Այս բառով բարդ տեղանունները ամենակենսունակն են, երբեմն գայլը դառնում է նաև գոյական որոշիչ, օրինակ՝ *Գայլգետ*: Ուսումնասիրված տարածաշրջանում կա գայլ կենդանանունից կազմված ընդամենը մեկ օրինակ, այն էլ բառակապակցական՝ *Գայլի բներ* դաշտ: «Աղվես» կենդանանունով երեք տեղանուն է արձանագրվել, որոնք երեքն էլ բառակապակցական մանրատեղանուններ են՝ *Աղվեսի դաշտ, Աղվեսի բներ այգի, Աղվեսաձոր ձոր*: «Խոզ» կենդանանունից բաղադրված տեղանունները սակավաթիվ են: Այս տարածաշրջանում կա մի կամուրջ, որն անվանում են *Խոզանցի կամուրջ*: Սողունների անուններից բաղադրված տեղանուններում միանշանակորեն հաղթողը «օձ» հիմքից կազմված ձևերն են: Այս տարածաշրջանի արոտավայրերից մեկն անվանում են *Օձաբլուր*, իսկ դաշտերից մեկը՝ *Օձկոնք*: Թռչնանուններից ամենամեծ տարածման գոտին ունեն *աղավնի, արագիլ, ագռավ, կաքավ* -ը: Այս տարածաշրջանում *Աղավնաձոր* անունով կա և՛ դաշտ, և՛ ձոր, և՛ գյուղանուն: Կա նաև մեկ գյուղանուն՝ *Աղավնատուն*: *Արագիլ* թռչնանունով կա մեկ օրինակ՝ *Արագիլի բներ* դաշտ: Հետաքրքիրն այն է, որ այս տարածաշրջանում կա նաև երկու մանրատեղանուն՝ բաղադրված միջատանուններից, դրանք են՝ *Մրջենանոց այգի* (բարբառային տարբերակ) և *Տգրկադաշտը*:

Բուսանուններից կազմված տեղանուններ: Բուսանուններից կազմված տեղանունները, ի տարբերություն կենդանանունները որպես հիմք ունեցող կառույցների, շատ ավելի կենսունակ ու գործուն են նաև արդի հայերենում: Բուսանունները ևս հեշտությամբ են դառնում տեղանունների հիմք: Սակայն այս կառուցվածքի տեղանունները երբեմն կապված չեն լինում անվանակոչվող միավորների բուսական բնութագրի

հետ: Օրինակ այս տարածաշրջանում կա մի գյուղանուն՝ *Տանձուտ*, որտեղ շատ հնարավոր է, որ բնավ էլ տանձենիներ չլինեն: Բուսանուններով բաղադրված տեղանունները նույնպես բաժանվում են 4 կադապարների՝ ա)անձուտյթ. այս տիպը տարածաշրջանում չի հանդիպում, բ) ածանցային՝ *Տանձուտ, Եղեգնուտ, Պտղունք, Ծաղկունք, Մրգաստան*, գ) բարդ, որտեղ դարձյալ վճռորոշ են տեղանվանակերտ դարձած «ձոր», «բլուր», «շեն», «սար» հիմքերով կազմվածները (կան այնպիսի տեղանուններ, որոնք կազմված են «շատ» տեղանվանակերտ մասնիկից և բուսանուններից՝ *Բալբակաշատ, Մրգաշատ, Բերքաշատ. ավան* հիմքով կազմված է *Փշատավան* տեղանունը), դ) բառակապակցային՝ *Բարդիների ծառուղի, Թթի այգի, Խնձորի այգի, Խոտնոց դաշտեր, Տանձանոց այգի, Ծիրանանոց այգի, Դեղձանոց այգի*: Ակներև է, որ բուսանուններից կազմված տեղանունները հիմնականում մրգերի անուններից են բաղադրված, որոնք մատնանշում են, թե սլյալ վայրում, օրինակ, որ միրգն է տարածված:

Մարմնամասեր նշանակող բառերից առաջացած տեղանուններ: Մարդու և կենդանիների մարմնամասեր նշանակող բառերից կազմված տեղանունները ժամանակագրական առումով ավելի հին շրջանի կառույցներ են: Մարմնի մասերի անվանումներից բաղկացած տեղանունները մարդու առարկայական մտածողության նախնական աստիճանի արտացոլումն են, մարդը նախ ճանաչում է իրեն, իր մարմինը, ապա փորձելով ճանաչել շրջապատը՝ ուղղակիորեն համեմատում է այն իր մարմնի հետ՝ գտնելով ընդհանուր եզրեր: Այսպիսով՝ մարմնամասերից առաջացած տեղանունները կազմվել են համեմատությամբ և համաբանությամբ⁸¹: Ամենահաճախ հանդիպողն ընդհանրապես *աչք* և *ակն* բառերից կազմված ձևերն են: Քննվող տարածաշրջանում *ակն* հիմքով կա երկու գյուղանուն՝ *Ակնաշեն, Ակնալիճ*. վերջինիս անունով կա նաև լիճ:

⁸¹ Ն. Դիլբարյան, *Պատմաաշխարհագրական և լեզվական...*, էջ 33:

Հանջ բառից ածանցված ձևերն ավելի մեծաթիվ են, այս կադապարը գործուն է նաև տեղանվանաստեղծման ներկա փուլում: *Հանջ*-ն այժմ վերածվել է ռելիեֆի աշխարհագրական անվանման, արտահայտում է առարկայի տարածական հարաբերություն: *Հանջ*-ով կազմված երկու օրինակ կա այս տարածաշրջանում՝ *Հանջակող, Ծաղկալանջ*: Էջմիածնի տարածաշրջանի գյուղերից մեկում՝ Արշալույսում, կա մի դաշտ, որ կոչվում է *Քարաքիթ*: Այն կարելի է բացատրել այսպես՝ քարի քիթ, այսինքն՝ ծայրը (այստեղ *քիթ* բառը իմաստափոխվել է): Մարմնամասեր նշանակող բառերով կազմված տեղանվան ևս մեկ օրինակ կա՝ կազմված *գոգ* մարմնամասով՝ *Լեռնագոգ*:

Գունանուններից կազմված տեղանուններ: Տեղանունների հիմքում դրվում են նաև գունանունները: Տեղանվանահիմք կարող են դառնալ գրեթե բոլոր գույները: Տեղանվան կազմում սրանք ոչ միայն սոսկ գունանուններ են, այլև բառեր, որոնք օժտված են հավելյալ իմաստային երանգներով՝ զգայական, ռճական կամ փոխաբերական: Օրինակ՝ կարմիրը կարող է դիտվել գեղեցկության կամ արյունահեղության խորհրդանիշ, սևը՝ ողբի, և այլն: Այս տարածաշրջանում գունանուններից կազմված տեղանունները հետևյալն են՝ *Կարմիր քարեր դաշտ, Սևքար դաշտ, Սպիտակ կամուրջ, Սևջուր, Սևջրի կամուրջ, Կարմրահյուլթ դաշտ, Սբ. Կարմրավոր եկեղեցի*:

Թվական տեղանվանահիմքով այս տարածաշրջանում *յոթ* թվականով կազմված ընդամենը մեկ օրինակ կա, որը աղբյուրի անուն է՝ *Յոթնաղբյուր*:

Անձնանուններից կազմված տեղանուններ: Անձնանուններից կազմված տեղանունները իրենց տարածվածությամբ չեն զիջում տեղանքի միավորներ նշանակող բառերից կազմված տեղանուններին: Բայց անձնանուններից կազմված տեղանունները համեմատաբար ավելի երիտասարդ են, քանի որ հնում մարդու մտածողությունը ծանրաբեռնված չէր կրոնական, գաղափարական հոսանքներով, հերոսների անուններով: 20-21-րդ դարերը բնորոշվում են անձնանուններից բաղադրված տեղա-

նունների բուն աճով, օրինակ՝ Տերյան, Թումանյան, Պուշկին, Աբովյան և այլն: Տարածաշրջանում բազմաթիվ են այս տիպի տեղանունների: Սրանք հիմնականում Վաղարշապատ քաղաքի և Զվարթնոցի փողոցների անուններն են, ինչպես՝ *Թումանյան, Լոմոնոսով, Չարենց, Շիրվանզադե, Կիրով* և այլն: Ակնհայտ է, որ անվանակոչման համար օգտագործվում են գիտության, արվեստի, քաղաքական ասպարեզի գործիչների անունները: Անվանակոչման երևույթը սերտորեն առնչվում է հասարակական-քաղաքական իրավիճակին: Դրա վառ ապացույցը Էջմիածնում վերանվանված մի փողոցի օրինակն է: Նախկինում *Կոլխոզներ* կոչված փողոցը այժմ վերանվանվել է *Նարեկացի*:

Mnatsakanyan Donara- Semantic Analysis of Toponyms of Echmiadzin and Armavir Areas.- In this work we have carried out the semantic examination of toponyms of Echmiadzin and Armavir areas and we have found out to which field of meaning the place names belong to. According to fields of meanings we have differentiated several meaning groups. Those groups are: 1.the toponyms, which are composed of words signifying place points,2. the toponyms composed of animal names, 3.the toponyms composed of plant names, 4.the toponyms composed of the word signifying names of body parts, 5. The toponyms with religious plot, 6.the toponyms composed of personal names. We have brought examples from each mentioned meaning field.

Мнацаканын Донара- Семантический анализ топонимов Эчмиадзинского и Армавирского районов.- В данной работе проведено семантическое изучение топонимов Эчмиадзина и Армавира. Согласно семантической классификации выделено несколько семантических групп. К этим группам относятся топонимы: 1. образованные словами, означающими единицы местности; 2. образованные зоонимами; 3. образованные фитонимами; 4. образованные словами, означающими части тела; 5. религиозного содержания; 6.образованные антропонимами. Приведены примеры из каждой упомянутой семантической группы.

Մարգարյան Լիանա
(Երևանի պետական համալսարան)

**ԲԱՅԵՐԻ ՄԵՌԱՅԻՆ ԱՆՑՈՒՄՆԵՐ ԱՐԴԻ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Լեզուները, պայմանավորված լեզվական և արտալեզվական գործոններով, պարբերաբար ենթարկվում են ինչ-ինչ փոփոխությունների, որոնք արտահայտվում են լեզվի տարբեր համակարգերում: Եվ ժամանակ առ ժամանակ ոչ միայն անհրաժեշտություն է առաջանում դրանց անդրադառնալու որպես լեզվական շեղումների, այլև ինչ-որ առումով պարտադիր են դառնում որակական այդ փոփոխությունների դիտարկումը, համակարգային կանոնարկումն ու ամրագրումը: Ժամանակակից հայոց լեզվի տարբեր համակարգերում (հոլովման, խոնարհման և այլն) նկատվող տեղաշարժերը դիտարկվել են լեզվաբանական տարբեր աշխատություններում⁸²:

Քննության նյութը բայի խնդրառական համակարգում վերջին 1-2 տասնամյակներում կատարվող տեղաշարժերը, իսկ ավելի որոշակի՝ մի քանի **բայերի սեռային անցումները**⁸³:

⁸² Արդի գրական հայերենի ձևաբանական համակարգի տեղաշարժերը քննվում են **Լ. Խաչատրյանի** «Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ» (Ե., 1985) աշխատությունում: Արտասանական և խոնարհման համակարգի տեղաշարժերը մանրամասն ներկայացվում են **Յու. Ավետիսյանի** «Տեղաշարժեր արդի գրական հայերենում» (Ե., 2011) ուսումնասիրության մեջ:

⁸³ Չենք անդրադառնում խնդրառական այն դրսևորումներին, որոնք՝ 1. ակնհայտ սխալ են, ինչպես, օր.՝ **Կծանոթացնեմ** գործերի *ընթացքը*, Թշնամին **գրոհում է քաղաքը** և այլն, 2. կրկնասեռ բայերին բնորոշ խնդրառություն են, ինչպես՝ **սովորել դասը**, **սովորել կլիմային**, **լավ սպրեյ**, անմոռանալի *օրեր ապրել*, **տիրել** (գրավել) *աշխարհամասը*, *լռություն տիրել* և այլն, 3. բայի՝ միայն համատեքստում փո-

Հայտնի է, որ քերականական համակարգը համեմատաբար կայուն է և շատ դանդաղ է ենթարկվում փոփոխությունների. հաճախ քերականական մի ձևից մյուսի անցումը կատարվում է դարի (եթե ոչ դարերի) ընթացքում: Այսուհանդերձ, համակարգի կայունությունը չի ենթադրում անշարժություն, և ամենատարբեր գործոններով պայմանավորված՝ լեզվական նոր որակներ մուտք են գործում նաև քերականություն՝ վերածվելով կանոնական ձևերի: Հայ քերականագիտության մեջ խնդրին տարբեր առիթներով անդրադարձել են տակավին անցյալ դարի կեսերից, տրվել են տարաբնույթ մեկնաբանություններ⁸⁴, որոնց ըստ անհրաժեշտության կանդրադառնանք:

Մեռային (խնդրառական) տեղաշարժերը պայմանավորող գործոնները տարբեր են՝ **բազմիմաստություն, իմաստի փոփոխություն, լեզվի տարբերակային ձևերի և օտար լեզուների ազդեցություն, քերականական ձևերի իմաստային առնչակցություն, սխալակազմություն, տարածվածություն հանրային գործունեության բոլոր ոլորտներում, խոսքի տնտեսման միտում, համաբանություն** և այլն: Եվ սրանք լեզվի զարգացման տարբեր փուլերում այս կամ այն չափով են ներգործում լեզվամիավորների որակական անցումների վրա (թեև հաճախ թվարկված գործոններից մի քանիսը միասնաբար են դառնում տեղաշարժի պատճառ):

խաբերական գործածությամբ պայմանավորված խնդրառություն են՝ *լաց լացել, երգ ճոնչալ, վիշտ կարկաչել, կարոտներ հեկեկալ* և այլն:

⁸⁴ Տե՛ս **Մ. Աբեղյան**, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, **Ա. Աբրահամյան**, *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք I, Ե., 1962, **Մ.Ասատրյան**, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, Ե., 1959, **Գ. Ջահուկյան**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, **Հ.Հարությունյան**, *Կառավարումը ժամանակակից հայերենում*, Ե., 1983 և այլն:

Խնդրառական տեղաշարժերը բնորոշ էին մեր լեզվի դեռևս նախորդ փուլերին. գրաբարից միջին հայերեն անցման ընթացքում բազմաթիվ բայեր կրել են սեռային փոփոխություններ: Պատճառները տարբեր են: Վ. Առաքելյանը նշում է, որ գրաբարում սեռային անցումները հիմնականում իմաստային փոփոխության հետևանք են: Անդրադառնալով գրաբարի **ե** խոնարհման ներգործական սեռի մի քանի բայերի՝ **բուրեմ, գայթակղեմ, խոտորեմ, խուճապեմ, շտապեմ, զիջեմ, ազդեմ, աշխատեմ** և այլն, գրում է. «Գրաբարի զարգացման ընթացքում **ե** խոնարհման ներգործական բայերի մի մասը սկսում է չեզոք դառնալ: Այս չեզոքացումը կատարվում է ամենից առաջ այն բայերի հետ, որոնք գործողության իմաստի հետ համատեղում են նաև շարժման դրության, վիճակի գաղափարը: Սկզբնապես նրանց մեջ արդեն չեզոք բայերի նախադրյալներ առկա են եղել... Հետագայում սեռացուցիչի թուլացման հետևանքով դրանք աստիճանաբար շարահյուսական նոր գործածություն են ձեռք բերում, այսինքն՝ կիրառվում են չեզոք բայերի խնդրառությամբ»⁸⁵: Կամ՝ Ռ. Բշխանյանը նշում է, որ նախկինում **ձեռնարկել** բայը չեզոք սեռից բաղադրիչների իմաստի մթազմման պատճառով դարձել է ներգործական: Այն գրաբարում գործածվել է «**ձեռք գցել**» նշանակությամբ և կապվել միայն տրական հոլովով դրված լրացման հետ: Իսկ հետագայում բաղադրիչների այդպիսի ըմբռնումը չի գիտակցվել, որի պատճառով փոխվել է նաև խնդրառությունը, և ներկայումս բայը դարձել է անցողական՝ գործածվելով ուղղական հոլովով դրված լրացումների հետ⁸⁶, ինչպես՝ **ձեռնարկել** նոր *գործ*, **ձեռնարկել** գրքի *հրատարակումը* և այլն:

⁸⁵ Վ. Առաքելյան, Սեռի քերականական կարգը և բայածանցները գրաբարում. – *Պատմա-բանասիրական հանդես*, Ե., 1980, № 2, էջ 73-74:

⁸⁶ Տե՛ս Ռ. Բշխանյան, Բայի սեռի կարգը արդի հայերենում. – *Հայկական ՄՍՌ ԳԱ տեղեկագիր. հասարակական գիտություններ*, Ե., 1, 1959, 11-12, էջ 79:

Ինչպես նշեցինք, գրաբարում և միջին հայերենում սեռային անցումները մեծ մասամբ **բառիմաստի** փոփոխության հետևանք են, և սեռի խնդրի **միակերպ** արտահայտությունը չի ազդում սեռային փոփոխության վրա: Այս հանգամանքը հարկ է հատուկ շեշտել, նաև մի քանի խոսքով անդրադառնալ դրան, որովհետև սեռային (նաև խնդրառական) տեղաշարժերը պայմանավորող գործոնները ժամանակակից հայերենում գրաբարի համեմատությամբ փոքր-ինչ այլ են:

Հայտնի է, որ գրաբարում **բայ+ուղիղ խնդիր** հարաբերության մեջ չկա **անձի** և **իրի** քերականական տարբերակում, ինչպես՝ «Եւ անդէն թագաւոր ի ներքն **կոչեցեալ զդարապետը...**» (Փավստոս Բուզանդ, «Պատմութիւն հայոց»), «Եւ թագաւորն **սպառազինէ զգօրսն...**» (Մեբեոս, «Պատմութիւն») և այլն: Կարծիք կա, որ անձի և իրի քերականական տարբերակումը սկսվում է 18-րդ դ. առաջին կեսերից⁸⁷, սակայն դրա սաղմերը նկատվում են դեռևս 15-17-րդ դդ. գրավոր աղբյուրներում, որոնցում անձի առման ուղիղ խնդրի տրականով արտահայտությունները, մեծ մասամբ զիջելով ուղղականաձև հայցականի կիրառություններին, գործածվում են դրանց հետ կողք կողքի, ինչպես՝ «զԱստուած կը պահէ ամէն **դարիպի, ...զսուրբն** քեզ եղբայր շինէ ու **զհրեշտակքն** արա սիրելի» (Մկրտիչ Նաղաշ, «Հայ դասական քնարերգություն») և այլն⁸⁸:

18-րդ դ. երկրորդ կեսից հստակ տարբերակվող անձի և իրի առումները, իսկ ավելի կոնկրետ՝ դրանց քերականական արտահայտությունները, այսօր արդեն զգալի ազդեցություն

⁸⁷ Տե՛ս **Հ.Պետրոսյան**, *Գոյականի առումները հայերենում*, Ե., 1960, էջ 140-141:

⁸⁸ Չենք անդրադառնում միջին հայերենում սեռային անցումներին: Ինչպես հայտնի է, այս փուլում հայերենը ներկայացնում է չկանոնարկված ու «խայտաբղետ» լեզվական համակարգ՝ հագեցած բարբառային տարբեր իրողություններով: Այս պատճառով քննվող խընդրի վերաբերյալ դժվար է հիմնավոր և որոշակի եզրահանգման գալ:

ունեն **բայի սեռային անցումների վրա**: Այլ կերպ ասած՝ գրաբարի համեմատությամբ արդի հայերենում սեռային-խընդրառական տեղաշարժերի վրա մեծացել է հատկապես քերականական տարբեր ձևերի իմաստային նույնության և խոսողի վերաբերմունքի ներգործման դերը: Ներկայումս շարժը կատարվում է առավելապես **բայ + ուղղական հոլովով դրված ուղիղ խնդիր** և **բայ + տրական հոլովով դրված անուղղակի խնդիր** հարաբերությունների տիրույթում⁸⁹: Հետաքրքիր է, որ իմաստափոխությամբ պայմանավորված սեռային տեղաշարժեր վերջին 2 տասնամյակներում չեն նկատվում: Ինչ խոսք, նշված շրջանը գուցե փոքր ժամանակահատված է իմաստային և որակական ինչ-ինչ անցումների համար: Սակայն մյուս կողմից չենք կարող չնկատել, որ հենց նույն ժամանակահատվածում կենսապայմանների, բարձր տեխնոլոգիաների, տեղեկատվականության զգալի առաջընթացն ու արագ զարգացումները իրենց արտահայտությունն են գտնում լեզվում, մասնավորապես բառիմաստի փոփոխություններում (բազմաթիվ բառեր, ներլեզվական զանազան օրինաչափություններով պայմանավորված, ընդլայնել են իրենց իմաստային դաշտը՝ **պատուհան, մկնիկ, խողովակ, քաշել, բանկ** և այլն): Այսուհանդերձ, ներկայացվելիք բայերը (**խանգարել, խոչընդոտել, կարոտել** և այլն) թեև սեռային (խնդրառական) ակնհայտ տեղաշարժի են ենթարկվել, սակայն ժամանակակից հայերենի բառարաններում արձանագրված իմաստ(ներ)ի համեմատությամբ իմաստային փոփոխություններ չեն կրել:

Թերևս բացառություն է *բավարարել* բայը, որը իմաստափոխության (իմաստի ընդլայնման) հետևանքով է ենթարկվել տեղաշարժի՝ վերածվելով կրկնասեռ բայի: Ըստ «Ժամանա-

⁸⁹ **Բայ+ուղիղ խնդիր** հարաբերությունը դիտարկելիս շեշտադրում ենք իրի առման ուղիղ խնդրի քերականական արտահայտությունը. հասկանալի է, որ անձի առման ուղիղ խնդիրը և հանգման անուղղակի խնդիրը ձևային տարբերակվածություն չունեն:

կակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի՝ այս բայը ունի 2 իմաստ՝ «1. Հերիք անել, 2. Գոհացնել, գոհացում տալ»: Երկու իմաստներով էլ ներգործական է: Նույն բայի դիմաց Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում նըշվում է 4 իմաստ՝ «1. Կատարել, ի կատար ածել, 2. Բավականացնել, հերիք անել, 3. Գոհացնել, պահանջներին գոհացում տալ, 4. Հայթայթել, ապահովել, մատակարարել»⁹⁰: Չորս իմաստների դեպքում էլ բայը դարձյալ ներգործական է և գործածվում է ուղղական կամ տրական հոլովով դրված ուղիղ խնդրի հետ: Սրանցից բացի՝ այսօր **բավարարել** բայը սահմանափակ կիրառություններում, կարծում ենք, գործածվում է նաև **համապատասխանել** իմաստով (հաճախ գործածվում է հենց այդ բայի փոխարեն): Այս նշանակությամբ արդեն այն չեզոք է և կիրառվում է տրականով դրված հանգման անուղղակի խնդրի հետ, ինչպես՝ «Թուրքիան ստիպված է լինելու **բավարարել** ԵՄ անդամության *չափանիշներին*»⁹¹: «ՀՀ-ն **չի բավարարում** ծրագրի *պահանջներին*» (www.operativ.am, 17.10. 2013): «Դրանք **չեն բավարարում մայրաքաղաքի** կենտրոնը կանաչապատելու համար սահմանված *չափանիշներին*» (www.hetq.am, 20.07. 2011): «Հայաստանը նախ և առաջ պետք է **բավարարի** (=համապատասխանի.- Լ. Ս.) եվրագոտի մտնելու տարրական օրենքներին («Առավոտ», 08.03.2004): Փաստորեն բայը դարձել է կրկնանսեռ՝ **ներգործական** և **չեզոք**:

Վերջին տասնամյակներում, կախված խոսողի վերաբերմունքից, շատ են «չարաշահվում» ոչ միայն անձի և իրի առման փոխնիփոխ գործածությունները, այլև տրական հոլո-

⁹⁰ Առավելապես առաջնորդվում ենք նշված երկու բառարաններով, քանի որ դեռևս սրանք են արտացոլում ժամանակակից հայոց լեզվի բառապաշարի հարաբերական ամբողջությունը:

⁹¹ «Նոյյան տապան», www.nt.am, 11.10. 2008: Այսուհետև էլեկտրոնային պարբերականներից հղումները կտրվեն շարադրանքում. փակագծերում կնշվեն կայքի հասցեն և հրատարակման ամսաթիվը:

վով դրված խնդրի փոխարեն ուղղականով (և հակառակ) դրբ-սևորումները, որոնք հետևանք են և՛ որոշակիորեն փոխված լեզվամտածողության, և՛ իմաստային դրսևորումների քերականական նույնության: Այս առումով առանձնացրել ենք մի քանի բայեր՝ **կարոտել, տենչալ, դավաճանել, դավանել, խանգարել, խոչընդոտել, խթանել**⁹², որոնք, գրական լեզվի կանոնի համաձայն, պետք է գործածվեին կամ տրականով դրված անուղղակի խնդրի, կամ ուղղականով դրված ուղիղ խնդրի հետ, սակայն այսօր զգալի չափով փոխվել է դրանց խնդրատու-թյունը:

Այսպես, **կարոտել** բայը, ըստ վերը նշված բառարանների, չեզոք է և անցյալում դրսևորում էր առավելապես չեզոք սեռի բայերին բնորոշ խնդրատու-թյուն՝ **բայ+տրական հոլովով դրված անուղղակի խնդիր**, ինչպես՝ «Բայց սիրտս, որ տարիներ **Կարոտել էր** մոր *գրկի*» (Հ. Շիրազ), «Թե *դաշտերին* ես **կարոտել...**» (Մ. Կապուտիկյան) և այլն: Սակայն նույն ժամանակահատվածում նշված կառույցին զուգահեռ գործածվել է նաև **բայ+ուղղական հոլովով դրված ուղիղ խնդիր** կաղապարը: Դժվար և ինչ-որ առումով արդեն անկարևոր է հստակ նշել, թե առաջին անգամ երբ է հանդիպում այս շեղումը, և կամ թե պնդել, որ սա անվերապահորեն սխալ կիրառություն է: Փաստ է, որ **կարոտել + իրի առման ուղիղ խնդիր կառույցները** (իհարկե, ոչ այնքան հաճախ) հանդիպում են դեռևս Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի և այլոց գործերում՝ «**Կարոտում է** Կաքավ գյուղի *աղբյուրը*» (Ա. Բակունց), «**Կարոտել էր** հայրենի *տունը*» (Դ. Դեմիրճյան): Ժամանակի ընթացքում այսպիսի գոր-

⁹² Այս բայերի խնդրատական տեղաշարժերին անդրադարձել են տարբեր լեզվաբաններ՝ Ա. Աբրահամյան, Հ. Հարությունյան, Մ. Ասատրյան և այլք: Նրանց վերը նշված աշխատություններում, սակայն, դրանք դիտվում են որպես խնդրատական տարբերակներ, և սեռային անցումը, պայմանավորված ժամանակաշրջանով և հատկապես երևույթի ոչ այնքան տարածվածությամբ, չի որոշարկվում:

ծածությունները դառնում են գերակա: Լեզվի զարգացման արդի փուլում սովորական և շատ տարածված են **կարոտում եմ օրերը, հայրենիքը, մթնոլորտը, տունը, մանկությունը** կառույցները: Մեկ-երկու բնագրային օրինակ՝ «Մեսրոպը **կարոտել էր իր հողը**» (Հ. Մաթևոսյան): «**Կարոտել եմ Գյումրիս**» (www.wordpress.com, 25. 03.1998), «Գերմանիայում եղած ժամանակ շատ **էի կարոտել** հատկապես *ընտանիքս, տունս, երեխաներիս*» («Արմենիա» ՀՀ, 15.07.2014) և այլն:

Կարոտել բայը, պայմանավորված խնդրի հետ ունեցած հարաբերությամբ, արևելահայերենում ենթարկվել է սեռային երկփեղկման: Ավելին, հենց այդ նույն հարաբերությամբ էլ առավել հստակ է դառնում խնդրառական միակերպության միտումը, և ակնհայտ նկատվում է անցում չեզոքից ներգործականի: Ի դեպ, այս բայի (ոչ միայն) սեռային տեղաշարժին անդրադառնում է դեռևս Ա. Աբրահամյանը՝ նշելով, որ առայժմ ոչ այնքան ցայտունությամբ, բայց նկատվում է «չեզոք հատկանիշի թուլացում, և բայը տատանումներ է տալիս անանցողականության (չեզոքի) ու անցողականության (ներգործականի) միջև»⁹³: Լեզվի արդի փուլում այս բայի սեռային նշանակության մեջ տիրապետող է դարձել ներգործականության իմաստը, և լեզվաբանի նշած «տատանումները» զգալի չափով թուլացել են: (Համենայն դեպս, պատկերն այդպիսին է ըստ մեր կատարած վիճակագրության, որին կանդրադառնանք):

Նույն փոփոխությունն է նկատվում նաև **տենչալ** բայի դեպքում: Կախված խնդրի հետ ունեցած հարաբերությունից՝ այն հիմնականում դրսևորում է ներգործական սեռի իմաստ: Ա. Աբրահամյանը, անդրադառնալով այս բայի խնդրառական շարժին, այն կարծիքին է, որ բայը չեզոքից ներգործական սեռային անցման գործընթացի մեջ է⁹⁴: Կես դար է անցել այս դիտարկումից, և հիմա թեև այս բայի համար հնարավոր չէ բա-

⁹³ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 689:

⁹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 694:

յասեռի վերջնական անցում արձանագրել, սակայն ուղղական հոլովով դրված խնդրի հետ գործածվելու հաճախականությունը նկատի առնելով՝ կարելի է ասել, որ այն ոչ թե գտնվում է սեռային երկփեղկման մեջ, այլ ամրապնդվում է դրա ներգործական նշանակությունը: Համենայն դեպս, լեզվի զարգացման ընթացքի վրա էականորեն ազդող միջոցների (մամուլի, ռադիոհեռուստատեսության, գրականության) լեզվում առավել հաճախադեպ և գերիշխող են դարձել **տենչալ + ուղղական հոլովով դրված խնդիր** կառույցները: Մի քանի օրինակ՝ «Հայ ծերուկը, ցուպը ձեռքին, լալով **տենչում է** հայրենիքի *ազատություն...*»: («Ազգ», 30.11.1999): (Ինչո՞ւ են այդ խենթ հայերը կյանքի գնով *տուն տենչում*» («Հայոց աշխարհ», 21.10.2009): «Ցմահ ազատագրվածը **տենչում է** *ազատություն* և *արդարադատություն*» («Իրավունք», 18.09.2013), «...**տենչում է** մի *ուս*՝ հենվելու համար» (Հ. Էդոյան) և այլն: Այսպիսի փոփոխության պատճառը, կարծում ենք, տենչալ բայի սերտ հոմանշությունն է **փափագել, ցանկանալ, ըղձալ** ներգործական բայերի հետ⁹⁵: Ընդ որում, այն գործածվում է ոչ միայն նշված հոմանիշ բայերի փոխարեն, այլև հաճախ հանդես է գալիս հենց դրանց հետ կողք կողքի՝ հայտնվելով քերականական-իմաստային նույն տիրույթում: Կարելի է ասել, որ այս բայի դեպքում սեռային անցման առաջնային գործոն է դարձել իմաստային համաբանությունը (ապա նաև տարածվածությունը կիրառության տարբեր ոլորտներում):

Նույնպիսի փոփոխության է ենթարկվել նաև **դավաճանել** բայը, որը չեզոք սեռի է⁹⁶: Վերջին 2-3 տասնամյակներում տարածվում և գերիշխող են դառնում այս բայի ուղղականով դրված խնդրի հետ գործածությունները: Կանոնավոր կառույց-

⁹⁵ Տե՛ս **Ա.Սուքիասյան**, *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009:

⁹⁶ Տե՛ս *Շամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Ե., 1969, **Է.Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976:

ների կողքին՝ **դավաճանել հայրենիքին, սկզբունքներին, գաղափարին** և այլն, հաճախադեպ են նաև ուղղակիանով դրված ուղիղ խնդրի կիրառությունները, ինչպես, օր.՝ «Պետք չէ **դավաճանել** հերոսների *հիշատակը*» («Ազգ», 18.10.2002): «Մի քանի անգամ **է դավաճանել հայրենիքը**» («Առավոտ», 03. 08. 2005): «Քվեարկել է առանց իր *սկզբունքները դավաճանելու*» (www.lragir.am, 01.10.2013): «Եթե մեկը այսօր **դավաճանում է իր կրոնը**, նա պատրաստ է **դավաճանել** անգամ իր սեփական *ընտանիքը* և *հայրենիքը*» (www.operativ.am, 08.01.2014): Համընդհանուր դարձող այս իրողությունը թույլ է տալիս ասել, որ առաջացել է չեզոքի և ներգործականի **սեռային երկփեղկում**՝ ներգործականի գերակայությամբ: Այսպիսի տեղաշարժի համար թերևս ամենակարևոր գործոնը խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն է, գուցե նաև համաբանությունը (չենք բացառում նաև սխալը): Խնդրառության ավանդական և նոր գործածությունները տարբերվում են միայն ձևով, և ինչպես նշում է Հ. Հարությունյանը, սրանք մակերեսային կառուցվածքով տարբեր, իսկ խորքային կառուցվածքով նույն ձևերն են⁹⁷: Բացի այդ՝ այս բայերի արտահայտած իմաստներն այնպիսին են, որ կարող են պահանջել գործողությունն իր վրա կրող առարկա՝ ուղիղ խընդիր: Եվ եթե չանտեսենք գործողության և օբյեկտի հարաբերության բազմազանությունը⁹⁸, ապա ըստ էության որևէ հակասություն չի ստեղծվում խնդրառական տարբերակի և եղած լեզվական կանոնի միջև: Երևույթը գնահատելիս գերծ ենք մնում կա՛մ մեկը, կա՛մ մյուսը ընտրելու ծայրահեղությունից: Կարծում ենք, որ հիմնականում խոսակցական տարբերակից գրական լեզու ներթափանցած այս գործածությունները հասկանալի են, բնավ **չեն հակասում** հայերենի քերականական օրինաչափություններին: **Դավաճանել** բայը ուղղակի համալրում է այն

⁹⁷ Տե՛ս **Հ.Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 212:

⁹⁸ Տե՛ս **Մ.Ասատրյան**, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում*, էջ 87-90:

ներգործականների շարքը, որոնց կրավորականի կազմությունները կա՛մ արհեստական են, կա՛մ չկան, ինչպես, օր.՝ **աղալ-աղացվել, ունեմ** - Ø, ուստի և ընդամենը կարող են համակարգվել, կանոնարկվել հենց այդ օրինաչափությունների շրջանակում:

Դավանել, խոչընդոտել և խանգարել բայերի խնդրառության յուրահատկությունները նախորդների հակառակ պատկերն են ներկայացնում: Երեք բայերն էլ, ըստ վերը նշված բառարանների, ներգործական են և պետք է գործածվեն ուղղականով կամ տրականով դրված ուղիղ խնդրի հետ, ինչպես՝ «Ես դեռ **դավանում եմ** այն օրերի *իմ հավատը...*» (Շ. Թաթևյան), «...Ես **չեմ դավանում օրենք** անիրավ...» (Հ. Թումանյան), «...փորձում են **խանգարել** Մացակի արքայական *քունը...*» (Հ. Մաթևոսյան), «Եվ նրա այդ *որոշումը* ոչ մեկը չէր կարող **խոչընդոտել...**» (Վ. Խեչումյան) և այլն: Խնդրառական այս ձևերի կողքին հատկապես վերջին տասնամյակներում հաճախական են դարձել իրի առման ուղիղ խնդրի փոխարեն տրական հոլովով դրված խնդրի (հանգման խնդրի) գործածությունները: Օր.՝ «Հորդառատ անձրևները **խանգարել են** ծաղկած ծառերի լիարժեք *փոշոտմանը*» (www.azg.am, 05.04. 2001): «Հայաստանն ու Իսպանիան **դավանում են** նույն *արժեհամակարգին*» (www.tert.am, 22.09.2006): «Շտապողաբար կեղծելով՝ նշում է, որ ինքը **դավանում է** *իսլամին...*» («Ավանգարդ», 10.07.2014): «Քաղաքացու ընտրական կամ հանրաքվեի իրավունքի ազատ *իրականացմանը* կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի *աշխատանքին* **խոչընդոտելը** պատժվում է տուգանքով» (ՀՀ քրեական օրենսգիրք, Հոդված 149) և այլն: Նշված բայերի դեպքում թերևս նկատելի է տեղաշարժը պայմանավորող մի քանի գործոնների միաժամանակյա ազդեցությունը. մի կողմից՝ խոսակցական լեզվում սխալակազմությունը աստիճանաբար ձեռք է բերում տարածվածություն, մյուս կողմից՝ քերականական ձևերի իմաստային առնչակցության և պարզ համարա-

նության փոխկապակցվածությունը ըստ էության անխուսափելի է դարձնում նման փոփոխությունը:

Հարցի քննության կամայական մոտեցումից խուսափելու, հնարավորինս օբյեկտիվ և հիմնավոր պատկեր ստանալու սկնկալիքով նշված (նաև ներկայացվելիք) բայերի խնդրառական-սեռային փոփոխությունների վերաբերյալ անցկացրել ենք որոշակի վիճակագրություն: Հարցմանը մասնակցել է 70 մարդ (բարձրագույն և միջնակարգ կրթությամբ 18-60 տարեկան անձինք՝ բացի բանասերներից): Հարցվածներից 11-ը ($\approx 15.8\%$) **կարոտել** բայի համար ճիշտ է համարել **կարոտել տանը, հայրենիքին** խնդրառական ձևերը: 38 հոգի ($\approx 54.2\%$) ընտրել է **կարոտել տունը, հայրենիքը** կառույցները՝ որպես ճիշտ տարբերակ: Իսկ 21-ը ($\approx 30\%$) նշված երկու տարբերակներն էլ համարել է հավասար գործածվող ձևեր:

Համանման պատկեր ունենք նաև **տենչալ, դավանել, դավաճանել, խոչընդոտել**⁹⁹, **խանգարել** բայերի դեպքում: Ներկայացնենք միայն վիճակագրության արդյունքները: Այսպես, **1.** տենչալ արդարության - 9 ($\approx 12.8\%$), տենչալ արդարություն - 46 ($\approx 65.8\%$), տենչալ արդարություն//արդարության - 15 ($\approx 21.4\%$), **2.** դավանել սկզբունք, կրոն-16 ($\approx 22.9\%$), դավանել սկզբունքի, կրոնի-41 ($\approx 58.6\%$), դավանել սկզբունքի, կրոնի// սկզբունք, կրոն-13 ($\approx 18.5\%$), **3.** դավաճանել հայրենիքին, սկզբունքներին-12 ($\approx 17.1\%$), դավաճանել հայրենիքը, սկզբունքները-44 ($\approx 62.9\%$), դավաճանել հայրենիքին, սկզբունքներին// հայրենիքը, սկզբունքները- 14 ($\approx 20\%$), **4.** խոչընդոտել (խանգարել) ստորագրումը, աշխատանքը -18 ($\approx 25.7\%$), խոչընդոտել (խանգարել) ստորագրումն, աշխատանքին-44 ($\approx 62.9\%$), խոչընդո-

⁹⁹ *Խոչընդոտել* և *խանգարել* բայերի վերաբերյալ վիճակագրության արդյունքները, ինչպես և սպասելի էր, գրեթե նույնական են. տրված 3 հնարավոր տարբերակների հարցման թվերը միմյանցից ավել կամ պակաս էին 1-2-ով: Ուստի այս բայերի վերաբերյալ հարցման արդյունքները ներկայացնում ենք միասնաբար:

տել (խանգարել) ստորագրմանը, աշխատանքին //ստորագրումը, աշխատանքը - 8 (≈11.4%):

Ուզում ենք շեշտել մի հանգամանք. ներկայացված խնդրառական տարբերակներից առաջին ձևերին նախապատվություն տված անձինք հիմնականում միջինից բարձր տարիք ունեցողներն են (կրթական մակարդակը այս դեպքում էական դեր չի կատարել): Ի մի բերելով հարցման արդյունքները և դրանք համեմատելով մեր ձեռքի տակ եղած տարաբնույթ տեքստերից քաղված օրինակների հետ, ինչպես նաև հաշվի առնելով դրանց գործածության հաճախականությունը (նաև հեռուստառադիոթերում)՝ ըստ էության ստանում ենք լեզվական իրողության փոփոխության գրեթե նույն պատկերը:

Հարկ է նշել, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր գրական նորմից շեղումները դիտարկել որպես տեղաշարժ (կամ փոփոխություն) և կամ կանոնարկման խնդիր դնել: Լեզվի զարգացման արդի փուլում որոշ բայերի դեպքում նկատվում են խնդրառական ինչ-ինչ փոփոխություններ, որոնք արդի լեզվավիճակի համար առայժմ սխալ կիրառություններ են, հիմնականում գուցե չիմացության հետևանք: Այսպես, **խթանել** բայը ներգործական է, այսինքն՝ կապվում է ուղղական հոլովով դրված ուղիղ խնդրի հետ՝ **խթանել զարգացումը, խթանել արտադրությունը, խթանել** մարդկային ռեսուրսների **աճը** և այլն: Մակայն հատկապես վերջին 4-5 (գուցե ավելի շատ) տարիների ընթացքում պարբերական և էլեկտրոնային մամուլի, ռադիոհեռուստատեսության տարաբնույթ հաղորդումների լեզվում ժամանակ առ ժամանակ սկսել են գործածվել **խթանել + տրականով դրված ուղիղ խնդիր** կառույցները: Օր.՝ «...**խթանում է** մազերի *սնուցմանը*՝ տալով յուրօրինակ փայլ» («Հ2» ՀԸ): «Այն ճանապարհային այդ հատվածում **խթանում է** երթևեկության *թեթևացմանը*» (www.tert.am, 11.04.2010): Այսպիսի կառույցները առայժմ զիջում են առաջին՝ կանոնավոր ձևերին՝ մոտ 18-20/1 հարաբերությամբ: Բացի այդ՝ հարցման արդյունքները (70-ից 54-ը) նույնպես վկայում են կանոնական **խթանել+ ուղղակա-**

նով դրված ուղիղ խնդիր կառույցի գերակայությունը: Ուստի նշված իրողությունը փաստում է, որ, ի տարբերություն վերոհիշյալ բայերի, այս դեպքում գործ ունենք ոչ այնքան լեզվական տեղաշարժի, որքան խնդրառական սխալի հետ, որը, սակայն, տարածվելու միտում ունի:

Սրանից բացի՝ տարբեր բայեր (անկախ սեռից), կախված խոսողի լեզվամտածողությունից, երևույթի նկատմամբ ունեցած անհատական վերաբերմունքից, նաև իրավիճակից, հնարավոր է՝ հանդես գան խնդրառական ոչ ճիշտ հարաբերությամբ, որը, սակայն, խոսողի նախընտրությունն է: Խոսքը մեծ մասամբ վերաբերում է իրի առման փոխարեն անձի առման գործածությանը, որը նշված դեպքերում առավելապես ոճական միավորի՝ անձնավորման արժեք ունի, որն ուղղակի արտահայտվում է քերականական ձևերի փոփոխության միջոցով, ինչպես՝ **ափսոսալ ծառերին, ողջունել հաղորդաշարին, մորթել խոզին, միացնել ռադիոյին** և այլն: Այսպիսի գործածությունները տարածված են հատկապես խոսակցական լեզվում (հանդիպում են նաև գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում): Այսօրինակ կիրառությունները որքան էլ եզակի չեն, այնուամենայնիվ ընդհանրապես չեն կարող նմանատիպ քննության նյութ դառնալ: Հակառակ դեպքում հնարավոր է հայերենի բայերի մի զգալի մասի համար արձանագրել սեռային-խնդրառական ինչ-ինչ փոփոխություններ:

Գրական լեզվի զարգացման արդի փուլում մի շարք բայեր, պայմանավորված տարբեր գործոններով, ենթարկվում են խնդրառական-սեռային տեղաշարժերի: Դրանք բնականոն զարգացման արդյունք են, որն է կերպ չեն հակասում մեր լեզվի քերականական օրինաչափություններին, բացատրվում, համակարգվում և կանոնարկվում են հենց այդ օրինաչափությունների հիման վրա:

Sargsyan Liana – Shifts in the System of Transitive and Intransitive Verbs in Modern Eastern Armenian.- In the article, several shifts in the system of transitive and intransitive verbs, taking place at the modern stage of literary language progress, are being reviewed which are conditioned by linguistic and extra-linguistic factors. Presented transitions are the result of natural development of language, by no means contradict the grammatical regularities of our language, can be explained, systematized and standardized within the framework of exactly these regularities.

Саркисян Лиана - Сдвиги в системе переходных и непереходных глаголов в современном восточноармянском языке.- В данной статье рассматриваются некоторые сдвиги в системе переходных и непереходных глаголов и в системе глагольного управления на данном этапе развития языка, которые обусловлены лингвистическими и экстралингвистическими причинами. Представленные сдвиги - результат естественного развития языка, никак не противоречат грамматическим закономерностям восточноармянского языка, систематизируются и нормируются в рамках этих закономерностей.

Մարգարյան Լուիզա
(Երևանի պետական համալսարան)

**ԻՄԱՍՏԱՓՈԽԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳՈՑԱԿԱՆԱԿԱԶՄ ԲԱՅԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ժամանակակից գրական հայերենի բայական բառապաշարի համադրական միավորները նոր կազմություններ չեն. նրանց հիմնական մասը փոխանցվել է հայերենի հին շրջանից կամ բարբառներից: Բայական բառույթները, որոնք կազմվել են անվանական հիմքերից բայական մասնիկավորմամբ, անվանական նախատիպ հիմքերի արտահայտած հասկացությունները ներկայացնում են բայական յուրահատուկ իմաստով՝ շարժման, փոփոխականության քերականական ընդհանրացումներով: Այս հոդվածում մեր նպատակն է քննել համադրական կազմությամբ գոյականակազմ բայերի և դրանց նախատիպ հիմքերի իմաստային առնչությունները և զարգացման օրինաչափությունները: Ուսումնասիրության մեջ անուն նախատիպի և բայի սերման հաջորդականության խնդրին չենք անդրադարձել՝ նկատի առնելով, որ գրավոր լեզվում (գրաբարից սկսած) դրանք արդեն ձևավորված էին և կիրառվում էին կողք կողքի:

Բառի իմաստը գտնվում է պատմականորեն տեղի ունեցող փոփոխությունների գործընթացում: Գիտության և մշակույթի առաջընթացը, ժողովրդի կյանքում քաղաքական-տնտեսական շրջադարձային տեղաշարժերը կամ այլ լեզուների ազդեցությունները նպաստում են բառիմաստի փոփոխություններին¹⁰⁰: Իմաստափոխությունը լեզվական այնպիսի իրողություն է, որն առավել ակնառու է դառնում լեզվի զարգացման տարբեր փուլերն ուսումնասիրելիս, ուստի անհրաժեշտ ենք համարել ուսումնասիրել գոյականակազմ բայերը՝ համեմա-

¹⁰⁰ Տե՛ս **Ա. Սուքիասյան**, *Ժամանակակից հայոց լեզուն*, Ե., 2008, էջ 111:

տության եզրեր ունենալով ժամանակակից հայերենը և գրաբարը: Քննել ենք բայի և գոյական նախատիպի իմաստային զարգացումը և ընդգծել դրանց կապը:

Ընտրված բառազույգերի նախատիպ հիմքերը, որպես կանոն, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»¹⁰¹ բառարանում ամրագրված են որպես գոյական: Մեր խնդիրն է եղել ըստ հնարավորին ներկայացնել գոյականակազմ բայերի և դրանց նախատիպ հիմքերի իմաստային զարգացումը ՆՀԲ-ի և հետագայում հրատարակված հայագիտական բառարանների նյութի համեմատությամբ:

Որպես բառիմաստի զարգացման արդյունք տարբերակել ենք ավանդաբար գոյություն ունեցող տեսակները՝ իմաստի նեղացում, լայնացում (ընդլայնում), բնեռացում, փոխհաջորդում: Պետք է նկատել, որ իմաստային փոփոխությունների այս 4 տեսակները՝ որպես իմաստի պատմական զարգացման դրսևորումներ, մեկուսացած չեն և հաճախ զուգորդվում են:

«Իմաստային իրողությունները ժամանակակից հայերենի բայական բառույթների մեջ խիստ բազմազան են. դրանք կարող են արտահայտվել հին իմաստի անհետացումով և նոր իմաստի առաջացումով ու հաստատումով կամ երբեմնի իմաստային տարբերակներից մեկի կամ մի քանիսի մթագնումով ու մյուսի կամ մյուսների պահպանումով և այլն»¹⁰²: Մեր ընտրած բառանյութի քննությունը ցույց տվեց, որ գրաբարից ավանդված նախատիպ գոյականները և նույնահիմք բայերը դարձել են բազմիմաստ կամ ընդլայնել են բազմիմաստության սահմանները և հաճախ դրսևորել են իմաստային առանձին զարգացումներ:

¹⁰¹ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, հհ. 1-2, 1836-1837:

¹⁰² Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, հ. 1, Ե., 1962, էջ 680:

Ավանդ գոյականը ժամանակակից հայերենում զգալիորեն փոխել է իր իմաստային նկարագիրը, ի տարբերություն նախորդ լեզվավիճակների՝ բառը ձեռք է բերել «1. (Ֆին.) *Պրամական գումար կամ արժեթղթեր*: 2. (իրավ.) *Պատական հիմնարկները մուծվող գումար՝ պահանջատերերին հանձնելու կամ պահելու համար (դեպոզիտ)*» մասնավորված իմաստները և «3. *փխբ. Գիտության, արվեստի, հասարակական գործի մեջ ներդրված արժեքավոր՝ նշանավոր բան, ներդրում*» իմաստները¹⁰³ և կորցրել է գրաբարյան «*կտակ*», «*գաղտնիք, խորհուրդ*», «*սովորություն*» նշանակությունները, հնացել է գրաբարյան «*ընծայ, նուէր*» իմաստը: **Ավանդել** բայում նախատիպի իմաստային փոփոխությունները չեն արտահայտվել: Բայում միայն իմաստի լայնացում է դրսևորվել. այն, բացի «*հանձնել ուրիշին, ուրիշի վրա փոխադրել*», «*պատվեր, խրատ տալ իբրև աւանդ*» (ՆՀԲ, հ. 1, էջ 389) գրաբարյան իմաստներից, ձեռք է բերել «1. *Իբրև ավանդություն պատմել*, 2. *Հաղորդել, պատմել* 3. *Պաս տալ, որևէ առարկա դասավանդել*» (ԱՀԲԲ) իմաստները, որոնցից առաջինը սերում է **ավանդ** գոյականի՝ «*որպէս Աւանդութիւն*» գրաբարյան իմաստից, որ պահպանվել է նաև ժամանակակից հայերենում:

Օտոս գոյականը լեզվի պատմական զարգացման հետևանքով ձեռք է բերել հիմնականում փոխաբերական բնորոշում ունեցող իմաստներ¹⁰⁴ և կորցրել «*զինաւոր*» իմաստը: **Օտոսյել** բայը գրաբարյան 4 իմաստների փոխարեն արդի հայերենում ունի 14 իմաստ, որոնք իմաստային ներքին զարգացման արդյունք են, այսինքն՝ բխում են գրաբարյան «*սպասա-*

¹⁰³ Տե՛ս է. **Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 118:

¹⁰⁴ «5. փխբ. Իրեն մի վեհ գործի նվիրած մարդ: 6. փխբ. Մեկին հլոթյամբ ենթարկվող մարդ, կամակատար: 7. փխբ. Մեկի կամ մի բանի կույր գործիք դարձած մարդ: 9. Գործածվում է մեկին մեծարելու՝ նրա նկատմամբ իր խոնարհությունը արտահայտելու համար» (ԱՀԲԲ, էջ 638):

տրել, հպատակել, ծառա լինել» իմաստներից¹⁰⁵: Հին հայերենում **ծառայել** բայը ուներ «պաշտել՝ սպաս տանել ի տանն Աստուծոյ» նշանակությունը, որը ԱՀԲԲ-ում առանձնացված չէ. պետք է նկատել, սակայն, որ ժամանակակից հայերենում այս բայը «եկեղեցում Աստծուն սպասավորել» իմաստով լայն կիրառություն ունի: Բարբառներում **ծառայել** բայը ունի նաև «կերակրել, սնուցել» իմաստը¹⁰⁶: Արդի հայերենում առանձնանում է «զինվորական ծառայություն կատարել» նշանակությունը, որը բխում է **ծառա** գոյականի գրաբարյան «զինաւոր» իմաստից. գրաբարում, սակայն, նշված իմաստը բայի մեջ չէր դրսևորվում: Ստ. Մալխասյանի բառարանում ևս այն որպես առանձին իմաստ նշված չէ, սակայն ընդգծված է **Զօրքի մեջ ծառայել** դարձվածքային միավորը՝ «*Զինուորական պարտականութիւնը կատարել*» նշանակությամբ¹⁰⁷:

Գանձ գոյականը իմաստի ընդլայնամբ ձեռք է բերել նոր նշանակություններ, որոնք գրաբարյան «*Մթերք և մթերանոց ընչից և մեծութեանց*» իմաստների զարգացման հետևանք են: **Գանձել** բայում վերաիմաստավորում է եղել. գրաբարյան «*ամբարել զգանձս, մթերել, ժողովել, պահել զինչս*» (հմմտ. 4.(հնգ.) Գանձ դիզել՝ հավաքել) իմաստները համարվում են հնացած (ԱՀԲԲ, էջ 221): Հին հայերենում **գանձ** գոյականը ունեցել է

¹⁰⁵ «1.Վարձու աշխատանք կատարել (մտավոր գործունեության բնագավառում կամ ֆիզիկական բնույթի, բայց ոչ թե արտադրության մեջ): 2. Աշխատել իբրև ծառա: 3. Զինվորական ծառայություն կատարել: 4. Սպասավորել, սպասարկել...10. Գործառել ըստ իր դերի, իր նշանակության: 11. Գործադրվել՝ օգտագործվել որպես մի բան: 12. Որոշ դեր՝ նպատակ՝ նշանակություն ունենալ:13. (հնգ.) Արհեստավորի աշակերտ լինել, մեկի մոտ արհեստ սովորել: 14. Մի քանի գոյականների (պատճառ, միջոց ևն) կապակցությամբ նշանակում է դարձնել, հանդիսացնել» (ԱՀԲԲ, էջ 640):

¹⁰⁶ Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Բ, Ե., 2002, էջ 396:

¹⁰⁷ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, (այսուհետև՝ ՀԲԲ), Ե., հ.2, 1944, էջ 331:

«Պետության դրամական հարստություն, եկամուտ, հասոյթ» նշանակությունը¹⁰⁸, որ դրսևորվել է **գանձել** բայի ժամանակակից իմաստներում, ինչպես՝ «1. Հասանելիքի վճարումներն ստանալ: 2. Փող՝ դրամ հավաքել: 3. Անդամավճար վերցնել» (ԱՀԲԲ, էջ 221):

Վերը քննված բայերի իմաստային զարգացումները փաստում են, որ նախատիպ գոյականների չպահպանված գրաբարյան նշանակությունները դրսևորվել են նույնահիմք բայերի ժամանակակից իմաստներում:

Գին գոյականը լեզվի պատմական զարգացման հետևանքով ձեռք է բերել նոր իմաստներ՝ «2. *Արժանիք, արժեք*: 3. *Վարձ, վարձավճար, վարձատրություն*: 4. *փխբ. Հատուցում, փոխհատուցում*» (ԱՀԲԲ, էջ 237), և կորցրել է գրաբարյան «գնուած իր, ինչք գնեալ» նշանակությունը (ՆՀԲ, հ. 1, էջ 552):

Գնել բայը իմաստի ընդլայնմամբ, բացի «գին տալով վաճառատնույ, ստանալ» նշանակություններից¹⁰⁹, ձեռք է բերել նոր իմաստներ, որոնք ունեն «փոխաբերական» ընդգծում և չեն սերում նախատիպ գոյականի նոր իմաստներից: Բայի նոր իմաստները բխում են գլխավոր՝ «*փողով առնել, ձեռք բերել*» նշանակությունից, հմմտ. «2. *փխբ. Կաշառել*: 3. *փխբ. Որնէ միջոցով ի նպաստ իրեն տրամադրել մեկին*: 4. *փխբ. Վաստակել, ձեռք բերել, նվաճել*» (ԱՀԲԲ, էջ 250):

Լար գոյականը իմաստի ընդլայնմամբ ձեռք է բերել նոր իմաստներ (5–ից 13)¹¹⁰, և կորցրել է «*չափման միավոր, հգ. լարք – պարանոցի ջիլ, թակարդ*» նշանակությունները (ՆՀԲ, հ. 1, էջ

¹⁰⁸Տե՛ս **Ռ. Ղազարեան**, *Գրաբարի բառարան*, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 308:

¹⁰⁹ Ռ. Ղազարյանը նշում է նաև «փխբ. Վաստակել, ձեռք բերել, նուաճել» իմաստները (տե՛ս **Ռ. Ղազարեան**, նշվ. աշխ., էջ 332):

¹¹⁰ «1. Թել, առասան: 2. Նվազարանի լար: 3. Թենիսի թնձակի վրա հյուսվածը: 4. Հաղորդալար, մետաղալար: 5. (կենդ.) թիկնալար: 6. (մաթ.) Որնէ կոր գծի կամ մակերեսի երկու կետերը միացնող ուղիղ և այլն» (ԱՀԲԲ, էջ 518):

879): **Լարել** բայի իմաստային զարգացումը չի բխում նախատիպի իմաստային զարգացումից: Բայում ևս դրսևորվել է իմաստի լայնացում (շուրջ 15), որ գերազանցապես ֆունկցիոնալ նմանությամբ է կատարվել, զարգացել է գրաբարյան «*Ձկտել զլար աղեղան ի ձգել անդ գնետն և Ձկտեցուցանել գոր ինչ և է*» նշանակությունը (հմմտ. «2. *Որևէ սարածի լարը պինդ ձգել, պրկել* 3. *Լարավոր նվագարանի լարերը ձգել կամ թուլացնել՝ հարկավոր բարձրության ձայնաստիճանն ստանալու համար*: 4. *Ընդհանրապես սարքել, պատրաստի վիճակի մեջ դնել* 5. *փխբ. Ջանք գործադրելով բարձրացնել որևէ բանի դրսևորման՝ գործունեության աստիճանը*» և այլն): Է. Աղայանի բառարանում բացակայում է Ստ. Մալխասյանի *+(գվռ.)* «8. *Ամանի ձաքը երկարել, մեծանալ*» իմաստը¹¹¹:

Կարգ գոյականը իմաստի ընդլայնման հետևանքով ձեռք է բերել նոր նշանակություններ (շուրջ 20), ինչպես՝ «*Կարգապահություն, կազմակերպման, գործերը վարելու ընդունված ձև, հետևողականություն և այլն*» (ԱՀԲԲ, էջ 703) և կորցրել «*Տող գրոյ*» նշանակությունը: **Կարգել** բայում իմաստի փոխհաջորդում է դրսևորվել. կորցրել է գրաբարյան «*դասավորել, ուղղել, յօրինել, որոշել, ճառել, վիպագրել, խոսել կարգաբանությամբ*» (ՆՀԲ) և ձեռք է բերել «1. *Որևէ պաշտոնի՝ աշխատանքի նշանակել, որևէ գործի դնել*: 2. *Որոշել, սահմանել*» իմաստները (ԱՀԲԲ, էջ 704), որոնք չեն անցնում նախատիպ գոյականի ձեռք բերած նոր իմաստներից: Գրաբարում **կարգ** գոյականը ուներ «*կարգաւորութիւն եկեղեցական աստիճանաց, մանաւանդ քահանայութիւն և եպիսկոպոսութիւն*» իմաստները, որ դրսևորվել է **կարգել** բայի արդի «3. *(Եկեղ.) Ձեռնադրել, եկեղեցական աստիճան շնորհել*» իմաստում (ԱՀԲԲ, էջ 704): Գրաբարում «*ռամկօրեն*» բնութագրվող «*ամուսնացնել*» իմաստը պահպանվել է և՛ արևմտահայերենում, և՛ բարբառներում: **Կարգել** բայը բարբառներում ունի նաև «*Չծախվող*

¹¹¹ Տե՛ս ՆԲԲ, հ. 2, Ե., 1944, էջ 186:

ապրանքը խաբեությամբ մեկին ծախել, խաբել» նշանակությունը¹¹²: **Կարգել** բայի վերը նշած գրաբարյան իմաստների մի մասը անցել է **կարգավորել** բային¹¹³: Վերջինս գրաբարում եղել է **կարգել** բայի հոմանիշը, և պահպանվել են նրա գրաբարյան իմաստները, միայն ավելացել է 1 իմաստ՝ «Ռադիոընդունիչը սարքել այնպես, որ երկարությամբ իրար մոտ ալիքները չխանգարեն ուզած ալիքը բռնելուն» (ԱՀԲԲ, էջ 704):

Ազդ գոյականը կորցրել է գրաբարյան «Ազդումն, ազդեցութիւն. Ջգացումն. իմացումն» նշանակությունները (ՆՀԲ, հ. 1, էջ 8) և ձեռք բերել «1. Լուր, տեղեկություն 2. Ծանուցում, հայտարարություն 3. Հասարակական վայրերում փակցվող հայտարարություն» իմաստները (ԱՀԲԲ, էջ 7): **Ազդել** բայը փոքրինչ այլ զարգացում է ունեցել. գրաբարյան «Ազդ առնել, իրազեկ, յայտ առնել» առաջնային իմաստները բնութագրվում են «հնացած» (ԱՀԲԲ - 6. հնց. Հայտնել), իսկ հիմնական են դարձել «1. Ներգործել: 2. Տպավորություն թողնել: 3. Դրդել, հրահրել: 4. Շարժել, շարժման մեջ դնել: 5. Հուզել» իմաստները: **Ազդել** բայում, ինչպես նկատելի է, իմաստային վերադասավորում է եղել:

Աշակերտ նախատիպ գոյականի ձեռք բերած նշանակությունները գրաբարյան իմաստի մասնավորված իմաստներ են՝ «Որևէ մասնագիտություն՝ արհեստ սովորող: Որևէ գիտնականի՝ արվեստագետի մոտ կրթություն ստացած մասնագետ» (ԱՀԲԲ, էջ 87): **Աշակերտել** բայում տեղի է ունեցել իմաստի անցում: Այն գրաբարում ներգործաձև (սովորել) նշանակությամբ ունեցել է «աշակերտ ունենալ, սովորեցնել», կրավորաձև (սովորիլ)՝ «սովորել» իմաստները, վերջինը անցել է

¹¹² Տե՛ս **Ռ. Սարգսյան**, *Արևմտահայերենի և արևելահայերենի բացատրական և ուղղախոսական բառարան*, Ե., 2000, էջ 130: *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Գ, ՀՀ ԳԱԱ, Ե., 2004, էջ 58:

¹¹³ «1. Կարգ ու կանոն մտցնել, որոշակի կարգի ենթարկել 2. Կանոնավորել, բարեկարգել, կարգի գցել, կարգի բերել 3. հնց. Կարգի տակ դնել, դասավորել» (ԱՀԲԲ, էջ 704):

Ժամանակակից հայերենին, իսկ գրաբարյան ներգործաձևի իմաստները մոռացվել են: Այս դեպքում բայի իմաստափոխությունը առաջ է բերել սեռային անցում, որը բայական համակարգում հանդիպող իրողություն է¹¹⁴: Ստ. Մալխասյանցը իր բառարանում նշում է **աշակերտել** բայի թե՛ գրաբարյան, թե՛ արդի հայերենի իմաստները: Ժամանակակից հայերենում **աշակերտել**-ի բայիմաստը ընդլայնվել է՝ ածանցվելով հիմնական նշանակությունից, հմմտ. «2. *Հետևել, հետևողոյ դատնալ: 3. փխբ. Ընդօրինակել, ուրիշին կրկնել*» (ԱՀԲԲ, էջ 88):

Ճանապարհ նախատիպ գոյականի իմաստը գրաբարի համեմատությամբ ժամանակակից հայերենում ընդլայնվել է՝ էապես ածանցվելով գրաբարյան նշանակություններից (շուրջ 6-ից 14): Հին հայերենում նախատիպով ձևավորված էր **ճանապարհ առնել** հարադիր բայը՝ «*Երբեմն է ճանապարհորդել և երբեմն ճանապարհ հորդել, Ճամբա ընել և ճամբա բանալ*» իմաստներով (ՆՀԲ, հ. 2, էջ 169)¹¹⁵: Միջին հայերենում վկայված են **ճանապարհ անկանել, ճանապարհ ելնել** հարադիր բայերը՝ «*ճանապարհվել, ուղևորվել*» նշանակություններով¹¹⁶: Ժամանակակից հայերենում նախատիպից կազմված է **ճանապարհել** ներգործական սեռի բայը՝ «*նբ. 1. Ուղևորին՝ որևէ տեղ գնացողին հրաժեշտի համար ուղեկցել մինչև ուղևորվելու կետը, սահմանը՝ կայանը: Ճանապարհ գցել: 2. Ուղևորել, ուղարկել, ճանապարհ դնել: 3. (հնց.) Առաքել*» իմաստներով, որ չեն առընչվում գրաբարյան հարադիր բայի նշանակություններին: Գրաբարյան իմաստները անցել են **ճանապարհորդել** չեզոք

¹¹⁴ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 681:

¹¹⁵ **Ճանապարհել** համադրական բայը վկայված է «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» բառարանում՝ «*տես ճանապարհորդել*» հղումով (տե՛ս Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 525): Հ. Աճառյանը **ճանապարհել** համադրական բայը չի նշել (տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 182):

¹¹⁶ Տե՛ս **Ռ. Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 468:

սեռի բային: Կարելի է եզրակացնել, որ **ճանապարհել** բայը ավելի ուշ է ձևավորվել, որին չեզոք սեռի իմաստով անցել են **ճանապարհ առնել** հարադիր բայի նշանակությունները, ապա կատարվել է սեռային անցում, որ հանգեցրել է իմաստափոխության:

Լեզվաբանության մեջ բառիմաստի փոփոխության ընդհանուր օրենքներ սահմանված չեն: Նույնիսկ միևնույն լեզվի սահմաններում հաճախ դժվար է որոշել՝ որոնք են իմաստափոխության ժամանակագրական սահմանները, ինչ պատճառով և ինչ հաջորդականությամբ են տեղի ունեցել այդ փոփոխությունները, ինչպես են հարաբերում իմաստափոխության տեսակները միմյանց և այլն¹⁷, կամ ինչու են վերը քննված օրինակներում նախատիպ գոյականները և նույնահիմք բայերը առանձին իմաստային զարգացումներ ունեցել:

Ստորև քննենք ՆՀԲ-ում վկայված բայերի այնպիսի օրինակներ, որոնց իմաստային զարգացումը այս կամ այն չափով պայմանավորված է նախատիպ գոյականի իմաստային զարգացմամբ:

Գումար գոյականի գրաբարյան իմաստը («ամբողջ, հանուր») ժամանակակից հայերենում բնորոշվում է «հազվադեպ», այն ձեռք է բերել 3 նոր իմաստ՝ «1. (թվաբ.) Երկու կամ ավելի թվային գումարից ստացված քանակ: 2. Որևէ բանի ընդհանուր քանակություն: 3. Դրամի որոշ քանակություն» (ԱՀԲԲ, էջ 267): **Գումարել** բայը իմաստի փոխհաջորդմամբ կորցրել է գրաբարյան «1. պատրաստել ի պատերազմ: 2. հաշուել զամս և զժամանակս և զթիւս: 3. կր. պատրաստիլ ի մարտ, ոգորիլ, բախիլ, ընդդէմ կալ, խռովիլ յանձին» իմաստները: Ժամանակակից հայերենում այն ձեռք է բերել նոր իմաստներ, որոնք, բխում են գրաբարյան՝ «հաւաքել, ժողովել, խմբել, բովանդակել, կուտել» իմաստներից, հմմտ. «նբ.1. Հավաքել, ժողովել, համախմբ-

¹⁷ Տե՛ս Լ. Խաչատրյան, *Լեզվաբանության ներածություն*, Ե., 2008, էջ 149:

բել: 2. *Ի մի բերել, ամբողջացնել, միացնել իրար*: 3. *փխբ. Ավելացնել, հավելել, մեծացնել*: 4. *Հրավիրել, կայացնել*» (ԱՀԲԲ, էջ 267): **Գումար** գոյականի ստացած նոր իմաստից է սերում միայն «*Մաթ. մեկ կամ մի քանի թիվ մյուսին ավելացնել, գումարում կատարել*» իմաստը:

Գուշակ գոյականի իմաստում լեզվի պատմական զարգացման հետևանքով դրսևորվել է բառիմաստի նեղացում, ինչը արտահայտվել է նաև նույնահիմք բայում. **գուշակ** նախատիպը կորցրել է «*յայտարար, մատնիչ, ցուցակ, նշանակ*» իմաստները (**գուշակել** բայը համապատասխանաբար կորցրել է «*յայտ առնել, ազդել, մատնել*» նշանակությունները) և ձեռք է բերել «*փխբ. Նախանշան*» իմաստը, որը դրսևորվում է **գուշակել** բայի «փոխաբերական» բնութագրվող «*5. Կանխազգայ, նախազգայ*» ժամանակակից իմաստներում: Գրաբարյան որոշ նշանակություններ՝ «*ծանուցանել, յայտնել*», իմաստային մասնակի փոփոխություններ են կրել, հմմտ. «*4. փխբ. Ցույց տալ, ահագանգել, ազդանշանել*» (ԱՀԲԲ, էջ 269): **Գուշակել** բայը, գրաբարյան «*լինելիքը առաջուց գիտենալ և ասել, նախասել, մարգարեանալ*» նշանակությունից բացի, ժամանակակից հայերենում ունի «*1. Կախարդությամբ ապագան ասել, որևէ բանի էլքը՝ վախճանը նախատեսել*» մասնավորված իմաստը և ձեռք է բերել նոր «*3. փխբ. Կռահել, գլխի ընկնել*» նշանակությունը (ԱՀԲԲ, էջ 269):

Վճար նախատիպ գոյականը իմաստի փոխհաջորդմամբ կորցրել է «*վերջ, վախճան, ասարտ, դադարումն, որոշումն, վճիռ*» գրաբարյան առաջնային համարվող նշանակությունները: Այս գոյականի՝ ՆՀԲ-ում նշված «*վարձ, հատուցումն*» իմաստը զարգացել է՝ ձեռք բերելով հետևյալ նշանակությունները՝ «*1. Որևէ բանի դրամական հատուցում վարձ*: 2. *Որևէ բանի համար որոշակի գումարով մուծում*» (ԱՀԲԲ, էջ 1395): **Վճարել** բայում ևս դրսևորվել է իմաստի փոխհաջորդում. կորցրել է գրաբարյան «*վճար առնել և լինել. կատարել, ի գլուխ հանել, առնել. փոխել(իլ), վախճանել(իլ). ի բաց առնել, ի բաց*

կալ, գերծանիլ, մեկնիլ. արգելուլ» իմաստները, իսկ գրաբարից եկող «փոխհատուցել, հատուցել» իմաստը է. Աղայանը «հնացած» ընդգծումով է նշել: **Վճարել** բայի ժամանակակից իմաստները բխում են նախատիպ գոյականի նշանակություններից, հմմտ. «1. նր. *Դրամով կամ որևէ այլ բանով հատուցել մի բան, որպես մի բանի հատուցում դրամ կամ այլ արժեք տալ:* 2. *Վարձատրել, աշխատանքի՝ ծառայության համար որոշակի վարձ տալ:* 4. *Դրամ կամ այլ արժեքներ տալով որոշակի պարտավորություններ կատարել և այլն»* (ԱՀԲԲ, էջ 1395):

Ամպ գոյականը ժամանակակից հայերենում իմաստի ընդլայնմամբ, բացի «1. *Մթնոլորտի մեջ խտացած գոլորշիների զանգված:* 2. *Օդի մեջ բարձրացած ամպանման զանգված»* (ԱՀԲԲ, էջ 34) նշանակություններից, ձեռք է բերել ևս երեք իմաստներ («3. *փխբ. Մռայլություն, տխրություն:* 4. *փխբ. Արհավիրք:* 5. *փխբ. Որևէ չարիքի վտանգ՝ սպառնալիք»*), որոնք դրսևորվել են **ամպել** բայի իմաստային զարգացման մեջ: **Ամպել** բայը արդի հայերենում, «1. *Ամպեր կուտակվել երկնքում, ամպերով ծածկվել, ամպակալել»* նշանակությունից բացի, ունի նաև «2. *փխբ. Վատ տրամադրության մեջ լինել, տխրել, մռայլվել:* 3. *Չարիքի վտանգ՝ սպառնալիք առաջանալ»* իմաստները (ԱՀԲԲ, էջ 35):

Լուծ նախատիպ գոյականի գրաբարյան իմաստներից 3-ը պահպանվել են բարբառներում (ԱՀԲԲ–«3. *գվռ. Կշեռքի թաթ, նժար:* 4. *գվռ. Օրորոցի երկայնքով ձգված ձողը, որ իրար է միացնում աղեղները:* 5 *գվռ. Չիթահանքի քթոցների երկար փայտը»*), կորցրել է «*Կշիռ կենդանակերպն»* նշանակությունը, ինչպես նաև ձեռք է բերել նոր իմաստներ, որոնք գերազանցապես փոխաբերական նշանակություն ունեն¹¹⁸: **Լծել** բայը կորցրել է «*Կասպակցել, զուգել, յարել ընդ միմեանս զինչ և է*

¹¹⁸ «6. *փխբ. Մեկի վրա դժվարին և ոչ հաճելի պարտականություն՝ գործ:* 7. *փխբ. Օտարի տիրապետություն:* 8. *փխբ. Ճնշում, բռնություն, կեղեքում....*» (ԱՀԲԲ, էջ 542):

իրա» իմաստները և ձևոք է բերել «4.փխբ. Մի գործով ծանրաբեռնել, որևէ գործ՝ պարտականություն են մեկի վրա դնել» նշանակությունը (ԱՀԲԲ, էջ 532), որ առնչվում է **լուծ** գոյականի «6.փխբ. Մեկի վրա դժվարին և ոչ հաճելի պարտականություն՝ գործ» իմաստին: Իսկ «քեր. Կցել տառ ընդ տառ կամ դնել ի տեղի իրերաց՝ մանաւանդ ի լծորդութեան բայից առ յոյնս» (ՆՀԲ, հ. 1, էջ 890) գրաբարյան իմաստները արդի հայերենում անցել են **լծորդել** բային:

Գրաբարից ավանդված նախատիպ գոյականների և նույնահիմք բայերի իմաստային քննությունը ցույց տվեց, որ գոյականակազմ բայերը և նախատիպ գոյականները կարող են ունենալ իմաստային առանձին զարգացումներ, ինչպես՝ **ազդել, լարել, գնել, կարգել** և այլն, գոյականակազմ բայի իմաստային զարգացումը կարող է պայմանավորված լինել նաև նախատիպի իմաստային զարգացմամբ, ինչպես՝ **գուշակել, ամպել, լծել** և այլն:

Sargsyan Luiza- Semantic Changes in the System of Denominative Verbs-.The research showed that the semantic development of the verb may be conditioned by the semantic development of its prototype, like **գուշակել, ամպել, լծել** etc. In some cases the verbs develop in a different way, like **ազդել, լարել, գնել, կարգել** and so on.

Саргсян Луиза- Семантические изменение глаголов, образованных от существительных.- Исследование показывает, что развитие значений глаголов, образованных от существительных, может быть результатом семантического развития простых слов, как **գուշակել, ամպել**. В некоторых случаях значения глаголов, образованных от существительных, имеют разные развития, как **ազդել, գանձել** и т.е.

**ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ
ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ¹¹⁹**

Խոսակցական լեզուն ամենից առաջ կենդանի լեզու է և շատ կողմերով անհատական: Անհատական խոսքն ունի ոչ միայն սոցիալական, այլև տարիքային բնույթ: Հասարակության ավելի փոքր տարիքի անձինք, ինչպես նաև կրթություն չունեցողները փորձում են նմանակել հասարակության ընդունած արտասանությունը՝ նպատակ ունենալով չտարբերվել մյուսներից, երևալ ավելի կիրթ և ընդունված լեզվին տիրապետող:

Խոսողը, համապատասխան իր ընտրած բառերի, արտասանած հնչյունների, իրեն տեսնում է սոցիալական որոշակի աստիճանի վրա: Հասարակական տարբեր խավերի խոսքում, կապված գրագիտության աստիճանից, մասնագիտությունից և այլ հանգամանքներից, տեղի են ունենում արտասանական, այսինքն՝ հնչյունական խաթարումներ, որոնք էլ կարող են ընդհանուր լինել:

Երևանի խոսակցական լեզուն կարելի է բնութագրել մի շարք հնչյունական-արտասանական առանձնահատկություններով:

Խոսակիցների անմիջական շփման ժամանակ կարող է տեղի ունենալ որոշ հնչյունների թուլացում կամ սղում, հնչյունների հավելում, դրափոխություն, տարնմանում: Արտասանությունը փոփոխվում է հնչյունների քայնացումից, Երևա-

¹¹⁹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 13YR-6B0006 «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի շրջանակներում:

նի խոսակցական լեզվում գործող բարբառային և օտար արտասանություններից:

Սակայն խոսակիցների անմիջական շփման ժամանակ երևան եկող այս կարգի երևույթները չեն խանգարում խոսքը ընկալելուն: Խոսակիցների անմիջական հաղորդակցումը, իրադրության իմացությունը հնարավորություն են ընձեռում խոսակիցներին առանց դժվարության հասկանալ միմյանց:

Խոսակիցների անկաշկանդ շփման ժամանակ, երբ խոսքը չի վերահսկվում առավել շատ են ի հայտ գալիս արտասանական կանոնական վիճակից շեղումներ:

Խոսակցական լեզվում լայն տարածում ունի հնչյունների հավելումը, ինչպես՝ *ավելորդ-ավելնորդ, կանաչ-կանանչ, կանացի-կանանցի, մանրուք-մանրունք, ճանաչել-ճանանչել, ամաչել-ամանչել, անձեռոցիկ-անձեռոցիկ*, արտասուք-արտասունք, *ընձեռել-ընձեռնել, մեծ-մենձ, ծանր-ծանդր, մանր-մանդր, սանր-սանդր, խելոք-խելոնք, բացակայել-բացակայվել* և այլն:

Հնչյունների սդումը պայմանավորված է խոսակիցների իրար լավ ճանաչելով, խոսքի արագ տեմպով: Խոսակցական լեզվում բաղաձայնների սդում ավելի քիչ է հանդիպում, քան ձայնավորների սդում: Հատկապես առավել հաճախական բառերում տեղի է ունենում ձայնավորների լիակատար սդում, ինչպես՝ *ցտեսություն-(ցրտեսցուն), շնորհակալություն-(շնորակալցուն)*:

Հանդիսավոր իրավիճակներում առկա է ինքնահսկումը, խոսողը հսկում է իր խոսքը: Այս պայմաններում արդեն բառերը արտաբերվում են ավելի խնամքով:

Չայնավորների անկումը հիմնականում հետևանք է կից վանկերի նույնանման ձայնավորների: Չայնավորներից կամ վանկերից մեկը սղվում է, ինչպես՝ *ուսուցանոց-(ուսչանոց), գնահատական-(գնհատական)*, խոսակցություն-(խօսակցյուն), որովհետև-(որտելվ):

Խոսակցական լեզվին բնորոշ են գաղտնավանկ **ը**-ի հավելումները: Գաղտնավանկ **ը**-ի արտասանությունը խոսակցական լեզվում ազատ է: Բաղաձայնների կուտակման դեպքում դրանց միջև հնչում է **ը**-ն, սակայն կան բառեր, որոնք արտասանելիս **ը**-ն սխալ դիրքում արտաբերելը հանգեցնում է սխալի: Ինչպես՝ *կրթ(ը)վել, համալ(ը)սարան, ծածկ(ը)վել, քրտ(ը)նել, տանջ(ը)վել, աստ(ը)ված, խրտ(ը)նել, քնք(ը)շորեն, սարք(ը)վել, վերց(ը)նել, հաշտ(ը)վել, նան՝ Մին(ը)սկ, Օմ(ը)սկ*:

Ը-ի հավելումներ հանդիպում են նաև բառավերջում, որն ուղղախոսական շեղում է, ինչպես՝ *վեց(ը) հատ, յոթ(ը) տետր, մութ(ը) տեղ, կազմ(ը) պատրաստ, թարմ(ը) հաց, քո մոտ(ը)*:

Խոսակցական լեզվում անկաշկանդ խոսելիս արագ տեմպի ընթացքում բաղաձայնները ավելի թույլ և անհստակ են արտասանվում: Այսպիսի դեպքերում որոշ բաղաձայններ սրղվում են, չեն հնչում: Ամենից բնորոշը **հ**-ի անկումն է: **Հ**-ն իր բնույթով շունչ է, հագագ և որպես այդպիսին կարող է հեշտությամբ ավելանալ և ընկնել որոշ դիրքերում¹²⁰: **Հ** հնչյունի անկումը՝ հատկապես *ը*-ից հետո դարձել է արտասանական նորմ, ինչպես՝ *խոնարհ, ճանապարհ*: Խոսակցական լեզվում **հ**-ի անկումը տարածվում է ավելի մեծ թվով բառերի վրա, ինչպես՝ *խորհուրդ*-(*խորուրդ*), *շնորհքով*-(*շնորքով*), *Հովհաննես*-(*Հովանես*), *ընդհակառակը*-(*ընդակառակ*), *անընդհատ*-(*անընդատ*) և այլն: Խոսակցական լեզվում **հ**-ի անկում նկատվում է որոշ կապակցություններում, ինչպես՝ *վեց հոգով*-(*վեցօքով*), *երկու հարյուր*-(*երկուարյուր*), *մի հատ*-(*միատ*), *նրա համար*-(*նրա ամար*): Բանավոր խոսքում **հ**-ի անկում նկատվում է նաև *ուհի* վերջածանցում, ինչպես՝ *ընկերուհի*-(*ընկերուի*), *գործավարուհի*-(*գործավարուի*), *բժշկուհի*-(*բժշկուի*): Բանավոր խոսքին բնորոշ է նաև բառավերջի **հ**-ի անկումը, ինչպես՝

¹²⁰ Թ. Ղարագույան, *Շամանակակից հայերենի ուղղախոսությունը*, Ե., 1974, էջ 203:

նախագա(հ)-նախագան, հաշվապա(հ)-հաշվապան, հերթապա-
(հ)- հերթապան: Արտասանական այս սխալի մասին բավա-
կանին խոսվել է ն' մամուլում, ն' հեռուստատեսությամբ: Սա-
կայն այն լայնորեն տարածվել է տարիքային փոքր, կրթական
ավելի ցածր մակարդակ ունեցող անձանց շրջանում:

Խոսակցական լեզվում նկատելի է նաև **հ**-ի հավելում, ո-
րը գալիս է բարբառներից՝ *ելնել-(հ)ելնել, ունք-(հ)ունք, (հ)ըն-
գեք*:

Շատ դեպքերում սղվում է նաև **դ**-ն, որը հատուկ է կրթ-
թական ցածր մակարդակ ունեցող երևանցիներին, տարիքային
փոքր խմբերին, ովքեր փորձում են արտասանությունը ընդօ-
րինակել՝ իրենց <<ուժեղ>> ընկերներից հետ չմնալու համար:
Ինչպես՝ էս կողմ-(էս կոմ, էն կոմ), **այս, այդ, այն** դերանուն-
ներով կազմված բառերում՝ էստեղ, էդտեղ, էնտեղ(ըստե, ըտե,
ընդէ), (ըստեից, ըտեից, ընդէից կամ՝ ըստից, ըտից, ընդից):

Բաղաձայններից անկայուն է նաև **ր**-ն, որը բառամիջում
որոշ դեպքերում կարող է չհնչել, ինչպես՝ *դուրս եկավ-(դուս
էկավ), տղերք-(տղէք), երբ որ-(յէփօր), բարձրանալ, բարձրու-
թյուն(բարցանալ, բարցություն)*:

Խոսակցական լեզվում **ր**-ի անկում է նկատվում հրամա-
յական եղանակի բառավերջի դիրքում՝ խոսի' (փխ. խոսի'ր),
հիշի' (փխ. հիշի'ր), չափի' (չափի'ր), գրի' (փխ. գրի'ր), թափի'
(փխ. թափի'ր), մոտեցի' (փխ. մոտեցի'ր), բարձրացի' (փխ.
բարձրացի'ր): Այս երևույթը լայնորեն տարածված է բանավոր
խոսքում:

Բաղաձայնների անկում նկատվում է կրկնակ բաղա-
ձայն ունեցող բառերում: Հնչում է միայն մեկ բաղաձայն, ինչ-
պես՝ մրրիկ-մ(ր)իկ, ընդդեմ-ըն(դ)եմ, տարրական-տա(ր)ական,
նոյյան-նո(յ)ան, բովված-բո(վ)ած: Կրկնակ բաղաձայն ունեցող
փոխառյալ բառերում նույնպես հնչում է մեկ բաղաձայն,
ինչպես՝ մասա (փխ.՝ մասսա), վիլա (փխ.՝ վիլլա), Բուդա (փխ.
Բուդդա): Բաղաձայնի անկում առկա է բայերում՝ բառավեր-
ջում, ինչպես՝ *չի' գալի(ս), չի' տալի(ս), չի' արե(լ), չի' կերե(լ), չի'*

տվե(լ), չի' բերե(լ), չի' հարցրե(լ): Մ-ի և Լ-ի անկումով արտասանությունը լայն տարածում ունի բանավոր լեզվում:

Ույժ, ույշ, ույծ հնչյունակապակցություններով ավարտվող բառերում նկատվում է յ-ի անկում, ինչպես՝ *ակնաբույժ*-(*ակնաբուժ*), *զգույշ*-(*զգուշ*), *տույժ*-(*տուժ*), *մեղվաբույծ*-(*մեղվաբուծ*): Այս երևույթը նույնպես բանավոր լեզվում լայն տարածում ունի: Առանց յ-ի արտասանությունը այնքան է արմատացել, որ արդեն հիմնարկներում են այդպես գրում՝ *ատամնաբույժ*-(*ատամնաբուծ*), *մանկաբույժ*-(*մանկաբուծ*):

Բաղաձայնը չի արտասանվում նաև, երբ բառի մեջ կից հնչյուններն արտասանելը դժվարանում է: **Ժ-շ** բաղաձայնները հնչեղությամբ մոտ են, տարբերվում են ձայնի պարունակությամբ, **ժ**-ն ձայնեղ է, **շ**-ն՝ խուլ: Այս երկու բաղաձայնները հանդիպելիս հնչյուններից մեկը հաճախ սղվում է՝ *երաժշտություններա(շ)տություն*, բժշկություն-բ(շ)կություն:

Անկում է նկատվում, երբ հանդիպում են արտասանության նույն դիրքն ունեցող հնչյուններ. *որպեսզի* բառը գ-ի անկումով արտասանվում է (*որպեսի*), **ս**-ի անկումով՝ *որպեզի*, կա նաև **զ**-ի տևական արտասանությամբ որպեզզի հնչյամբ տարբերակ, լայն տարածում է գտել նաև *որպիսի* ձևը:

Դժվարությամբ են արտասանվում **տչ, տճ, դտ** կից հնչյուններով բառերը, խոսքի արագ տեմպի ժամանակ, նաև չիմացության պատճառով, **տ**-ն թուլանալով չի հնչում, ինչպես՝ *մաչելի* (*փիս.՝ մատչելի*), *Մկրչյան* (*փիս.՝ Մկրտչյան*), *պաճառ* (*փիս.՝ պատճառ*), *պաճէ* (*փիս.՝ պատճեն*):

Խոսակցական լեզվում շատ տարածված է հնչյունների դրափոխությունը, ինչպես՝ *համփյուր* (*փիս.՝ համբույր*), *ձույն* (*փիս.՝ ձյուն*), *հույր* (*փիս.՝ հյուր*), *հույթ* (*փիս.՝ հյուրթ*), *զոնքաչ* (*փիս.՝ զոքանչ*), *կարմունջ* (*փիս.՝ կամուրջ*), *դարդակ* (*փիս.՝ դատարկ*), *բախշել* (*փիս.՝ բաշխել*): Սրանք նաև բարբառային ձևեր են:

Բանավոր լեզվում տարնմանության հետևանքով տարածված է շրթնայիններից (**բ, պ, փ**) առաջ **ն** ատամնայինի հնչումը: Այս երևույթի առաջացման հիմնական պատճառն այն

է, որ շրթնայիններից առաջ **(բ,պ,փ)** և **մ, ն** ռնգայինների շրթնայնության և ատամնայնության հատկանիշները էական չեն, հնչյութաբանական անկյունից տվյալ դիրքում այդ հատկանիշները որևէ դեր չեն կատարում, իմաստագատիչ նշանակություն չունեն: Տեղի է ունենում տարնմանում ըստ հնչյունների արտաբերման տեղի, ինչպես՝ *ամփոփում-(անփոփում), ամբիռն-(անբիռն), ամբարիշտ-(անբարիշտ), Սմբատ-(Սնբատ), շամփուր-(շանփուր), ապստամբ-(ապստանբ), ամբաստանյալ-(անբաստանյալ), ամբիռն-(անբիռն):*

Բառի մեջ, երբ հանդիպում են **ն-ն** և **բ, պ, փ** պայթականները, **ն-ն** հնչում է **մ**, ինչպես՝ *անպայման-(ամպայման), անփույթ-(ամփույթ), անպատշաճ-(ամպատշաճ):*

Խոսակցական լեզվում, հատկապես փոխառյալ բառերում, **ն** և **մ** հնչյունների չեզոքացում է դիտվում **վ** և **ֆ** բաղաձայնից առաջ: **Մվ-ն** և **մֆ-ն** տարնմանությամբ հաճախ հնչվում են **(նվ)** և **(նֆ)**, ինչպես՝ *ամֆիթատրոն-(անֆիթատրոն), սինֆոնիա-(սինֆոնիա):*

Չայերենին բնորոշ է բաղաձայնների կոշտ արտասանությունը: Խոսակցական լեզվում, երբ բաղաձայնները **յ** կիսաձայնից առաջ են, ապա նախորդող բաղաձայնները մասամբ քմայնանում են: Խոսակցական լեզվում շատ տարածված է ուժեղ քմայնացումով արտասանությունը:

Ղ, տ, թ հնչյունները **յ** կիսաձայնից առաջ զգալիորեն քմայնացած են հնչում, ինչպես՝ *մա(ծյ)ան, պա(ծյ)ան, հալի(ծյ)ան, առավո(ծյ)ան, ար(ցյ)ոք, ար(ցյ)ունավետ, բր(ցյ)ա, արև(ծյ)ան, Կարապե(ծյ)ան, Բագրա(ծյ)ան, Գալս(ծյ)ան* և այլն: Շատ տարածված է **-ություն** ածանցի մեջ **թ-ի** ուժեղ քմայնացումը, ինչպես՝ *մաքրու(ցյ)ուն, գժու(ցյ)ուն, գրու(ցյ)ուն, հաջողու(ցյ)ուն, առողջու(ցյ)ուն լավու(ցյ)ուն* և այլն: Այս օրինակներում **թ-ն** հնչում է որպես **ց**:

Ղ, տ, թ-ի քմայնացած հնչում հանդիպում է ինչպես ազատ, անկաշկանդ շփման ժամանակ, այնպես էլ հրապարակային խոսքում: Խոսակցական լեզվում այնպես է արմատացել

այս հնչյունների քմայնացած արտասանությունը, որ, օրինակ, -**ություն**ն ածանցում **թյ** արտասանությունը խորթ է հնչում:

Քմայնանում է նաև **-երորդ** բաղադրիչից առաջ դասական թվականների **թ** հնչյունը. նախորդող **թ** հնչյունը քմայնանալով հնչում է **ց**, ինչպես՝ յո(ցյ)երորդ, ու(ցյ)երորդ:

Ի, է ձայնավորներից առաջ **դ-ն, տ-ն** քմայնանում են՝ **դ-ն՝ ձ-ի, տ-ն՝ ծ-ի** նման, ինչպես՝ *ար(ձ)իական, դաս(ծ)արակ, ինս(ծ)իտուտ, (Մի)գրան, (ծ)իտան, Ավե(ծ)սյան* և այլն: Այսպիսի քմայնացած արտասանություն է առկա ռուսերենից փոխառյալ բառերում: Խոսակցական լեզվում ռուսերենի ազդեցությամբ փոխառյալ բառերի **դ-ն, տ-ն, թ-ն** հնչում են ուժեղ քմայնացումով՝ որպես **ձ, ծ, ց**, ինչպես՝ *(ձ)պլում, (ձ)ետա, ակա(ձ)եմիա, (ծե)խնիկա, կրեա(ծ)իվ, նոկ(ծ)յու(ռ)ն, մա(ծ)երիա, պ(ռ)ակ(ծ)իկա, ֆակուլ(ծ)ետ, սան(ծ)իմետր, տո(ռծ)իկ և այլն*: Փոխառյալ բառերում **դ, տ** հնչյուններին հաջորդող **իա, իռ, իու, եա** ձայնավորական զուգորդումները վերածվում են **յա, յո, յու, յա** երկհնչյունների՝ **դ-ի, տ-ի** քմայնացումով, ինչպես՝ *մեդիամե(ձյա), կոմեդիա-կոմե(ձյա), դեմոկրատիա-դեմոկրա(ծյա) ռադիո-ռա(ձյո), ստադիոն-ստա(ձյո)ն, ռադիում-ռա(ձյու)մ, իդեալ-ի(ձյա)լ և այլն*:

Շատ տարածված է նաև օտար անձնանունների **դ, տ** հնչյունների քմայնացած արտասանությունը, ինչպես՝ *Վալո(ձ)յա, (Ձ)իանա, Նա(ձ)յա, Ար(ծ)յոմ, Կա(ծ)յա, Տա(ծ)յանա, (Ձ)իմա, Վի(ծ)յա և այլն*:

Ռուսերենի ազդեցությամբ **տ-ից, դ-ից** բացի նկատվում է այլ հնչյունների քմայնացում, ինչպես՝ *մա(ն')երա, (ն')երվեր, ջա(ն')իկ*: Փոխառյալ բառերում փափուկ **լ-ն** ռուսերենի նմանությամբ ևս հնչում է փափուկ **լ-ով**, ինչպես՝ ֆի(լ')մ, մու(լ')տ, վա(լ')ս, ֆա(լ')ջ, սո(լ')ֆեջո և այլն:

Ռուսերենի փափուկ նշանով (мягкий знак) բառերը, թեև հայերենում գրվում են **իե, իռ** ձայնավորներով, սակայն հնչում են **յե, յո**, ինչպես՝ կարիերա-կար(յե)րա, պրեմիերա-պրեմ(յե)-

բա, ռել(յե)ֆ, ինտեր(յե)ր և այլն: Այս բառերում յ կիսաձայնին նախորդող բաղաձայնները հնչում են փափուկ:

Եթե օտար բառը ներթափանցել է հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդ, մերվել է լեզվին և յուրացվել ժողովրդի կողմից, ապա այդպիսի բառերը պետք է արտասանվեն հայերենի արտասանական օրինաչափություններով:

Ներկայիս խոսակցական լեզուն, ինչպես նկատելի է, գերծ չէ երկլեզվության հարուցած դժվարություններից, անհարմարություններից: Այսպես, խոսակցական լեզվում երևանցիները արտահայտվում են՝ շարունակ խառնելով հայերենը և ռուսերենը: Վերջին տարիներին այս ամենին գումարվել է նաև անգլերեն բառեր գործածելը, և այն հաղթահարելը դժվարություններ է հարուցում: Խոսակցական լեզվում առկա են ռուսերենից և անգլերենից հայերենին անցած բառեր, որոնց արտասանությունը նույնն է, ինչ այդ լեզուներինը: Եթե այլ լեզուների արտասանությունը իրենց համար բնական է, ապա հայերենի համար դառնում է արհեստական:

Կարևոր նշանակություն ունեն նաև հեռուստատեսությունը, ռադիոն, որոնք էլ, թերևս, ամենից առաջ կոչված են ստեղծելու խոսքի մշակույթ, մշակելու խոսքային դաստիարակություն, պահպանելու հայերենին բնորոշ արտասանական ավանդույթներ: Մակայն, ցավոք, այդպես չէ, և եթերից հնչող խոսքն ավելի է ամրապնդում հնչյունական սխալները:

Kartashyan Anahit - Several Phonetic Changes in the Colloquial Language of Yerevan. - The colloquial language of Yerevan can be characterized by a set of phonetic-pronunciation peculiarities. During a direct communication between interlocutors a drop, addition of sounds in the utterance may occur. The pronunciation changes because of the palatalization of sounds, due to dialectic and foreign pronunciation patterns appearing in colloquial language of Yerevan.

Карташян Анаит - Некоторые фонетические изменения в разговорном языке Еревана. - Разговорный язык Еревана можно охарак-

теризовать рядом фонетически-произносимых особенностей. Во время непосредственного общения собеседников может произойти выпадение некоторых звуков, прибавление звуков. Произношение меняется вследствие палатализации звуков из-за действующего в разговорной речи Еревана диалектного и иноязычного произношения.

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Երիտասարդ լեզվաբանների
հանրապետական IV գիտաժողովի զեկուցումներ
(Երևան, 2014 թ., հոկտեմբերի 1-2)**

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA

**Young Linguists' IV Republican Conference Reports
(Yerevan, 2014, October 1-2)**

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

**Доклады IV республиканской научной конференции
МОЛОДЫХ ЛИНГВИСТОВ
(Ереван, 2014 г., 1-2 октября)**



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Մայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am